

**ԱԶԳԱՅԻՆ
ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

- **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
- **ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԵՐԵՎԱՆ - 2004


9(47.925)
2h-23

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

**ԱԶԳԱՅԻՆ
ՓՈԶՐԱՍԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

- ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

115/1



© ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն»

ԵՐԵՎԱՆ - 2004

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայի Խորհրդի շրջանակներում Ազգային Փոքրամասնությունների Իրավունքների Պաշտպանության Հատուկ Կոմիտեի կողմից՝ Նախարարների Կոմիտեի լիազորությամբ, մշակվել է «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» շրջանակային Կոնվենցիա, որն ընդունվել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից 1994թ. նոյեմբերի 10-ին: Այն բաց էր Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների ստորագրման համար 1995թ. փետրվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետությունը Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան ստորագրել է 1997 թվականի հուլիսի 25-ին՝ վերջինիս 27-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Նախարարների կոմիտեի հրավերով, երբ դեռևս, Եվրոպայի Խորհրդի անդամ չէր հանդիսանում:

Կոնվենցիան վավերացվել է 1998 թվականի փետրվարի 17-ին, իսկ վավերագիրը ի պահ է հանձնվել Եվրոպայի Խորհրդի քարտուղարություն 1998թ. հուլիսի 20-ին: Հայաստանի Հանրապետության համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 1998 թվականի նոյեմբերի 1-ին:

2001թ. մայիսին Հայաստանը ներկայացրել է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՉԵԿՈՒՅՑԸ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 25-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՀԱՄԱՉԱՅՆ»:

Խորհրդատվական կոմիտեն 2001թ. սեպտեմբերի 10-14-ը տեղի ունեցած 11-րդ հանդիպմանը սկսել է Հայաստանի սկզբնական ազգային գեկույցի ուսումնասիրությունը: Ուսումնասիրության շրջանակում Խորհրդատվական կոմիտեի պատվիրակությունն այցելել է Հայաստան 2001թ. դեկտեմբերի 10-14-ը՝ կառավարության ներկայացուցիչներից, ինչպես նաև հասարակական կազմակերպություններից և այլ անկախ աղբյուրներից Շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ հետագա տեղեկություն ստանալու համար: Խորհրդատվական կոմիտեն Հայաստանի վերաբերյալ իր կարծիքը ընդունել է 14-րդ հանդիպման ընթացքում՝ 2002թ. մայիսի 16-ին, «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾԻՔ» փաստաթղթով:

Այնուհետև Հայաստանի հանրապետությունը ներկայացրել է իր մեկնաբանությունները **Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի` Հայաստանի վերաբերյալ կարծիքի կապակցությամբ:**

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս գրքույկի հրատարակության նպատակը հանրությանը ազգային փոքրամասնությունների իրավունքների շուրջ Հայաստանի պարտավորությունների և դրանց իրականացման վերաբերյալ փաստաղթերը ներկայացնելն է: Այստեղ ամփոփված են

- Եվրոպայի Խորհրդի շրջանակներում Ազգային Փոքրամասնությունների Իրավունքների Պաշտպանության Հատուկ Կոմիտեի կողմից` Նախարարների Կոմիտեի լիազորությամբ մշակված «ԱԶԳ-ԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» շրջանակային Կոնվենցիան և բացատրական զեկույցը, (էջ 5-17)
- Հայաստանի հանրապետության առաջին զեկույցը ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն (էջ 18-62)
- Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի կարծիքը Հայաստանի զեկույցի վերաբերյալ (էջ 63-99)
- Հայաստանի Հանրապետության մեկնաբանությունները Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի` Հայաստանի վերաբերյալ կարծիքի կապակցությամբ (էջ 100-108):

Քոչոր չորս փաստաթղթերը հրատարակվում են ՀՀ կառավարության Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության կողմից:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ, Ստրասբուրգ, փետրվար 1995թ.

**ԱԶԳ-ԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱ
ԵՎ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՉԵԿՈՒՅՑ**

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Եվրոպայի Խորհրդի շրջանակներում, Ազգային Փոքրամասնությունների Իրավունքների Պաշտպանության Հատուկ Կոմիտեի կողմից` Նախարարների Կոմիտեի լիազորությամբ, մշակված «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային Կոնվենցիան ընդունվել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից 1994թ. նոյեմբերի 10-ին: Այն բաց էր Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների ստորագրման համար 1995թ. փետրվարի 1-ից: Անդամ չհանդիսացող պետությունները Նախարարների Կոմիտեի կողմից կարող են հրավիրվել սույն փաստաթղթին մասնակից դառնալու համար:

Հրատարակված սույն փաստաթուղթը ներառում է «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային Կոնվենցիայի տեքստը, ինչպես նաև բացատրական զեկույցը:

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԶՐԱՍՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Մույն Շրջանակային Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրները և այլ պետությունները,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի Խորհրդի նպատակն է իր անդամ-երկրների ավելի սերտ միության հասնելը՝ նրանց ընդհանուր հարստություն համարվող խղճալների և սկզբունքների պաշտպանության և զարգացման նպատակով,

Հաշվի առնելով, որ այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը՝ մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պահպանումը և հետագա իրականացումն է,

Ցանկանալով զարգացնել և կյանքի կոչել Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների Պետությունների և Կառավարությունների Ղեկավարների՝ 1993թ. հոկտեմբերի 9-ին ընդունված Վիեննայի Հռչակագրի դրույթները,

Իրենց համապատասխան տարածքներում ազգային փոքրամասնությունների գոյությունը պաշտպանելու վճռակառուցմամբ լեցուն,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի պատմության մեջ եղած ցնցումները ցույց են տվել, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը անհրաժեշտ է Եվրոպական մայրցամաքում կայունության, ժողովրդավարական անվտանգության և խաղաղության համար,

Հաշվի առնելով, որ բազմակարծիք և իսկապես ժողովրդավարական հասարակությունը պարտավոր է ոչ միայն հարգել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական ինքնությունը, այլև ստեղծել համապատասխան պայմաններ, որոնք թույլ կտան արտահայտել, պահպանել և զարգացնել այդ ինքնությունը,

Հաշվի առնելով, որ հանրութո՞ղականության և երկխոսության մթնոլորտի ստեղծումն անհրաժեշտ է, որպեսզի մշակութային բազմազանությունը լինի յուրաքանչյուր հասարակության հարստացման և ոչ թե պառակտման աղբյուր և գործոն,

Հաշվի առնելով, որ հանդուրժող և բարգավաճող Եվրոպայի զարգացումը կախված է ոչ միայն երկրների միջև համագործակցությունից, այլև պահանջում է տեղական և տարածաշրջանային իշխանությունների միջսահմանային համագործակցություն՝ յուրաքանչյուր պետության սահմանադրությունն ու տարածքային ամբողջականությունը հարգելու պայմանով,

Ելնելով «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների

պաշտպանության մասին» կոնվենցիայից և դրա Արձանագրություններից,

Ելնելով Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիաներում և հռչակագրերում, ինչպես նաև Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Խորհրդաժողովի փաստաթղթերում, մասնավորապես, 1990թ. հունիսի 29-ի Կոպենհագենի փաստաթղթում, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության բնագավառում ստանձնած պարտավորություններից,

Վճռակառուցմամբ լեցուն որոշելու այն սկզբունքները, որոնց պետք է հետևել, և դրանցից բխող պարտականությունները՝ անդամ-երկրներում և այլ պետություններում, որոնք կարող են դառնալ սույն փաստաթղթի մասնակիցներ, ազգային փոքրամասնությունների և այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար՝ հարգելով օրենքի գերակայությունը, պետությունների տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը,

Մույն շրջանակային Կոնվենցիայում ամրագրված սկզբունքները, ազգային օրենսդրության և համապատասխան պետական քաղաքականության հիման վրա, կյանքի կոչելու վճռակառուցմամբ լի:

Համաձայնվեցին հետևյալի շուրջ.

Բաժին I

Հոդված 1

Ազգային փոքրամասնությունների և այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժան մասն է և, որպես այդպիսին, հանդիսանում է միջազգային համագործակցության բնագավառ:

Հոդված 2

Մույն շրջանակային Կոնվենցիայի դրույթները պետք է կիրառվեն բարեխիղճ կերպով, ըմբռնման և հանդուրժողականության ոգով և բարիդրացիության, պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության սկզբունքներին համապատասխան:

Հոդված 3

1. Ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ պետք է ունենա այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունք և այդ ընտրությունը կամ այն իրավունքների իրականացումը, որ

կապված են այդ ընտրության հետ, չպետք է տվյալ անձին դնեն անբարենպաստ պայմաններում:

2. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձիք, անհատապես, ինչպես նաև մյուսների հետ խմբերով, կարող են իրականացնել իրավունքներ և օգտվել ազատություններից, որոնք բխում են սույն շրջանակային Կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից:

Բաժին II

Հոդված 4

1. Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարությունը և օրենքով հավասար պաշտպանությունը: Այդ առումով, արգելվում է ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն:

2. Կողմերը պարտավորվում են, անհրաժեշտ դեպքերում, ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում աջակցեն ազգային փոքրամասնությանը և բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց միջև լիակատար և իրական հավասարությունը: Այս նպատակով, Կողմերը ըստ պատշաճի պետք է հաշվի առնեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց առանձնահատուկ պայմանները:

3. Երկրորդ կետի դրույթներին համապատասխան ընդունված միջոցները չպետք է համարվեն խտրականություն:

Հոդված 5

1. Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար:

2. Իրենց ընդհանուր ինտեգրացիոն քաղաքականության իրականացման համար ձեռնարկվող միջոցներին ոչ ի վնաս, Կողմերը պետք է ձեռնպահ մնան ցանկացած քաղաքական կամ գործնական գործողություններից, որոնք հետապնդում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց, հակառակ նրանց կամքի, միաձուլելու նպատակ և պետք է այդ անձանց պաշտպանեն ցանկացած գործողություններից, որոնք ուղղված են այդպիսի միաձուլման:

Հոդված 6

1. Կողմերը պետք է խրախուսեն հանդուրժողականության և մշակույթների միջև երկխոսության մթնոլորտը, և պետք է ալիյունավետ քայլեր ձեռնարկեն իրենց տարածքներում բնակվող բոլոր անձանց միջև, անկախ նրանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելիությունից, փոխադարձ հարգանքը, փոխըմբռնումը և համագործակցությունը խթանելու համար, մասնավորապես, կրթության, մշակույթի և լրատվական միջոցների բնագավառներում:

2. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել համապատասխան միջոցներ այն անձանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պատճառով դառնալ սպառնալիքների, խտրականության, թշնամական կամ բռնագործողությունների զոհ:

Հոդված 7

Կողմերը պետք է ապահովեն ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ խաղաղ հանրահավաքների, միությունների մեջ ընդգրկվելու, խոսքի, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքների հարգումը:

Հոդված 8

Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ սեփական կրոնը կամ հավատը բացահայտ դավանելու, ինչպես նաև կրոնական հաստատություններ, կազմակերպություններ և ընկերություններ ստեղծելու իրավունքը:

Հոդված 9

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի իր կարծիքն արտահայտելու իրավունքը ներառում է կարծիքներ ունենալու և փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ պետական իշխանությունների միջամտությունից և սահմաններից: Իրենց իրավական համակարգի շրջանակներում, Կողմերը պետք է ապահովեն, որպեսզի լրատվական միջոցների մատչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պատկանող անձիք չենթարկվեն խտրականության:

2. Առաջին կետը չի արգելում, որպեսզի Կողմերը, հնչուն ռադիոյի և հեռուստահեռարձակման կամ կինամատուցրաֆիայի ձեռնարկությունների համար արտոնագրում պահանջեն՝ առանց որևէ խտրականության և օբյեկտիվ չափանիշների հիման վրա:

3. Կողմերը չպետք է արգելեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից տպագիր մամուլի միջոցների ստեղծումն ու օգտագործումը: Հնչուն ռադիոյի և հեռուստահեռարձակման իրավական դաշտի շրջանակներում, որքանով, որ դա հնարավոր է, և հաշվի առնելով 1-ին կետի դրույթները, Կողմերը, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար, պետք է երաշխավորեն լրատվական սեփական միջոցների ստեղծման և օգտագործման հնարավորությունը:

4. Իրենց իրավական համակարգերի շրջանակներում, Կողմերը պետք է համապատասխան /ադեկվատ/ միջոցներ ձեռնարկեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար լրատվական միջոցների մատչելիությունը դյուրացնելու, ինչպես նաև հանդուրժողականությունը խրախուսելու և մշակութային բազմակարծությունը ապահովելու համար:

Հոդված 10

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ, անձնական կյանքում և հասարակական վայրերում, իր փոքրամասնության լեզվից, բանավոր և գրավոր, անարգել օգտվելու իրավունք ունի:

2. Ավանդապես կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված վայրերում, եթե այդ անձինք խնդրել են, և այնտեղ, որտեղ այդպիսի խնդրանքը համապատասխանում է իրական կարիքներին, Կողմերը, որքանով որ հնարավոր է, պետք է ձգտեն ապահովել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան այդ անձանց և վարչական իշխանությունների միջև հարաբերություններում օգտագործել փոքրամասնության լեզուն:

3. Կողմերը պարտավորվում են երաշխավորել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը, ամենակարճ ժամկետներում, իրեն հասկանալի լեզվով, տեղեկություն ստանալ իր ձեռքակալության պատճառների, իր դեմ հարուցված մեղադրանքների բնույթի և պատճառների մասին, ինչպես նաև իր պաշտպանությունը իրականացնել այդ լեզվով, դրա համար անհրաժեշտության դեպքում ստանալով թարգմանչի անվճար ծառայություն:

Հոդված 11

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ ունի իր անունը, ազգանունը և հայրանունը փոքրամասնության լեզվով օգտագործելու, ինչպես նաև դրանց պաշտոնական ճանաչման իրավունք՝ տվյալ երկրի իրավական պահանջներին համապատասխան:

2. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ, իր փոքրամասնության լեզվով, հասարակության համար տեսանելի, մասնավոր բնույթի նշումներ, գրություններ և այլ տեղեկատվություն տեղադրելու իրավունք ունի:

3. Ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդապես բնակեցված տարածքներում, Կողմերը, իրենց իրավական համակարգերի շրջանակներում, անհրաժեշտության դեպքում նաև ներառյալ այլ պետությունների հետ կնքված համաձայնագրերը, ինչպես նաև հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովեն ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով, ցուցանակների տեղադրումը, երբ այդպիսի նշումների բավարար կարիք կա:

Հոդված 12

1. Կողմերը, անհրաժեշտության դեպքում, կրթության և գիտական ուսումնասիրությունների բնագավառում, պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար:

2. Այս կոնտեքստում, Կողմերը, մասնավորապես պետք է ադեկվատ հնարավորություններ տրամադրեն ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև:

3. Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար, բոլոր մակարդակներով, ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ:

Հոդված 13

1. Իրենց կրթական համակարգերի շրջանակներում, Կողմերը պետք է ճանաչեն, որ ազգային փոքրամասնության պատկանող անձիք իրավունք ունեն ստեղծել և ղեկավարել իրենց սեփական մասնավոր կրթական և վերապատրաստման հաստատությունները:

2. Այս իրավունքի իրագործումը Կողմերի վրա ոչ մի ֆինանսական պարտավորություններ չի դնում:

Հոդված 14

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորելու իր փոքրամասնության լեզուն:

2. Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում, բավարար կարիքի դեպքում, Կողմերը, հնարավորությունների սահմաններում և իրենց կրթական համակարգերի շրջանակներում, պետք է երաշխավորեն, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար, իրենց լեզուն ու սովորույթները կամ այդ լեզվով կրթություն ստանալու աղեկվատ հնարավորություններ:

3. Սույն հոդվածի 2-րդ պարբերության դրույթները չպետք է իրագործվեն ի վնաս պաշտոնական լեզվի ուսուցմանը և դասավանդմանը:

Հոդված 15

Կողմերը պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը մշակութային, հասարակական և տնտեսական կյանքում, ինչպես նաև պետական գործունեության մեջ, մասնավորապես, իրենց առնչվող հարցերում, ապահովելու համար:

Հոդված 16

Կողմերը պետք է ձեռնպահ մնան այնպիսի միջոցներից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով և նպատակ ունեն սահմանափակել սույն շրջանակային Կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքները և ազատությունները:

Հոդված 17

1. Կողմերը պարտավորվում են չխաչընդոտել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքը՝ հաստատել և պահպանել ազատ և խաղաղ միջազանցային շփումներ այլ պետություններում օրինական կերպով գտնվող անձանց հետ, մասնավորապես նրանց հետ, ովքեր ունեն ընդհանուր էթնիկական ինքնություն, լեզվական, կրոնական կամ մշակութային ընդհանուր ժառանգություն:

2. Կողմերը պարտավորվում են չխաչընդոտել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ ոչ-կառավարական կազմակերպությունների գործունեությանը, ազգային և միջազգային մակարդակներով, մասնակցելու իրավունքը:

Հոդված 18

1. Համապատասխան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար, Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է ջանք գործադրեն, այլ պետությունների, մասնավորապես, հարևան երկրների հետ, երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր կնքելու համար:

2. Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է միջոցներ ձեռնարկեն միջսահմանային համագործակցությունը խրախուսելու համար:

Հոդված 19

Կողմերը պարտավորվում են հարգել և կիրառել սույն շրջանակային Կոնվենցիայի սկզբունքները, անհրաժեշտության դեպքում, կատարելով միայն այնպիսի սահմանափակումներ և բացառություններ, որոնք նախատեսված են միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայում, այնքանով, որքանով որ դրանք վերաբերում են նշված սկզբունքներից բխող իրավունքներին և ազատություններին:

ԲԱԺԻՆ III

Հոդված 20

Սույն շրջանակային կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքների և ազատությունների իրագործման ժամանակ, ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ պետք է հարգի ազգային օրենսդրությունը և մյուսների իրավունքները, մասնավորապես, բնակչության մեծամասնության և այլ ազգային փոքրամասնությունների իրավունքները:

Հոդված 21

Ոչինչ սույն շրջանակային Կոնվենցիայում չի կարող մեկնաբանվել որպես ցանկացած անհատի որևէ ենթադրվող գործունեությամբ զբաղվելու կամ ինչ որ գործողություններ կատարելու իրավունք, որը հակասում է միջազգային իրավունքի, մասնավորապես, ինքնիշխան հավասարության, տարածքային ամբողջականության և պետությունների քաղաքական անկախության սկզբունքներին:

Հոդված 22

Ոչինչ սույն շրջանակային Կոնվենցիայում չի կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրի օրենքներով կամ որևէ այլ համաձայնագրով, որին այդ Կողմը մասնակից է, երաշխավորվող մարդու իրավունքների կամ հիմնական ազատությունների սահմանափակում կամ նվազեցում:

Հոդված 23

Սույն շրջանակային Կոնվենցիայում շարադրված սկզբունքներից բխող ազատությունները և իրավունքները, այնքանով, որքանով որ հանդիսանում են «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանու-

քյան մասին» կոնվենցիայի կամ դրա Արձանագրությունների առարկա, պետք է հասկացվեն որպես վերջինիս համապատասխան դրույթներ:

ՔԱԺԻՆ IV

Հոդված 24

1. Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեն լիազորված է հետևել Պայմանավորվող պետությունների կողմից սույն շրջանակային Կոնվենցիայի իրագործմանը:

2. Կողմերը, որոնք չեն հանդիսանում Եվրոպայի Խորհրդի անդամ, կոնվենցիայի իրագործման մեխանիզմին կմասնակցեն համաձայն այն պայմանների, որոնք պետք է սահմանվեն:

Հոդված 25

1. Որևէ Պայմանավորվող Կողմի նկատմամբ սույն շրջանակային Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում, վերջինս Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին պետք է փոխանցի օրենսդրական և այլ միջոցառումների մասին համալիր տեղեկատվություն, որոնք ընդունվել և ձեռնարկվել են սույն շրջանակային Կոնվենցիայից բխող սկզբունքները իրականացնելու համար:

2. Հետագայում յուրաքանչյուր Կողմ պարբերաբար և ամեն անգամ, երբ Նախարարների Կոմիտեի կողմից կստանա համապատասխան խնդրանք, Գլխավոր քարտուղարին պետք է ներկայացնի ցանկացած այլ տեղեկատվություն, կապված սույն շրջանակային Կոնվենցիայի իրագործման հետ:

3. Սույն հոդվածի դրույթների համաձայն ստացված ամբողջ տեղեկատվությունը, Գլխավոր քարտուղարը պետք է փոխանցի Նախարարների Կոմիտեին:

Հոդված 26

1. Սույն շրջանակային Կոնվենցիայում շարադրված սկզբունքների իրականացման համար Կողմերից որևէ մեկի ընդունած միջոցառումների նույնականության գնահատման ժամանակ, Նախարարների Կոմիտեին պետք է օժանդակի Խորհրդակցական Կոմիտեն, որի անդամները պետք է ճանաչված իրազեկություն ունենան ազգային փոքրամասնությունների պաշտպանության բնագավառում:

2. Խորհրդակցական Կոմիտեի կազմավորման կարգը, ինչպես նաև աշխատանքային ընթացակարգը, պետք է սահմանվեն Նախարարների Կոմիտեի կողմից, սույն շրջանակային կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում:

ՔԱԺԻՆ V

Հոդված 27

Սույն շրջանակային Կոնվենցիան բաց է Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների ստորագրման համար: Մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, այն բաց է նաև ցանակացած այն պետության ստորագրման համար, ում կիրավորի ստորագրել Նախարարների Կոմիտեն: Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հավանության: Վավերացման, ընդունման կամ հավանության վերաբերյալ փաստաթղթերը պետք է ի պահ տրվեն Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 28

1. Սույն շրջանակային Կոնվենցիան ուժի մեջ կմտնի այն օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, երբ սույն շրջանակային Կոնվենցիայի 27-րդ հոդվածի դրույթներին համաձայն, Եվրոպայի Խորհրդի տասներկու անդամ-երկրները կարտահայտեն իրենց համաձայնությունը սույն Կոնվենցիան իրենց համար պարտադիր լինելու մասին:

2. Յուրաքանչյուր անդամ-երկրի համար, որը հետագայում կարտահայտի իր համաձայնությունը սույն շրջանակային Կոնվենցիան իր համար պարտադիր լինելու մասին, Կոնվենցիան ուժի մեջ կմտնի վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթուղթը ի պահ հանձնելու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 29

1. Սույն շրջանակային Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց, և պայմանավորվող պետությունների հետ անցկացված խորհրդատվություններից հետո, Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի որոշմամբ, որը համաձայն Եվրոպայի Խորհրդի Կանոնադրության 20-րդ հոդվածի d-կետի, ընդունվում է մեծամասնությամբ, Նախարարների Կոմիտեն Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող յուրաքանչյուր պետության կարող է առաջարկել միանալ սույն շրջանակային Կոնվենցիային, որը համաձայն 27-րդ հոդվածի դրույթների հրավիրվել է ստորագրելու այն, բայց չի ստորագրել, ինչպես նաև որևէ այլ անդամ չհանդիսացող պետության:

2. Յուրաքանչյուր միացած պետության համար սույն շրջանակային Կոնվենցիան ուժի մեջ կմտնի միացման փաստաթուղթը Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 30

1. Յուրաքանչյուր պետություն ստորագրման կամ վավերացման պահին, ինչպես նաև ընդունման և միանալու փաստաթուղթը ի պահ հանձնելու

ժամանակ, կարող է նշել տարածքը կամ տարածքները, որոնց սահմաններում նա պատասխանատվություն է կրում միջազգային հարաբերություններին և սույն Կոնվենցիայի կիրառման համար:

2. Յուրաքանչյուր պետություն կարող է հետագայում ցանկացած պահի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ տարածել սույն շրջանակային Կոնվենցիայի կիրառումը որևէ ուրիշ, հայտարարության մեջ նշված, տարածքի վրա: Այս տարածքների վերաբերյալ սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի այդ հայտարարությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի դրույթների հիման վրա արված ցանկացած հայտարարություն կարող է հետ վերցվել, Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցագրի միջոցով, այդպիսի հայտարարության մեջ նշված ցանկացած տարածքի վերաբերյալ: Այդպիսի հետ կանչումը ուժի մեջ կմտնի Գլխավոր Քարտուղարի կողմից ծանուցագիրը ստանալու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 31

1. Յուրաքանչյուր կողմ, ցանկացած պահի, կարող է չեղյալ հայտարարել սույն շրջանակային Կոնվենցիան՝ ծանուցագիր հղելով Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Այդպիսի չեղյալ հայտարարումը /դեմոնստացիան/ ուժի մեջ կմտնի Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցագիրը ստանալու օրից վեցամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 32

Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է տեղեկացնի Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրներին, սույն շրջանակային Կոնվենցիան ստորագրած մյուս պետություններին և սույն Կոնվենցիային միացած յուրաքանչյուր պետության՝

- a. ցանկացած ստորագրման մասին;
- b. վավերացման, ընդունման, հավանության կամ միանալու վերաբերյալ յուրաքանչյուր փաստաթղթի ի պահ հանձնելու մասին;
- c. շրջանակային Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ցանկացած օրվա մասին, համաձայն Կոնվենցիայի 28, 29 և 30 հոդվածներին:
- d. սույն շրջանակային Կոնվենցիային վերաբերող ցանկացած այլ ակտի, ծանուցագրի կամ հաղորդագրության մասին:

Ի հավաստումս վերոհիշյալի, ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն շրջանակային Կոնվենցիան:

Կատարված է Ստրասբուրգում 1995թ, փետրվարի 1-ին, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, երկու տեքստերն էլ հավասարազոր են, և մեկական տարբերակով հանձնվում են ի պահ Եվրոպայի Խորհրդի արխիվ: Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները պետք է փոխանցի Եվրոպայի Խորհրդի յուրաքանչյուր անդամ-երկրի, ինչպես նաև յուրաքանչյուր պետության, որին կառաջարկվի ստորագրել կամ միանալ սույն շրջանակային Կոնվենցիային:

1167



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՁԵԿՈՒՅՑԸ**

**ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒ-
ԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 25-ՐԴ
ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ**

Մայիս 2001թ., Երևան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1991 թ. անկախության նվաճումից ի վեր Հայաստանը որդեգրել է համաշխարհային ու եվրոպական կառույցներին ինտեգրվելու և քաղաքակիրթ պետությունների հանրության լիիրավ անդամ դառնալու քաղաքականություն, որի համար անհրաժեշտ նախապայմաններից է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Դարձնելով Հայաստանում ժողովրդավարության հետագա զարգացման ու մարդու իրավունքների պաշտպանության հարցերը ներքին և արտաքին քաղաքականության առաջնային խնդիրներից մեկը՝ Հանրապետության իշխանությունները նշանակալի ջանքեր են գործադրում մարդու իրավունքների պաշտպանության իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների ձևավորման համար: Հայաստանի Հանրապետությունը, գիտակցելով միջազգային հարաբերությունների զարգացման ոլորտում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ապահովման գործում միջազգային համագործակցության խորացման դերն ու անհրաժեշտությունը, իր ինքնիշխանության ուժով պարտավորված է զգում այդ ոլորտի ամբողջական զարգացման և պարտավորությունների բարեխիղճ կատարման հարցում:

Հայաստանի Հանրապետությունը Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան ստորագրել է 1997 թվականի հուլիսի 25-ին՝ վերջինիս 27-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Նախա-

րարների կոմիտեի հրավերով, երբ դեռևս, Եվրոպայի Խորհրդի անդամ չէր հանդիսանում:

Կոնվենցիան վավերացվել է 1998 թվականի փետրվարի 17-ին, իսկ վավերագիրը ի պահ է հանձնվել Եվրոպայի խորհրդի քարտուղարություն 1998թ. հուլիսի 20-ին: Հայաստանի Հանրապետության համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 1998 թվականի նոյեմբերի 1-ին: Համաձայն Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետությունը պետք է սույն զեկույցը ներկայացնե 1 տարի հետո՝ 1999 թվականի նոյեմբերի 1-ին: Սակայն զեկույցը կազմելու համար որոշակի էական նշանակություն ունեցող հանգամանքների պատճառով այն ներկայացվում է ուշացումով: Դրանք են.

1. Քանի որ վերջին անգամ Հայաստանի Հանրապետությունում մարդահամար անց էր կացվել 1989 թվականին, ապա հաջորդ մարդահամարն ըստ ընդունված պրակտիկայի պետք է անցկացվեր 1999 թվականին: Սակայն համաձայն Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 1999 թվականին ընդունված «Մարդահամարի մասին» օրենքի, նոր մարդահամարի անցկացումը նախատեսվեց 2001 թվականին: Մարդահամարի կարևորությունը զեկույցի համար կայանում է նրանում, որ, մարդահամարի խնդիրը լինելով ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների մշակման, ժողովրդագրական և սոցիալական հետազոտությունների, բնակչության թվաքանակի և կազմի, ընթացիկ հաշվառման ու կանխատեսումների նպատակով բնակչության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունների ստացումը, ավելի նպատակահարմար կլինե ր նոր մարդահամարի տվյալների օգտագործումը զեկույցում:

2. Մարդահամարի տվյալների բացակայության պարագայում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հավաստի տեղեկություններ հնարավոր էր ձեռք բերել ազգային փոքրամասնությունների կազմակերպություններից, որոնք գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարությունում: Սակայն այստեղ ևս կար պորբլեմ «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ ղնելու մասին» ՀՀ ԱԺ-ի կողմից 17.06.98 թ. ընդունված օրենքի 6-րդ հոդվածի հետ կապված, որը սահմանում է մինչև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի միջ մտնելը ստեղծված և քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխով նախատեսված կազմակերպալիարավական ձև ունեցող իրավաբանական անձանց մինչև 2001 թվականի հունվարի 1-ը հիմնադիր փաստաթղթերի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխի նորմերի պահանջներին համապատասխանեցում և վերագրանցման պահանջ: Այս փաստը ինքնին մեր ոլորտում անպայման առընչվում է Ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների հարցին:

Մույն զեկույցը կազմվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից՝ համապատասխան նախարարությունների և գործակալությունների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա՝ հաշվի առնելով ինչպես համապատասխան գերատեսչությունների, այնպես էլ համապատասխան ազգային փոքրամասնությունների՝ ասորիների, եզդիների, լեհերի, հրեաների, հույների, ռուսների, վրացիների և քրդերի հասարակական կազմակերպությունների՝ սույն զեկույցի վերաբերյալ քննարկումների արդյունքում ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

ՄԱՍ 1

Պատմական հակիրճ ակնարկ

1. Հայաստանը, աշխարհի հնագույն պետություններից մեկը լինելով, իր նորագույն պատմության մեջ առաջին անգամ անկախություն նվաճեց 1918 թվականի մայիսի 28-ին: Առաջին Հանրապետությունը գոյատևեց մինչև 1920 թվականի նոյեմբերի 29-ը, երբ Հայաստանը մտավ Խորհրդային Միության կազմի մեջ՝ դառնալով նախկին Խորհրդային Միության 15 հանրապետություններից մեկը:

2. 1991 թվականի սեպտեմբերի 21-ին հանրաքվեի արդյունքներով Հայաստանի Հանրապետությունը վերականգնեց իր անկախությունը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքն է 29,800 հազար քառակուսի կիլոմետր, բնակչությունը՝ մոտ 3800000¹: Հայաստանը սահմանակից է Վրաստանին, Ադրբեջանին, Իրանին և Թուրքիային:

¹ 2000 թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ-ում քաղաքային բնակչությունը կազմել է 2534,2 հազար մարդ, իսկ գյուղերում 1269,4 հազար մարդ: Առկա բնակչության թվաքանակն արտագաղթի հետևանքով զգալիորեն պակաս է: Առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի վերաբերյալ արժանահավատ տվյալները բացակայում են արտագաղթի թերահավատման հետևանքով: Արտագաղթի մի մասն արտացոլող արժանահավատ տվյալներ առկա են միայն օդային տրանսպորտով մեկնողների և ժամանողների ցուցանիշների տարբերության գծով: Ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից իրականացվող ուղևորափոխադրումների հաշվառման տվյալների, 1992-1999 թթ. հանրապետությունից մեկնողների թվաքանակն ավելի քան 622 հազար մարդով գերազանցել է ժամանողների թվաքանակը: Սկսած 2000 թվականի մայիս-նոյեմբերի ամիսներից տեղեկություններ են ստացվել նաև երկարգծով և ավտոտրանսպորտային միջոցներով (ավտոտրանսպորտով, երթուղային տարափներով և թեթև մարդատար մեքենաներով) ուղևորափոխադրումների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունը ըստ ՀՀ Սահմանադրության

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ընդունվեց 1995 թվականի հունիսի 5-ին անցկացված հանրաքվեի արդյունքներով²:

5. Հայաստանի Հանրապետությունը իր Սահմանադրությամբ հռչակվում է ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն: Սահմանադրությունը այն ելակետն է, որը հիմք է ծառայում օրենսդրության ձևավորմանը:

6. Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4 հոդվածի «Պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»:

7. Սահմանադրության 2-րդ գլուխը ամբողջովին նվիրված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին: Սահմանադրությունը հռչակում է բոլորի հավասարությունն օրենքի և դատարանի առաջ, բոլորին տրամադրում է հավասար հնարավորություն օգտվելու Սահմանադրությամբ և այլ օրենսդրական ակտերով սահմանված իրավունքներից, ազատություններից ու պարտականություններից:

ՀՀ վարչապարածքային բաժանումները

8. Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Հայաստանի Հանրապետությունը ունիտար պետություն է: Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում տեղական ինքնակառավարում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Վարչատարածքային բաժանման մասին օրենքի: Հայաստանի Հանրապետությունը բաղկացած է 10 մարզերից և մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքից: Տեղական ինքնակառավարումը կարգավորվում է համապատասխան օրենքով: Տարածքային կառավարման հարցերը դեռևս կարգավորվում են ենթաօրենսդրական ակտով (ՀՀ նախագահի հրամանագիր),

² 1998 թ ՀՀ նախագահին առընթեր ստեղծվել է հանձնաժողով՝ սահմանադրական փոփոխությունների նախապատրաստելու նպատակով: Ներկայումս ավարտական փուլում է սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների պատրաստումը: Սահմանադրական բարեփոխումները իրականացվում են սերտորեն համագործակցելով Վենետիկի Հանձնաժողովի հետ, իսկ Վենետիկի Հանձնաժողովի աշխատանքային խումբն ու ՀՀ Սահմանադրության նախագիծը պատրաստած Հայաստանի պատվիրակությունը աշխատանքային հանդիպում կունենան Ստրասբուրգում 2001 թ. հունիսի սկզբներին: Նախատեսվում է, որ վերջնական տեքստը կներկայացվի հանձնաժողովի հաջորդ լիազումար նիստին (2001 թ. հուլիսի 7-8):

Հանձնաժողովի նիստի ընթացքում ամենայն հավանականությամբ կարծիք կարտահայտի նախագծի վերաբերյալ:

նախապատրաստական փուլում է գտնվում հիշյալ ոլորտի վերաբերյալ օրենքի նախագիծը:

Միջազգային իրավունքի և ՀՀ ներպետական իրավունքի փոխհարաբերությունը

9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ամրագրում է ուղղակի տրանսֆորմացիայի սկզբունքը: Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, միջազգային պայմանագրերի նորմերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի համաձայն միջազգային պայմանագրի նորմերը գործում են անմիջականորեն, բացառությամբ, երբ միջազգային պայմանագրերից բխում է կամ նրա արդյունավետ կիրառումը չի ենթադրում ներպետական ակտի ընդունում: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

ՀՀ դարաիրավական բարեփոխումները

10. Հայաստանի Հանրապետությունում ավարտին են հասել դատաիրավական բարեփոխումները, բայց Եվրախորհրդին անդամակցելուց հետո որոշակի այլ բարեփոխումների անհրաժեշտություն է առաջացել¹:

ՀՀ ազգագրական իրավիճակի մասին տեղեկատվություն

11. Հայաստանի Հանրապետությունում վերջին պաշտոնական մարդահամարն անց է կացվել 1989 թվականին: Անկախությունից հետո տեղի ունեցած քաղաքական, տնտեսական, սոցիալական արմատական տեղաշար-

¹ Անցած տարիների ընթացքում մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, քրեական դատավարության օրենսգրքերը, դատարանակազմության մասին, դատավորի կարգավիճակի մասին, դատախազության մասին, փաստաբանական գործունեության մասին, միջնորդ դատախազների և միջնորդ դատավարության մասին, դատական ակտերի հարկադիր կատարման մասին, խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին, Մամուլի և Ջանգվածային լրատվության մյուս միջոցների մասին օրենքները և այլ օրենսդրական ակտեր: Վերջնական փուլում է գտնվում Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի ընդունումը: Անհրաժեշտություն է արդեն մի շարք օրենքների՝ օմբուդսմենի մասին օրենքի, այլընտրանքային ծառայության օրենքի, զանգվածային լրատվամիջոցների մասին նոր, ոչ կառավարական կազմակերպությունների մասին նոր օրենքների ընդունումը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի ընդունումը:

միջոց է կոլոզիական աղետի առաջն առնելու նպատակով խոշոր ձեռնարկությունների և հիմնարկությունների աշխատանքների դադարեցումը, առաջացած վառելիքա-էներգետիկ ճգնաժամը, Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը, Հայ-ադրբեջանական և հայ-թուրքական սահմաններով տնտեսական շրջափակումը, 1988-ի աշխարհացունց երկրաշարժը չէին կարող իրենց կնիքը չթողնել Հայաստանի Հանրապետությունում տիրող ամբողջ իրավիճակի վրա:

12. Ինչպես հայտնի է, աշխարհում չկան մոնոէթնիկ պետություններ և Հայաստանը, բացառություն չի կազմում: Դարերի ընթացքում Հայաստանի տարածքում են բնակվել և շարունակում են բնակվել տարբեր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, որոնք երբևէ խտրակամության չեն ենթարկվել: Ազգային փոքրամասնությունները կազմում է Հայաստանի Հանրապետության բնակչության մոտավորապես 3 տոկոսը:

13. Հայաստանի Հանրապետությունում հայերի հետ միասին ապրում են 20-ից ավելի ազգություններ: Դրանք են ասորիները, հույները, վրացիները, երեաները, եզդիները, քրդերը, գերմանացիները, լեհերը, ռուսները, բելառուսները, ուկրաինացիները և այլն: Այստեղ նրանք գտել են իրենց երկրորդ հայրենիքը և իրենց ուժերի սահմաններում մասնակցում են Հայաստանի տնտեսական և մշակութային զարգացմանը: Եթե խորնուղիական ասպեկտով գուցահեռներ անցկացնենք, կնկատենք, որ նշված ազգությունների Հայաստանում հաստատման ամենավերջին հիշատակվող ժամկետը համընկնում է 19-րդ դարի կեսերին:

14. Ընդհանուր առմամբ, համաձայն 1989 թ. վերջին պաշտոնական մարդահամարի տվյալների, բնակչության առանձին էթնիկական բաշխումը Հայաստանում հետևյալն էր.

	Բացարձակ թվերով	Տոկոսով
Հայեր	3.083.616	93,3
Ադրբեջանցիներ	84.860	2,6
Քրդեր և եզդիներ	56.127	1,7
Ռուսներ	51.555	1,6
Ուկրաինացիներ	8.341	0,2
Ասորիներ	5.963	0,2
Հույներ	4.650	0,1
Այլ ազգություններ	9.664	0,3
Ընդհանուրը	3.304.776	100,0

ՀՀ հիմնական տնտեսական տվյալները

15. Տնտեսության ոլորտում անչափ կարևորվում է համախառն ազգային եկամտի ցուցանիշները, որոնք 2000 թվականին հետևյալն են՝

• ՀՆԱ շուկայական գներով կազմում է 1032629, 9 մլն դրամ /1, 912, 179, 592.6 USD/

• ՀՆԱ մեկ շնչին ընկնող-271, 600 դրամ, 503 ԱՄՆ դոլար

ՀՀ պետական քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում

16. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ պետական քաղաքականության իրականացման հիմնական առանցքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Սահմանադրությունը որպես հասարակության զարգացման արդյունք և սոցիալական արժեք, կոչված է ի սկզբանե պաշտպանելու անհատի իրավունքները և ազատությունները:

17. Հայաստանի Հանրապետության նախագահը իր «ժողովրդին ուղղված ուղերձում» հայտարարեց, որ Հայաստանը ոչ միայն հայերի, այլև նրանում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների համար պետք է հանդիսանա հայրենիք:

18. Հարկ է նշել, որ 1991 թ. դեկտեմբերի 8-ին Միսկույն Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի միջև ստորագրված «Անկախ պետությունների համագործակցություն ստեղծելու մասին» համաձայնագրում, որում ձևականորեն ամրագրվեց ԽՍՀՄ գոյության ավարտը⁴, հատուկ նախատեսվում էր, որ կողմերը իրենց պաշտպանության տակ են վերցնում իրենց տարածքներում բնակվող ազգային փոքրամասնություններին՝ ցանկանալով նպաստել նրանց էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական ինքնակենցաղության արտահայտմանը, պահպանմանը և զարգացմանը: 1994 թ Մոսկվայում ԱՊՀ պետությունների նախագահները ստորագրել են «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» կոնվենցիան, որը 1995թ հոկտեմբերի 11-ին վավերացվել է Հայաստանի Հանրապետության ԱԺ-ի կողմից⁵:

⁴ Համաձայնագրին միացան նախկին ԽՍՀՄ ևս 8 հանրապետություններ /այդ թվում նաև Հայաստանը/, 1991 թ. դեկտեմբերի 21-ին ստորագրելով դրա անբաժանելի մասը կազմող կից արձանագրությունը

⁵ 2001 թվականի հունվարի դրությամբ Կոնվենցիան ուժի մեջ է Հայաստանի, Ադրբեջանի և Բելառուսի համար

19. Թերություն ենք համարում, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս չի ընդունվել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենք⁶, հետևապես բացակայում է նաև դրա սահմանումը: Սակայն գործնականում «ազգային փոքրամասնություն» հասկացության տակ հասկացվում են Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք իրենց էթնիկական ծագմամբ տարբերվում են երկրի հիմնական բնակչությունից: Նման մոտեցումը ըստ էության համընկնում է ԱՊՀ շրջանակներում կնքված «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» կոնվենցիայով սահմանված բնորոշմանը:

20. Ինչպես տեսանք, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածը և հատուկ կոնվենցիան արդեն իրողություն են, սակայն անհրաժեշտ է պետական մարմին, որը դրանք կյանքի կկոչեր: Սակայն նույնիսկ այդ մարմնի բացակայությունը ինքնին չի կարող խոսել այս ոլորտում էական բացի մասին:

21. Հիշենք, որ Հայաստանը մասնակից է մարդու իրավունքների ոլորտում մի շարք միջազգային կոնվենցիաների և պայմանագրերի (տես հոդված 1):

22. 1998 թվականին Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր ստեղծվել է Մարդու իրավունքների հանձնաժողով, որը համարվում է որպես անհրաժեշտ և կարևոր քայլ օմբուդսմենի ինստիտուտի կայացման գործում: Հանձնաժողովը զբաղվում է խախտված իրավունքները քննարկելու և վերականգնելու հետ կապված դեպքերով, ձեռք է առնում միջոցներ մարդու իրավունքների խախտումները կանխելու ուղղությամբ: Հանձնաժողովի ջանքերով մշակվել է Օմբուդսմենի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության ԱԺ: Հանձնաժողովը բաղկացած է 17 անդամներից, որոնք հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների անդամներ, անկախ լրագրողներ և իրավաբաններ են:

23. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության գործում կարևոր քայլ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների Համակարգող խորհրդի ստեղծումը Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմին առընթեր: Այդ մարմինը պաշտոնապես ստեղծվել է 2000թ. հունիսի 15-ին՝ Հայաստանի Հանրապետության նախագահի կարգադրությամբ՝ Հայաստանի Հանրապետությու-

⁶ «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի նախապատրաստական աշխատանքներ են սկսվել ՀՀ նախագահի աշխատակազմի և ԱԺ ՀՅԴ խմբակցության նախաձեռնությամբ, ներգրավելով Հայաստանի ազգագրական գիտական մտքի առավել նշանավոր մասնագետներին:

նում ազգային փոքրամասնությունների պաշտպանվածությունն ապահովելու, նրանց միջհամայնքային հարաբերություններն ակտիվացնելու, ինչպես նաև հատուկ կրթամշակութային, իրավական և այլ խնդիրների նկատմամբ պետական հոգածությունն առավել արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունից ելնելով: Հարկ է նշել, որ Նախագահի կարգադրությունը հետևել է հասարակական մշակութային, ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների ներկայացուցիչների 2000 թ. մարտի 12-ի 1-ին համագումարին: Համակարգող խորհուրդը հանդիսանում է միջանկյալ օղակ ազգային փոքրամասնությունների հարցերով առանձին պետական կառույց ստեղծելու ուղղությամբ: Համակարգող խորհրդի հետ առանձին հանդիպումներ են ունեցել ՀՀ նախագահը և ՀՀ վարչապետը, որոնց ընթացքում բազում հարցերի շարքում հատուկ քննարկվել է ազգային փոքրամասնությունների ընդհանուր մշակութային կենտրոնի ստեղծման խնդիրը:

24. Թեև Հայաստանի Հանրապետությունում բացակայում է «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենք, սակայն մի շարք օրենքներ ուղակիորեն սահմանում և երաշխավորում են ազգային փոքրամասնությունների իրավունքները՝ այդ օրենքների կարգավորման առարկայի շրջանակներում: Այսպես, Լեզվի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կարգավորվում է լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների լեզվահարաբերությունները: Նշված օրենքում հայերենը հռչակվում է որպես պետական լեզու, որը պետք է սպասարկի Հայաստանի Հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Այնուհետև նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը: Հիշյալ օրենքի 2-րդ հոդվածը նշում է «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրերով և հովանավորությամբ հայերենի պարտադիր ուսուցմամբ»: Գործում են նաև «Կրթության մասին» և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքներ և այլն:

25. Հարկ է նշել, որ «Ազգային փոքրամասնություն» հասկացությունը բառի հավաքական իմաստով ավելի հասկանալի է հայ ժողովրդին, որը 20-րդ դարի սկզբի ցեղասպանության պատճառով, սփռվել է ամբողջ աշխարհով մեկ և կազմում է փոքրամասնություն տարբեր երկրներում: Նշենք նաև այն, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 11-րդ հոդվածը, արտացոլելով հայ ժողովրդի մեծ մասի տարագիր և աշխարհասփյուռ

վիճակը, պարտավորեցնում է Հայաստանի Հանրապետության իշխանություններին միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում

ա/ նպաստել արտերկրում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանման,

բ/ աջակցել այլ պետություններում հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

Ուստի և նման պրոբլեմ աչքի առաջ ունենալով՝ անշուշտ մեր Հանրապետությունը ուշադրության կիզակետում է պահելու ազգային փոքրամասնությունների վերաբերող նույնական բախտորոշիչ քաղաքականության իրականացումը:

Շրջանակային կոնվենցիայի նպատակների իրագործմանը ուղղված քաղաքականությունը

26. Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածը հռչակում է, որ օրենքները կիրառվում են միայն պաշտոնական հրապարակումից հետո: Մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող չիրապարակված իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն: Հայաստանի Հանրապետության օրենքները հրատարակվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում:

27. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածը սահմանում է, որ օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագրում»: «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիրը» Հայաստանի Հանրապետության ԱԳՆ պաշտոնական պարբերականն է, որը հրատարակվում է Հայաստանի Հանրապետության ԱԳՆ սահմանած պարբերականությամբ: Մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը հրապարակվում են նաև «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»՝ Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի հրապարակման մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

28. 1998 թվականի նոյեմբերի 12-ին Եվրախորհրդի հովանավորությամբ Երևանում տեղի ունեցավ ինֆորմացիոն հանդիպում, որի նպատակն էր իրազեկելու ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին

շրջանակային կոնվենցիայի դրույթների վերաբերյալ: Չեռք առնված միջոցառումները հնարավորություն են տալիս իրական դարձնելու հասարակությանը սույն կոնվենցիայի վերաբերյալ իրագեկ դարձնելու ուղղությամբ իրականացված ջանքերը:

29. ՀՀ կառավարության և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի միջև 1998 թվականին կնքված Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ՀՀ ԱԳՆ կողմից 2000 թ.-ի մայիսին Երևանում կազմակերպվեց կլոր սեղան նվիրված ազգային փոքրամասնությունների, ինչպես նաև Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների խնդիրներին: Կլոր սեղանի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանում բնակվող ազգային և կրոնական փոքրամասնությունների, ինչպես նաև շահագրգիռ պետական կառույցների ներկայացուցիչները: Եվրոպայի խորհրդից և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ից հրավիրված փորձագետները մեկ անգամ ևս պարզաբանեցին մասնակիցներին մասնավորապես ազգային փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում գոյություն ունեցող միջազգային չափանիշները: Քննարկումների արդյունքում որոշվեց ՀՀ կրթական հաստատությունների ծրագրերի մեջ նախատեսել հատուկ դասընթացներ համապատասխան թեմաներով: Այս նպատակով նախապատրաստվում են և մոտակա ժամանակ կիրատարակվեն հատուկ ուսումնական ձեռնարկներ:

ՀՀ օրենսդրության թերությունները

30. Վերջին տարիների ընթացքում կատարված միջազգային իրավական փաստաթղթերի և Հայաստանի օրենսդրության համեմատական վերլուծությունը ի հայտ բերեց վերջինիս անկատարելությունը: Բացահայտված հիմնական թերությունները հետևյալն են.

- ա) Չկա հստակ վերաբերմունք մարդու իրավունքների՝ որպես բարձրագույն արժեք ճանաչելու նկատմամբ
- բ) Մարդու արժանապատվությունն ամրագրված է ոչ թե որպես սահմանադրական իրավունքի, այլ որպես քրեաքաղաքացիական իրավունքի օբյեկտ: Նախկին խորհրդային իրավական համակարգին բնորոշ այդ մոտեցումը Հայաստանում դեռևս չի հաղթահարվել
- գ) Չկա իրավունքի և օրենքի հստակ սահմանազատում, ավելին, զգալի է իրավունքն օրենքին ենթադասելու վտանգը
- դ) Անհատը զրկված է սահմանադրական արդարադատության իրավունքից և այլն:

Այս բոլորը էական բացեր են, որոնք լրջորեն թուլացնում են մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքները:

րը: Առկա թերությունները շտկելու և իրավական դաշտը կատարելագործելու նպատակով Հայաստանում իրականացվում են սահմանադրական բարեփոխումներ:

ՄԱՍ II

Հոդված 1

Ազգային փոքրամասնությունների և այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժան մասն է և, որպես այդպիսին, հանդիսանում է միջազգային համագործակցության բնագավառ:

31. Ընդունելով ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը որպես մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժան մաս՝ անհրաժեշտ է ուշադրություն բևեռել միջազգային ոլորտում տեղի ունեցող ինտեգրացման գործընթացին: Մովորաբար միջազգային իրավունքում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը իրականացվում է 2 ուղղությամբ՝ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման միջոցով և ազգային փոքրամասնությունների հատուկ իրավունքների ճանաչման և իրականացման միջոցով:

32. Հայաստանի Հանրապետությունը 1992 թվականի մարտին դարձավ ՄԱԿ-ի անդամ պետություն: Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն անդամակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների (ԵԱՀԿ, ՅՈՒՆԵՍԿՕ և այլն), որը ցույց է տալիս Հայաստանի Հանրապետության ակտիվ գործունեությունը միջազգային համագործակցության բնագավառում: Իսկ սույն թվականի հունվարի 25-ին Հայաստանը դարձավ Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ:

33. Հայաստանի Հանրապետությունը մասնակից է հետևյալ միջազգային փաստաթղթերի.

- ՄԱԿ-ի 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր և նրա ֆակուլտատիվ արձանագրություն
- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի համաձայնագիր, 1-ը հունիսի 1992 թ.
- Յեղասպանության ոճրագործության կանխման և դրա համար պատժի մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիա
- Ապարտեյդի հանցագործության կանխման և նրա պատժման մասին Ժնևի կոնվենցիա,

- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1965թ. Ժնևի կոնվենցիա,
- Կոնվենցիա տանջանքների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ, 09 հունիսի 1993թ.
- Ժնևի 1951թ. հուլիսի 28-ի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան և Ժնևի 1967թ. հոկտեմբերի 4-ի Փախստականների կարգավիճակի մասին արձանագրություն,
- Կոնվենցիա կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականության վերացման մասին, 09 հունիսի 1993թ.
- Միջազգային դաշնագիր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին/1993թ. հունիսի 9/
- Համաձայնագիր տեղահանված անձանց, ազգային փոքրամասնությունների և ժողովուրդների իրավունքների վերականգնման հետ կապված հարցերի շուրջ, 09 հունիսի 1993թ.
- Կոնվենցիա «Ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին», ստորագրվել է ԱՊՀ շրջանակներում 1994թ. հունվարի 21-ին, վավերացվել է 1995թ. հոկտեմբերի 11-ին, և այլն:

34. Հայաստանի Հանրապետությունը իր անդամակցության արարողության պահին ստորագրեց Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության 1950 թվականի եվրոպական կոնվենցիան, և նրա թիվ 1, 4, 6, 7 արձանագրությունները: Անդամակցության հետ կապված պարտավորություններից ելնելով՝ Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է նաև Ազգային փոքրամասնությունների և ռեզիդուալ լեզուների Եվրոպական խարտիան 2001 թ. մայիսի 11-ին, ինչպես նաև կստորագրի Եվրոպական սոցիալական խարտիան:

Հոդված 2

Սույն շրջանակային Կոնվենցիայի դրույթները պետք է կիրառվեն բարեխիղճ կերպով, ըմբռնման և հանդուրժողականության ոգով և բարիդրացիության, պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության սկզբունքներին համապատասխան:

35. ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը իրականացվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստա-

տելու նպատակով»: Որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է անշեղորեն հետևելու միջազգային իրավունքի սկզբունքներին, որոնց մեջ էլ պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքն է:

Հոդված 3

1. Ազգային փոքրամասնության պարկանոց յուրաքանչյուր անձ, պետք է ունենա աշդպիսին համարվելու կամ շահամարվելու ազատ ընտրության իրավունք և այդ ընտրությունը կամ այն իրավունքների իրականացումը, որ կապված են այդ ընտրության հետ, չպետք է փոխադրվեն անձին դնեն անբարենպաստ պայմաններում:

2. Ազգային փոքրամասնությունների պարկանոց անձիք, անհավապես, ինչպես նաև մյուսների հետ խմբերով, կարող են իրականացնել իրավունքներ և օգտվել ազատություններից, որոնք բխում են սույն շրջանակային Կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից:

36. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 «ՀՀ-ում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված կանոնադրության 6-րդ կետում սահմանվում է, որ ՀՀ քաղաքացիների անձնագրում ՀՀ քաղաքացու ցանկությամբ կարող է կատարվել, ի թիվս այլ նշումների, նաև ազգության մասին նշում՝ ՀՀ-ում ներքին գործերի մարմինների, իսկ օտարերկրյա պետություններում՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից:

37. Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրությունը օգտագործում է «Ազգային փոքրամասնություններ» եզրույթը: Ազգային օրենսդրությունը մի շարք անգամ հիշատակում է ազգային փոքրամասնությունների վերաբերյալ, սակայն մանրակրկիտ չի տալիս դրա իրավաբանական սահմանումը: Ըստ երևույթին, այս հարցի ավելի մասնագիտորեն և մանրամասն կարգավորման անհրաժեշտությունը թողնված է առանձին օրենքի հայեցողությանը:

38. Որպես կառավարման մարմին, որը պատասխանատու է ազգագրական տվյալների հավաքման համար հանդիսանում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական ազգային ծառայությունը:

39. Անդրադառնալով ազգային փոքրամասնությունների ներկայիս թվաքանակի ամպլիտուդային, ապա այն տատանվում է՝ ազգությունների առանձին պաշտոնական թվարկմամբ 200-ից մինչև 12000-ի սահմաններում:

րում: Այսպես օրինակ, լեհերի թվաքանակը հասնում է 210-ի, որից շուրջ 100 հոգի բնակվում են Հայաստանի տարբեր շրջաններում: Ազգային փոքրամասնությունների մեջ ավելի մեծ բանակ ունեն ռուսները: Եթե ուշադրությամբ հետևենք վիճակագրական տվյալներին, 1989 թվականի տվյալներով Հայաստանում բնակվում էին 51 հազար ռուս: Այժմ, կապված Հայաստանի Հանրապետության ներկայիս տնտեսական ոչ բարձր վիճակի հետ, նկատվում է նշված ազգային փոքրամասնությունների թվաքանակի կրճատում: Ներկայումս ռուսները Հայաստանում հաշվարկվում են 12-ից 13 հազար: Զոռանանք նաև, որ Հայաստանում բնակվում են նաև մոլդովացիներ, օսեր, սլովակներ, մորդվաններ, ուզբեկներ, բաշկիրներ, թաթարներ, լատիշներ, լիտվացիներ, էստոնացիներ, կաբարդիներ, կոմիներ, իտալացիներ և այլն: Պարզապես սակավաթիվ լինելու հանգամանքը կուտ հիմք չէր կարող հանդիսանալ այն հարցում, որ վերջիններս ունենային իրենց ազգային կազմակերպությունները և դրանով իսկ իրենց հնչեղությունը: Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնությունների բնակության վայրի տվյալներին, ապա ՀՀ-ում շուրջ 6000 ասորիներ բնակվում են Երևանում, Արարատի մարզում՝ Դմիտրով գյուղ, Կոտայքի մարզում, Արմավիրի մարզում, ոչ պակաս քան 4000 հույներ մեծամասամբ՝ Երևանում, Ալավերդիում, Ստեփանավանում, Հրազդանում, հրեաներ՝ 90 %-ից ավելին (գրանցված 700 մարդ) բնակվում է Երևանում, մնացած մասը Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում, գերմանացիներ՝ որոնց (1998 թվականին) համայնքը կազմող 97 ընտանիքներից 56-ը բնակվում են Երևանում, 13-ը Վանաձորում, 2-3 ական ընտանիքներ Գյումրիում, Հոկտեմբերյանում, Արոյանում, Գառնիում, Բյուրականում, Այրումում, վրացիներ (110 հոգի), նրանց բնակության հիմնական վայրը Երևանն է, ինչպես նաև Վանաձորը (20 մարդ): Համայնքի անդամ են այն անձինք, ովքեր գոնե 3 սերունդ առաջ ունեցել են վրացի ազգականներ, և այլն: 1988-ից 1992 թթ ընթացքում հասկանալի պատճառներով մոտ 300000-ից 350000 հայեր և ազերիներ լքեցին համապատասխանաբար 2 պետությունների տարածքները⁷:

Հոդված 4

1. Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պարկանոդ անջանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարությունը և օրենքով հավասար պաշտպանությունը: Այդ առումով, արգելվում է ազգային փոքրամասնության պարկանեխության վրա հիմնված ցանկացած խորականություն:

2. Կողմերը պարտավորվում են, անհրաժեշտ դեպքերում, շեղնարկել համապարասիսան միջոցներ, որպեսզի արևմտասկան, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում, աշակցեն ազգային փոքրամասնությանը և բնակչության մեծամասնությանը պարկանոդ անջանց միջև լիակարար և իրական հավասարությունը: Այս նպատակով, Կողմերը ըստ պարշաճի պետք է հաշվի առնեն ազգային փոքրամասնությունների պարկանոդ անջանց առանձնահատուկ պայմանները:

3. Երկրորդ կերի դրույթներին համապարասիսան ընդունված միջոցները չպետք է համարվեն խորականություն:

40. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածը հռչակում է ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիները ունեն իրենց ավանդույթների պահպանման, լեզվի և մշակույթի զարգացման իրավունք: Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 15 հոդվածի ՀՀ քաղաքացիները անկախ ազգությունից, ռասայից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթունից ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները: Իսկ 16-րդ հոդվածը որպես լրացուցիչ երաշխիք նշում է. «Բոլորը հավասար են օրենքի առաջ և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով»: Այնուհետև Սահմանադրության 38 հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք»:

41. Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության իրականացման գործում մեծ է 1998 թ. ապրիլին Հայաստանի Հանրապետության Նախագահին կից ստեղծված մարդու իրավունքների հանձնաժողովի դերը, որը բաղկացած է 17 անդամներից: Հանձնաժողովի հիմնական առաքելության և նշանակության վերաբերյալ խոսվել է Ձեկույցի 22 կետում:

⁷ Միննույն ժամանակ, համաձայն մարդահամարի պաշտոնական տվյալների, Հայաստանում ազերիներից որոշ մասը լքեց ՀՀ տարածքը 8-10 ամիսների ընթացքում նախապես փոխանակելով կամ վաճառելով իրենց բնակարանները: Այս փաստը պաշտոնապես գրանցված է քաղաքային խորհուրդներում կամ այդ ապացուցող համապատասխան փաստաթղթեր: Բացի այդ 1989-90 թթ. ՀՀ կառավարությունը վճարել է 110 մլն ամերիկյան դոլարի նամարժեք փոխհատուցում նրանց, ովքեր լքել են ՀՀ տարածքը առանց իրենց բնակարանները փոխանակելու կամ վաճառելու:

42. Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության գործում կարևոր քայլ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի խորհրդակցական կից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների Համակարգող խորհրդի ստեղծումը: Տես 23 կետ: Այդ խորհուրդը ունի 11 ազգային փոքրամասնությունների 2-ական ներկայացուցիչ (ասորիներ, բելոռուսներ, հույներ, վրացիներ, հրեաներ, եզդիներ, քրդեր, գերմանացիներ, լեհեր, ռուսներ և ուկրաինացիներ): Մշակվել է խորհրդի կանոնադրությունը: Ընդունվել են հետևյալ հայեցակարգային ուղղությունները՝

- ազգային փոքրամասնությունների շահերից բխող օրենքների նախագծերի մշակմանը անմիջական մասնակցություն,
- տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն,
- ազգային փոքրամասնություններին վերաբերող քաղաքական, տնտեսական, էթնոմշակութային բնույթի հարցերի համակարգում
- քաղաքացիների և կազմակերպությունների բողոքների, դիմումների և առաջարկությունների քննարկում,
- ինֆորմացիոն և իրատարակչական գործունեության իրականացում
- կոնգրեսների, նիստերի, սեմինարների, ցուցահանդեսների անցկացում,
- ազգային փոքրամասնությունների հայրենիքի հետ կապերի հաստատում և այլն:

Հոդված 5

1. *Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պարկանոդ անչանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական արարները՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար:*

2. *Իրենց ընդհանուր ինտեգրացիոն քաղաքականության իրականացման համար չեռնարկվող միջոցներին ոչ ի վնաս, Կողմերը պետք է չեռնպահ մնան ցանկացած քաղաքական կամ գործնական գործողություններից, որոնք հետպահում են ազգային փոքրամասնությունների պարկանոդ անչանց, հակառակ նրանց կամքի, միաշուկելու նպատակ և պետք է այդ անչանց պաշտպանեն ցանկացած գործողություններից, որոնք ուղղված են այդպիսի միաշուկման:*

43. Ուշադրության առնելով լիիրավ և իրական իրավահավասարության անհրաժեշտությունը, հետապնդելով ավելի շատ ամրապնդելու ազգային փոքրամասնությունների ինքնակենցաղությունը, դեմոկրատական իրավա-

կան պետության հիմքը ամրապնդելու, և ելնելով միջազգային իրավունքի հայտնի նորմերից և սկզբունքներից, ինչպես արդեն նշվել է գեկույցի նախորդ մասերում, Հայաստանում մշակվում է Ազգային փոքրամասնությունների մասին օրենք:

44. Այդ օրենքի նախագծով նախատեսված է ազգային փոքրամասնությունների քաղաքական, տնտեսական, սոցիալական, և այլ իրավունքների պաշտպան և այլ միջոցներով պաշտպանությունը: Մինչ այս օրենքի ընդունումը այս հարցերի շրջանակը կարգավորվում է ընդհանուր հիմունքներով՝ Մահմանադրությամբ և օրենքներով սահմանված ընթացակարգերով:

45. Ազգային փոքրամասնությունների մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար իրավական ակտերի ծավալի մեջ կենտրոնականը Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունն է՝ հանձինս իր 37 հոդվածի:

46. Անկախության հռչակումից հետո առաջին օրենքներից մեկը, որը ընդունվել է մեր պետության կողմից, եղել է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը, որի առաջին հոդվածում նշվում է, որ «յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն որոշում է իր հարաբերությունները կրոնի հարցում, իրավունք ունի դավանել ցանկացած կրոն /.../ անձամբ կամ համատեղ այլ քաղաքացիների հետ իրականացնել կրոնական փառատարություններ»:

47. 2000 թվականի հունվարին պաշտոնապես գրանցված են եղել 14 տարրեր կրոնական ուղղություններ:

1. Հայկական առաքելական եկեղեցի
2. Հայ կաթոլիկ եկեղեցի
3. Ռուսական ուղղափառ եկեղեցի
4. Եզդիների կրոնական համայնք
5. Հուդայական համայնք
6. Հեթանոսների համայնք
7. «Բահայ» համայնք
8. Մորմոններ
9. Բապտիստներ
10. Եվանգելիստներ
11. Հիսունականներ
12. Հարիզմատներ

13. 7-րդ օրվա աղվենտիստներ

14. Նոր առաքելական եկեղեցի

Առանց գրանցման գործում են «Եհովայի վկաներ», որի կանոնադրությունը հակասում է ՀՀ Սահմանադրությանը և զինապարտության մասին օրենքին, և «Կրիշնայական գիտակցություն» համայնքները:

Հոդված 6

1. Կողմերը պետք է խրախուսեն հանդուրժողականության և մշակույթների միջև երկխոսության մթնոլորտը, և պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկեն իրենց փարածքներում բնակվող բոլոր անչանց միջև, անկախ նրանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելիությունից, փոխադարձ հարգանքը, փոխըմբռնումը և համագործակցությունը խթանելու համար, մասնավորապես, կրթության, մշակույթի և լրատվական միջոցների բնագավառներում:

2. Կողմերը պարտավորվում են շեղմարկել համապարասիան միջոցներ այն անչանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պարտաճանաչող դառնալ սպառնալիքների, խորրականության, թշնամական կամ բռնի գործողությունների զոհ:

48. Հայաստանը ունի հարուստ մշակութային ժառանգություն և մշակութային ինստիտուտների խիստ ցանց: Վերջին 10 տարիների ծանր սոցիալական տնտեսական պայմանները լուրջ հարված հասցրին մշակութային ոլորտին: Ամենազիլավոր պրորբեմներից մեկը նշված ոլորտում օրենսդրական դաշտի բացակայությունն է: Կառավարության քննարկման է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքի նախագիծը: Իսկ մշակման փուլում են գտնվում նաև հետևյալ օրենքների նախագիծերը՝ «ՀՀ թանգարանային ֆոնդի և թանգարանների մասին», «ՀՀ-ում գրադարանային գործի և գրադարանների մասին», «ՀՀ Կինոմատոգրաֆիային պետական աջակցության մասին», «Մշակութային արժեքների ներմուծման և դուրս բերման մասին» օրենքները:

49. 1998 թվականին Հայաստանում գործող թատրոնների թիվը հասնում է 21-ի: Հաշվարկված է, որ Հայաստանում տարվա ընթացքում անց է կացվում 2024 ներկայացում, որոնց ներկա են գտնվել 487 հազար մարդ: Թատրոնների մեջ հանրահայտներից է հանդիսանում է Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնը:

50. Հանրապետությունում կազմակերպվում են 2 տեսակի թատրոններ

պետական (Հանրապետական, մարզային և շրջանային) և ոչ պետական: Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կառուցվածքում գործում է 13 պետական թատրոններ և պետկրկես:

51. Մշակման փուլում է գտնվում կառավարության որոշման նախագիծը «ՀՀ թատերական մշակույթին սոցիալական և տնտեսական օգնություն ցուցաբերելու մասին»:

52. Հայաստանում տարվա ընթացքում կազմակերպվում է 579 համերգներ, մոտավորապես 97400 դիտորդների համար:

53. Հայաստանի Հանրապետության մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերով նախարարության համակարգում գործում են հետևյալ համերգային և երաժշտական անսամբլները.

- սիմֆոնիկ անսամբլը,
- ակադեմիական երգչախումբը,
- պետական կամերային նվագախումբ,
- լարային քառյակ,
- հոգևոր մշակույթի կենտրոնը,
- 3 երաժշտական ուսումնական հաստատություններ,
- ժողովրդական ստեղծագործության կենտրոնը,
- համերգային սրահը:

54. Շատ ազգային փոքրամասնություններ, որոնք ներկայացվել են Հայաստանում, ունեն իրենց համայնքներում էթնոգրաֆիական համույթներ: Հատկապես հանրահայտ է մանկական և մեծահասակների ուկրաինական երգչախումբը, որը գործում է Երևանում և Վանաձորում: Հայաստանում բացի ուկրաինական երգչախմբից, գործում են ասորական, ռուսական, սլավոնական, հունական ազգագրական որակավոր համույթները:

55. Ծանր տնտեսական իրավիճակն իր բացասական ազդեցությունն է բողոնում նաև գրադարանային գործի վրա, որի պատճառով հնարավոր չէ դրանք զինել նոր գրականությամբ: Նույնիսկ ամենախոշոր գրադարանները ի վիճակի չեն լրացնել իրենց ֆոնդը: Քննարկման փուլում է գտնվում «Հրատարակությունների պարտադիր օրինակի մասին» օրենքը:

56. Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35-րդ հոդվածը ամրագրում է յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը, միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք: Ոչ պետական ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության

կարգը սահմանվում է օրենքով: Նշված հարցի երաշխիքներ իրագործելու համար, նախ և առաջ, պետական քաղաքականության գործընթացում նշենք այն, որ Հայաստանի Հանրապետության 2000 թվականի պետությունների մասին օրենքում կրթության ոլորտին հատկացված է բավականին խոշոր գումար՝ 29,908,853.7 հազար դրամ: Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնությունների համար առանձին նախատեսված դպրոցներ գոյություն չունենալու փաստին, այնուամենայնիվ կան դպրոցներ, որտեղ հատուկ դասընթացներ են կազմակերպվում իրենց մայրենի լեզուներով: Չմոռանանք նաև թեքումով դպրոցները:

57. Հոգևոր մշակութային ոլորտում նախ սահմանադրության 36 և ապա 37 հոդվածները լիովին երաշխավորում են ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին ունենալ գրական, գեղարվեստական, գիտական և ստեղծագործական ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:

58. Այս առումով Ազգությունների միությունը իր ստեղծման օրվանից մինչև այսօր կազմակերպել է 30-ից ավելի միջոցառումներ, ինչպես նաև հանդիպումներ հանրապետության ղեկավարության, հոգևորականության, օտարերկրյա ղեկավարությունների, Եվրամիության ներկայացուցիչների հետ: Ազգությունների միության ջանքերով Երևանում սեպտեմբերին անցկացվեց գունագեղ խորագրով երաժշտական ֆեստիվալ, որին մասնակցում էին բոլոր էթնիկական խմբերի ներկայացուցիչները: Հերթական ֆեստիվալը հանդիսանում էր չորրորդը ըստ հերթականության: Իրականացված միջոցառումներից անհրաժեշտ է առանձնացնել արդեն երրորդ տարին անընդմեջ անցկացվող ազգային մշակույթների փառատոնը՝ նվիրված Հայաստանի անկախությանը: Սույն միջոցառումը վերածվել է ավանդույթի: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտական ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ Ազգությունների միությունը և Հայաստանի կոնֆլիկտների լուծման կենտրոնը հրատարակել են «Հայաստանի ազգությունները» ժողովածուն՝ ռուսերեն լեզվով: Ժողովածուն կազմվել է «էթնիկական-քաղաքական հակամարտությունների կարգավորման ազդեցությունը Հայաստանից արտագաղթը կանխելու հարցում» նախագծի շրջանակներում: Հիշյալ նախագիծը ՄԱԿ-ի կողմից ստացել է շնորհադրամ: Առաջին անգամ Հայաստանի ոչ բնիկ բնակչության դրությունը դարձել է հատուկ ուսումնասիրությունների առարկա: Ժողովածուի մեջ լուսաբանված են հարցերի որոշակի շրջանակ՝ հայերի հետ կոնկրետ էթնիկական խմբերի ունեցած պատմական կապերը, նրանց ներկայիս դրությունը, կարիքները, պահանջները և առաջարկությունները կյանքի պայմանների բարելավման, իրավունքների ընդլայնման

և պաշտպանության, Հայաստանի Հանրապետության պետական քաղաքական ու մշակութային կյանքին լիիրավ մասնակցելու վերաբերյալ: Հայաստանի ազգային համայնքների ներկայացուցիչները այդ ժողովածուն ուղարկել են իրենց ծագման երկիր: Հրատարակվել է նաև «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր» հիմնարար ուսումնասիրությունների I հատորը: Աշխատությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների՝ (եզդի քրդերի), ռուսների, հույների, ասորիների և բոշաների ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, էթնոմշակութային ժամանակակից հիմնախնդիրներին, որոնք առաջացել են հանրապետությունում իրականացվող վերափոխումների ընթացքում*: Բացի այդ 1994 թվականի հոկտեմբերին Ազգությունների միության կողմից խնդրագրեր են հղվել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, Ռուսաստանի, Ուկրաինայի, Հունաստանի, Իսրայելի, Գերմանիայի կառավարությունների ղեկավարներին և հոգևոր առաջնորդներին՝ Ազգությունների միության մշակութային կենտրոնի ստեղծմանն օժանդակելու խնդրանքով, 1996 թվականի սեպտեմբերին Ազգությունների միության մշակույթների փառատոնի առաջին փուլը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 5 ամյակին, 1997 թվականի ծրագրում՝ մարտին «Նովորոգ» քրդերի ազգային տոնը, ապրիլին՝ հայ-քրդական բարեկամության ընկերության շնորհանդես՝ քուրդ մտավորականության խորհրդի վարչության հետ համատեղ և այլն:

59. 1999 թ. գործում էր 98 թանգարաններ, որոնք սպասարկում էին 763900 այցելուների: Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանի թանգարանները փաստորեն զրկվել են անհրաժեշտ ներդրումներից և պետության կողմից ակնկալվող նյութական աջակցությունից:

60. Հայաստանի Հանրապետությունը երաշխավորվում է բոլորի հավասարությունը օրենքի առջև և հավասար պաշտպանություն, ավելացրած դրան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 38 և 39 հոդվածները ամենարդյունավետ կերպով նպաստում են դրա երաշխավորվածությանը:

61. Քաղաքացիական հասարակությունում իր դերի նշանակության մասին են խոսում զանգվածային լրատվամիջոցները: Մամուլի և զանգվածա-

* Հեղինակների խումբը դաշտային ազգագրական հետազոտություններ իրագործեց հանրապետության բոլոր մարզերի վերոհիշյալ փոքրամասնությունների շրջանում, որոնց աղբյուրները հիմք հանդիսացան սույն գրքի համար: Աշխատության մեջ ոչ միայն վեր են հանված հիշյալ ազգային փոքրամասնությունների զարգացման ընթացքի բարդույթները, այլև առաջադրված են դրանց հաղթահարման հնարավոր ուղիներն ու եղանակները՝ հիմնվելով թե՛ հետազոտման տվյալների և թե՛ միջազգային վավերագրերի վրա: Աշխատությունը ունի մանաշողական և կիրառական նշանակություն:

յին լրատվության միջոցների վերաբերյալ գործում է օրենք, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները ազատ են և գրաքննության չեն ենթարկվում, այնուհետև Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ունեն մամուլով և զանգվածային լրատվության մյուս միջոցներով իրենց տեսակետները, կարծիքները արտահայտելու, հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատապ և հավաստի լրատվություն ստանալու իրավունք: Հայաստանի Հանրապետությունում մամուլի և զանգվածային լրատվության միջոցների որևէ տեսակի մենաշնորհի չի թույլատրվում:

62. Մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները առաջնորդվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, հավասարության, մարդասիրության, տարակարծության, հանդուրժողականության, հարգանքի, խղճի ազատության սկզբունքներով և համամարդկային այլ արժեքներով, օժանդակում են հրապարակայնությանն ու ժողովրդավարությանը, մտքի, խոսքի, բազմակարծության ազատությանը:

63. Համաձայն մեր ունեցած տեղեկատվության, որը տրամադրել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը և Հայաստանի Հանրապետության նախագահին կից մարդու իրավունքների հանձնաժողովը, որևիցե վիճակագրական տվյալներ, որոնք վերաբերում են ազգային կամ ռասայական թշնամանք կամ երկպառակություն հարուցելուն, ազգային պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելու նպատակին ուղղված դիտավորյալ գործողություններ կատարելուն, ինչպես նաև քաղաքացիների ուղղակի կամ անուղղակի իրավունքների սահմանափակելուն կամ ուղղակի կամ անուղղակի առավելությունների սահմանելուն (ՀՀ գործող քրեական օրենսգրքի 69 հոդված), ապա որևէ բողոք և դատարանի կողմից ընդունված որոշում բացակայում են՝ այդպիսիք չլինելու պատճառով:

Հոդված 7

Կողմերը պետք է ապահովեն ազգային փոքրամասնության պարկառու յուրաքանչյուր անձի՝ խաղաղ հանրահավասարների, միությունների մեջ ընդգրկվելու, խոսքի, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքների հարգումը:

64. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26 հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ունեն խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունք: Այս հոդվածը վերաբարդրում է Մարդու իրավունքների հա-

մընդհանուր հռչակագրի և քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի 21-րդ հոդվածի համառոտ բովանդակությամբ:

65. Անցած 10 տարիների խճանկարը ցույց է տալիս, որ այս հարցում Հայաստանի իշխանությունները ականատես են եղել բազմաթիվ ցույցերի, երթերի, միտինգների, կապված անցումային ժամանակահատվածի հետ: Նշված ոլորտում քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարը, համաձայն տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 27 հոդվածի 4 կետի, իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծում է հանրահավաքներ, երթեր, ցույցեր և զանգվածային այլ միջոցառումներ անցկացնելու համար թույլտվություն տալու հարցը:

66. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25 հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմակերպելու, այդ թվում արհեստակցական միություններ ստեղծելու, և դրանց անդամագրվելու իրավունք:

67. Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների մինչև «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ուժի մեջ դնելու մասին» օրենքի պահանջի կիրարկումը ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված են եղել Հայաստանի Հրեական համայնքը, «Աթուր» ասորական ասոցիացիա», Հայաստանի հույների հանրապետական «Պոնտի» ընկերություն, ՀՀ քուրդ մտավորականության խորհուրդ, «Քուրդիստան կոմիտե», «Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպություն, ուղղափառ հավատացյալների հոգաբարձուների խորհուրդ, «Մեմորա» հրեական մշակութային կենտրոն», Հայաստանի և Արցախի հույների հասարակական կազմակերպություն, Հայաստանի հույների «Պատրիդա», «Հայաստանի Հանրապետության ազգությունների միություն», ՀՀ գերմանացիների «Ադրբայ» համայնք, «Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա», Հայաստանի Հույների ֆեդերացիա, «Բերյոզկա» ռուսների բարեգործական միություն, Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական հասարակական կազմակերպություն, Եզդիաքրդական համայնք, «Ֆաէտոն» հունական համայնք, «Սլավոնական մշակութային, սպորտային-առողջարարական կենտրոն», Աշխարհի եզդիների ազգային միություն, «Ասորական «Աշուր» երիտասարդական կենտրոն», Վանաձորի «Պոնտի» հունական համայնք, Ալավերդու «Ռոմեո» հունական համայնք, «Անաստասի հունական համայնք, Հայաստանի «Երևանի բելառուսների համայնք «Բելառուս», Նոյեմբերյանի «Օլիմպիոս» հունական համայնք, ՀՀ ռուսական համայնքների կոնգրես

մշակութային հասարակական կազմակերպություն, «Եզդիների ազգային կոմիտե» հասարակական կազմակերպությունները»:

Հոդված 8

Կողմերը պարտավորվում են նաևաչել ազգային փոքրամասնության պարկանող յուրաքանչյուր անձի՝ սեփական կրոնը կամ հավատը բացահայտ դավանելու, ինչպես նաև կրոնական հաստատություններ, կազմակերպություններ և ընկերություններ սրեղծելու իրավունքը:

68. Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23 հոդվածի յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք: Կրոնի և համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ Սահմանադրության 45 հոդվածում նախատեսված հիմքերով: Համաձայն ՀՀ Սահմանադրության 45 հոդվածի մարդու և քաղաքացու առանձին իրավունքներ և ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 17, 19, 20, 39, 41-43 հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակվորապես սահմանափակվել ռազմական դրության ժամանակ կամ Սահմանադրության 55 հոդվածի 14 կետով նախատեսված դեպքերում:

69. Սույն գեկույցի 46, 47 կետերում արժարծվել են այն հարցերը, որոնք վերաբերում են հոգևոր ոլորտին:

70. Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատված է պետությունից: Պետք է նշել, որ պետական և կրոնական կազմակերպությունների միջև հարաբերությունները կարգավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիզորված պետական կառավարման մարմինը՝ Կրոնի գործերով պետական խորհուրդ:

71. Հայաստանի Հանրապետության խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքի դրույթներով սահմանվում է, որ այն կրոնական կազմակերպությունները, որոնց հոգևոր կենտրոնները գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, չեն կարող ֆինանսավորվել այդ կենտրոնների կողմից: Այնուհետև մյուս դրույթները զարգացնում են այն միտքը, որ կրոնական կազմակերպությունները չեն կարող ֆինանսավորվել կուսակցությունների կողմից և ֆինանսավորել վերջիններիս: Այստեղից արդեն հետևում է պարզ եզրակացություն, որ Հայաստանի Հանրապետությունում չկան պետության կողմից ֆինանսավորվող կամ

* Ազգային փոքրամասնությունների շուրջ 13 հասարակական կազմակերպություններ վերագրանցվել են՝ համաձայն «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ուժի մեջ դնելու մասին» օրենքի դրույթներին:

ազգակցության ուղղակի կամ անուղղակի ձևերից օգտվող կրոնական կազմակերպություններ: Հիշյալ օրենքը մանրամասն տալիս է կրոնական կազմակերպությունների ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրները և դրանց օգտագործման ուղղվածությունը:

Հոդված 9

1. Կողմերը պարտավորվում են նաևաչել, որ ազգային փոքրամասնության պարկանող յուրաքանչյուր անձի իր կարծիքն արտահայտելու իրավունքը ներառում է կարծիքներ ունենալու և փոքրամասնության լեզվով քննակարկություն և զաղափարներ սրանալու և հաղորդելու ազատությունը՝ անկասի պետական իշխանությունների միջամտությունից և սահմաններից: Իրենց իրավական համակարգի շրջանակներում, Կողմերը պետք է ապահովեն, որպեսզի լրարվական միջոցների մարչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պարկանող անձիք չենթարկվեն խարկանության:

2. Առաջին կետը չի արգելում, որպեսզի Կողմերը, հնչուն ռադիոյի և հեռուստահեռարչակման կամ կինամարոգրաֆիայի ձեռնարկությունների համար արրոնագրում պահանջեն՝ առանց որևէ խարկանության և օրչեկելի չափանիշների հիման վրա:

3. Կողմերը չպետք է արգելեն ազգային փոքրամասնությունների պարկանող անչանց կողմից րպագիր մամուլի միջոցների սրեղծումն ու օգրարթծումը: Հնչուն ռադիոյի և հեռուստահեռարչակման իրավական դաչրի շրջանակներում, որքանով, որ դա հնարավոր է, և հաչվի առնելով 1-ին կետի դրույթները, Կողմերը, ազգային փոքրամասնությունների պարկանող անչանց համար, պետք է երաչիավորեն լրարվական սեփական միջոցների սրեղծման և օգրագործման հնարավորությունը:

4. Իրենց իրավական համակարգերի շրջանակներում, Կողմերը պետք է համարպարասիան /աղեկվար/ միջոցներ ձեռնարկեն ազգային փոքրամասնությունների պարկանող անչանց համար լրարվական միջոցների մարչելիությունը դյուրացնելու, ինչպես նաև հանդուրժողականությունը իրախտաչելու և մչակութային բազմակարծությունը ապահովելու համար:

72. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը խոսքի ազատությունը՝ որպես մարդու կարևոր իրավունքներից մեկը, ամրագրել է իր 24 հոդվածում: Համաձայն հիշյալ հոդվածի յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքը պնդելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն: Այնուհետև նշվում է՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և զաղափար-

ներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

73. Հայաստանի Հանրապետությունում գործում է «Զանգվածային լրատվամիջոցների մասին» օրենք և Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենք, որը ընդունվել է 2000 թվականի հոկտեմբերի 9-ին: (Այս օրենքի որոշ դրույթներ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող): Ըստ այդ օրենքի սահմանվում է հեռուստառադիոընկերությունների կարգավիճակը, դրանց հիմնադրման, արտոնագրման և ղեկավարման կարգը, իրավունքների և պարտականությունների առաջացման հիմքերը և այլն:

74. Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի 5 հոդվածում սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձարկվող հեռուստառադիոհաղորդումների լեզուն հայերենն է, բացառությամբ այդ օրենքով սահմանված դեպքերի: Օտար լեզուներով հեռուստառադիոհաղորդումները, գեղարվեստական, վավերագրական և մուլտիպլիկացիոն կինոնկարները, ինչպես նաև հայերեն հաղորդումների օտարալեզու դրվագները հեռարձակվում են հայերեն համաժամանակյա թարգմանությամբ՝ ձայնային կամ լուսագրային եղանակով: Հարկ է նշել, որ հանրային հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնություններին երաշխավորվում է շաբաթական մեկ ժամ եթեր, իսկ հանրային ռադիոյով օրեկան մեկ ժամ:

75. Հայաստանի Հանրապետության Հեռահաղորդակցության մասին օրենքի 8-րդ հոդվածը ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռահաղորդակցության օպերատորների կողմից ընդունվող և հաղորդվող գրավոր հաղորդագրությունների հասցեները ձևակերպվում են հայերենով, իսկ տեքստը, տեխնիկական հնարավորության դեպքում, ցանկացած լեզվով և այբուբենի տառերով: Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ուղարկվող հաղորդագրությունները, տեխնիկական հնարավորությունների դեպքում, ձևակերպվում են ցանկացած լեզվով և այբուբենի տառերով: Նշված օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է հեռահաղորդակցության բնագավառում գործունեության սկզբունքները.

ա/ հեռահաղորդակցության ծառայություններից օգտվողների իրավունքների հավասարություն

բ/ հեռահաղորդակցության ցանցերով և տեխնիկական միջոցներով հաղորդումների փոխանցման ազատության և գաղտնիության ապահովում

գ/ հեռահաղորդակցության ցանցերի և տեխնիկական միջոցների, ռադիոհաճախության տիրույթի և հեռահաղորդակցության արբանյակների ուղեծրային դիրքերի պետական պաշտպանություն:

76. Տպագիր մամուլի կտրվածքում նշենք այն, որ Հայաստանում ռուսերեն լեզվով հրատարակվում են 10 թերթ և ամսագիր: Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների մինչև 1999 թ. ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված են եղել ազգային փոքրամասնությունների հետևյալ լրատվամիջոցները (թերթեր և հեռապատկան հրատարակություններ)

1. «Ռուսկիյ դոմ»-թերթը (Ռոսիյա համայնք)

2. «Դնիպրո» շաբաթաթերթը (ուկրաինական բարեգործական ֆոնդը)

3. «Ռիա Տագա» թերթը (քրդական համայնքը)

4. «Քրդերի ձայն» թերթը (Եզդիների ազգային միություն)

5. «Բարեկամություն» ամսագիրը (հայ-քրդական բարեկամության հասարակություն)

6. «Բոտան» շաբաթաթերթը (Քրդստանի կոմիտե)

7. «Շանգալ» (եզդիների ազգային համայնք)

8. «Սինճար» 15-օրյա թերթը (քուրդ-եզդիական բարեկամության համայնք)

9. «Կոհելետ» (հրեական համայնք)

10. «Պանագիա» ամսաթերթը

Ներկա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված են ազգային փոքրամասնությունների հետևյալ լրատվության միջոցները՝

1. «Դնիպրո-Սլավոտիչ» շաբաթաթերթը («Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա, հիմնադրվել է 12.02.2001)

2. «Կոհելետ» պաշտոնաթերթ (Հայաստանի հրական կրոնական համայնք, հիմնադրվել է 25.12.2000)

3. «Լալըշ» թերթ («Եզդիների ազգային կոմիտե» հասարակական կազմակերպություն, գրանցվել է 19.12.2000)

77. Հայաստանում այսօրվա դրությամբ գործում են 1116 զանգվածային լրատվության միջոցներ, այդ թվում՝ 193 հեռուստատեսային ընկերություններ, 55 ռադիոընկերություններ:

78. Ռադիոյով եթեր են հեռարձակվում քրդերեն, եզդիերեն, ռուսերեն, վրացերեն լեզուներով ռադիոհաղորդումներ: Խառը ամուսնությունների ներկայացուցիչներին տրամադրվում է հնարավորություն լսելու ռադիոհաղորդումներ աղբյուրներեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով: Հաշվի առնելով Իրանի հետ առևտրատնտեսական կապերի ակտիվությունը կավելացվի պարսկերեն լեզվով ռադիոհաղորդումների տևողությունը:

Հոդված 10

1. Կողմերը պարտավորվում են մասնաչել, որ ազգային փոքրամասնության պարկանոդ յուրաքանչյուր անջ, անջնական կյանքում և հասարակական վայրերում, իր փոքրամասնության լեզվից, բանավոր և գրավոր, անարգել օգրվելու իրավունք ունի:

2. Ավանդապես կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պարկանոդ անջանցով բնակեցված վայրերում, եթե այդ անջինք խնդրել են, և այնտեղ, որտեղ այդպիսի խնդրանքը համապարասխանում է իրական կարիքներին, Կողմերը, որքանով որ հնարավոր է, պետք է չգրեն ապահովել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան այդ անջանց և վարչական իշխանությունների միջև հարաբերություններում օգրագործել փոքրամասնության լեզուն:

3. Կողմերը պարտավորվում են երաշխավորել ազգային փոքրամասնության պարկանոդ յուրաքանչյուր անջի իրավունքը, ամենակարճ ժամկետներում, իրեն հասկանալի լեզվով, տեղեկություն սրանալ իր շերտակալության պարմատների, իր դեմ հարուցված մեղադրանքների բնույթի և պարմատների մասին, ինչպես նաև իր պաշտպանությունը իրականացնել այդ լեզվով, դրա համար անհրաժեշտության դեպքում սրանալով թարգմանչի անվճար ծառայություն:

79. Համաձայն Հայաստանի Հանրապետության լեզվի մասին օրենքի Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է: Սա ինչպես նշել էինք զեկույցի նախորդ մասերում չի հանդիսանում խտրականության միջոց, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37 հոդվածը այս առումով երաշխավորում է ազգային փոքրամասնությունների իրավունքը պահպանելու, զարգացնելու անարգել իրենց մշակութային ավանդույթները, լեզուն և այլն:

80. Ինչ վերաբերում է զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված վայրերում վարչական իշխանությունների հետ իրենց հարաբերություններում փոքրամասնության լեզուն օգտագործելուն, ապա նման իրական կարիքների առկայության դեպքում հնարավոր է այդպիսի պայմանների ստեղծումը, բայց քանի որ ազգային փոքրամասնությունների մեծամասնությունը ազատորեն տիրապետում է հայերենին, ռուստի և նման պրորլեմի առաջ Հայաստանի իշխանությունները առայսօր չեն կանգնել:

81. Անձի քրեադատավարական երաշխիքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով: Հա-

ստանի Հանրապետության Սահմանադրության 18 հոդվածը սահմանում է որ յուրաքանչյուր որ ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն չի կարելի ձերբակալել, խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով: Նա կարող է կալանավորվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: Սահմանադրության 40 հոդվածը նշակում է, որ յուրաքանչյուր որ ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցուցաբերվում է անվճար: Յուրաքանչյուր որ ունի ձերբակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու իրավունք:

82. Քրեական դատավարության օրենսգրքի 130 հոդվածի համաձայն ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 96 ժամից ավելի, որի ընթացքում պետք է նրան մեղադրանք առաջադրվի: 136 հոդվածի 3 կետի համաձայն քրեական վարույթն իրականացնող մարմինը կասկածյալին կամ մեղադրյալին հայտարարում է խափանման միջոց կիրառելու մասին իր որոշումը և անմիջականորեն նրան է հանձնում որոշման պատճենը: 203 հոդվածին համաձայն մեղադրանքը պետք է առաջադրվի տվյալ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի կողմից որոշումն ընդունելու պահից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, սակայն բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մեղադրյալի ներկայանալու կամ նրան բերման ենթարկելու օրը: Քննիչը հավաստիանալով մեղադրյալի ինքնության մեջ, նրան հայտարարում է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և բացատրում առաջադրված մեղադրանքի էությունը:

83. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր մասի 15 հոդվածի համաձայն քրեական դատավարությունը տարվում է հայերեն: Քրեական դատավարության ընթացքում յուրաքանչյուր որ, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունի հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է: Քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական դատավարության լեզվին չտիրապետող քրեական դատավարությանը մասնակցող անձանց անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իրենց բոլոր իրավունքները: Քրեական դատավարության լեզվին չտիրապետող համապատասխան անձանց տրվում է օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճեններն այն լեզվով, որին նրանք տիրապետում են: Եվ վերջում նշվում է, որ այլ լեզվով փաստաթղթերը քրեական գործին կցվում են դրանց հայերեն թարգմանությունների հետ միասին:

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պարկանոդ յուրաքանչյուր անձ ունի իր անունը, ազգանունը և հայրանունը փոքրամասնության լեզվով օգտագործելու, ինչպես նաև դրանց պաշտոնական ճանաչման իրավունք՝ րվյալ երկրի իրավական պահանջներին համապարասիում:

2. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պարկանոդ յուրաքանչյուր անձ, իր փոքրամասնության լեզվով, հասարակության համար տեսանելի, մասնավոր բնույթի նշումներ, գրություններ և այլ տեղեկատվություն տեղադրելու իրավունք ունի:

3. Ազգային փոքրամասնության պարկանոդ անչանց զգալի քվարանակով ավանդապես բնակեցված տարածքներում, Կողմերը, իրենց իրավական համակարգերի շրջանակներում, անհրաժեշտության դեպքում նաև ներառյալ այլ տեղությունների հետ կնքված համաշայնագրերը, ինչպես նաև հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովեն ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով, ցուցանակների տեղադրումը, երբ այդպիսի նշումների բավարար կարիք կա:

84. Համաձայն Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 58 հոդվածի երեխային անուն է տրվում ծնողների համաձայնությամբ, հայրանուն է տրվում հոր անունով, իսկ սույն օրենսգրքի 57 հոդվածով նախատեսված դեպքերում՝ որպես հայր գրանցված անձի անունով: Իսկ 59 հոդվածի դրույթներով երեխաների ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով: Երբ ծնողները տարբեր ազգանուններ ունեն, երեխային տրվում է մոր կամ հոր ազգանունը ծնողների համաձայնությամբ, իսկ համաձայնություն չլինելու դեպքում՝ խնամակալական և հոգեբարձուական մարմինների ցուցումով:

85. Ներպետական օրենսդրությունը նախատեսում է անհատի կողմից անունը, ազգանունը և հայրանունը պահպանելու կամ փոխելու, կամ նախկին անունը, ազգանունը և հայրանունը վերականգնելու հնարավորությունը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 22-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացին իրավունքներ և պարտականություններ է ձեռք բերում ու իրականացնում իր անվամբ, որ ներառում է նրա ազգանունը և անունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը: Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ քաղաքացին կարող է օգտագործել կեղծ անուն (մտացածին անուն): Քաղաքացին իրավունք ունի օրենքով սահման-

ված կարգով փոխել իր անունը: Անունը փոխած քաղաքացին իրավունք ունի պահանջել, որպեսզի իր հաշվին համապատասխան փոփոխություններ մտցվեն իր նախկին անվամբ ձևակերպված փաստաթղթերում: Ծննդյան ժամանակ քաղաքացու ստացած անունը, ինչպես նաև նրա անվան փոփոխությունը ենթակա են գրանցման՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար սահմանված կարգով: Այնուհետև սահմանվում է, որ այլ անձի անվամբ իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել չի թույլատրվում:

86. Հայաստանում գործում է գովազդի մասին օրենք (ապրիլի 30, 1996 թ.): Հայաստանի Հանրապետության գովազդի լեզուն հայերենն է: Անհրաժեշտության դեպքում, որպես լրացում, գովազդատուի շարադրանքը կարող է գուգորդվել նաև այլ լեզուներով՝ համեմատաբար փոքր տառերով: Սույն օրույթը չի տարածվում տպագրվող թերթերի, հատուկ հրատարակությունների, ապրանքանիշերի և մակնիշների վրա: Գովազդի հայերեն շարադրանքը տեղեկատվության ծավալով չպետք է զիջի այլ լեզվով հրատարակվող տարբերակին: Հոդված 8-ում նշվում է, որ արգելվում է այն գովազդը, որում խախտվում է գովազդի պատշաճությունը, այն է՝

- ա) վարկաբեկում է բարոյականության համընդհանուր և ազգային նորմերը
- բ) պարունակում է ռասային, ազգությանը, մասնագիտությանը կամ սոցիալական ծագմանը, տարիքային խմբին կամ սեռին, լեզվին, կրոնական կամ այլ համոզմունքներին վերաբերող վիրավորական արտահայտություններ, համեմատություններ և պատկերներ և այն:

Արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով: Արտաքին գովազդի ծավալը, քանակությունը և տեղաբաշխման կարգը որոշում է տեղական ինքնակառավարման մարմինները:

87. Ինչ վերաբերում է ավանդական տեղական անվանումներին, փողոցների անվանումներին, ապա նման իրավասություն, համաձայն ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենքի 12 հոդվածի 9 կետի, ունի համայնքի ավագանին, որտեղ նշվում է, որ ավագանին համաձայնություն է տալիս համայնքի փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային, այլ ձեռնարկությունների ու կազմակերպությունների անվանմանը և վերանվանմանը, տների, շենքերի և այլ շինությունների համարակալմանը: Իսկ համայնքի ղեկավարը անվանում և վերանվանում է համայնքի փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կր-

թական, մշակութային, այլ ձեռնարկություններն ու կազմակերպությունները: Հայաստանի Հանրապետության մեկ այլ՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքի 5 հոդվածը սահմանում է, որ մեկ բնակավայր ընդգրկող համայնքին տրվում է այդ բնակավայրի անվանումը, 2 և ավելի բնակավայր ընդգրկող համայնքին՝ առավել բնակչություն ունեցող բնակավայրի անվանումը:

Իսկ 6-րդ հոդվածը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման փոփոխումը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության մարզային բաժանման, մարզերի սահմանների, վարչական կենտրոնների, համայնքների, թաղային համայնքների, բնակավայրերի և թաղամասերի տարածքների սահմանների փոփոխումը, նոր համայնքների ստեղծումը կամ նոր բնակավայրերի հիմնումը, բնակավայրերի դասակարգման փոփոխումը, ինչպես նաև մարզերի, բնակավայրերի, թաղամասերի, համայնքների և թաղային համայնքների անվանումներն ու վերանվանումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ՝ սույն օրենքի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով: Այնուհետև նշվում է, որ բնակավայրերի վերանվանումները կատարվում են միայն պատմական անվանումները վերականգնելու, օտար, ոչ բարեհունչ և կրկնվող անվանումները վերացնելու նպատակով՝ հաշվի առնելով բնակավայրի բնակչության կարծիքը:

Հոդված 12

1. *Կողմերը, անհրաժեշտության դեպքում, կրթության և գիտական ուսումնասիրությունների բնագավառում, պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի փերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար:*

2. *Այս կոնկրետությամբ, Կողմերը, մասնավորապես պետք է ադեկվատ հնարավորություններ փրամադրեն ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները փարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև:*

3. *Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պարկանող անձանց համար, բոլոր մակարդակներով, ապահովել կրթության մարչելիության հավասար հնարավորություններ:*

88. Կրթության իրավունքը սոցիալ տնտեսական իրավունքների շարքում զբաղեցնում է կարևորագույն տեղ: Հայաստանի Հանրապետության Մահ-

մանադրության 37 հոդվածը կոնկրետ մատնանշում է սույն կոնվենցիայի հոդված 12-ում ամրագրված իրավունքների երաշխավորվածությունը:

89. Մահմանադրության 35 հոդվածը նշում է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք: Ոչ պետական ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

90. Գործում է Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենք, համաձայն որի, սահմանվում են կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և կրթության համակարգի կազմակերպակիրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը:

91. Կրթության բնագավառում պետական քաղաքականության մասին խոսելիս՝ հիմնարար է այն դրույթը, որ Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան:

92. Ելնելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից (կրթության մարդասիրական բնույթը, որոշակի ոլորտներում համապատասխան աշխարհայացքի ձևավորումը, կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը, միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը, ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը, ուսումնական հաստատությունների ազգամիտ ինքնավարությունը, և վերջապես կրթության մատչելիությունը, շարունակականությունը և այլն), Հայաստանի Հանրապետությունը ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով: Պետությունը նպաստում է նաև, որ կրթական գործունեությանը մասնակիցի սվյուրախայությունը:

93. Կրթության մասին օրենքով մանրամասն սահմանվում է Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը, պետական կրթական չափորոշիչները, կրթական ծրագրերը և ձևերը, ուսումնական հաստատությունների տիպերը, կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները:

94. Եթե հաշվի առնենք նախադպրոցական կրթության հիմնական խնդիրները, ապա կնկատենք, որ նրանց շարքում ամբազրված է հետևյալը՝ մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովում:

95. Պետական ուսումնական հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության կամ պետական համապատասխան լիազորված մարմնի: Համայնքային ուսումնական հաստատության հիմնադիրը համայնքն է՝ ի դեմս համայնքի ինքնակառավարման մարմնի: Ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք: Պետական ուսումնական հաստատություններն ստեղծվում են դրանց կանոնադրությունները հիմնադրի կողմից հաստատվելու պահից, իսկ ոչ պետական ուսումնական հաստատություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ: Այդ ուսումնական հաստատությունները ստեղծված են համարվում օրենքով սահմանված կարգով՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնում գրանցման պահից:

96. Անդրադառնալով կրթության համակարգի կառավարման հարցերին, տվյալ պահին մեզ հետաքրքրող ուսումնական հաստատությունների մանկավարժական և ղեկավար կադրերի որակավորման կարգին, ապա այդ հարցի ամբողջական կյանքի կոչելու պարտականությունը դրված է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի վրա:

97. Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններն իրավունք ունեն համագործակցել ուսումնական, գիտական և այլ կազմակերպությունների հետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

98. Ներկա պայմաններում կրթության համակարգի տարբեր աստիճաններում սովորում են 674000 մարդուց ավելին, որի մեծամասնությունը սովորում է պետական ուսումնական հաստատություններում: Իսկ դա նշանակում է, որ բնակչության 20%-ից ավելին ներգրավված են կրթության համակարգում:

99. Վիճակագրության նախարարության տվյալներին համապատասխան (1998-1999թթ) նախադպրոցական հաստատությունների ընդհանուր թիվը հասնում է 856-ի, որոնցում սովորողների թիվը՝ 56604, դաստիարակների թիվը՝ 7785, իսկ պետական բյուջեից հատկացվող գումարը 22,7 մլն դրամ, միջնակարգ դպրոցների թիվը՝ 1459, որոնցում սովորողները կազմում են 603100, իսկ ուսուցիչների թվաքանակը՝ 63000: Այս ոլորտին բյուջեից հատկացվող դրամաքանակը կազմում է 10326,1 մլն դրամ: Ոչ պետական ուսումնական հաստատությունների թիվը կազմում է 26, նրանում սովորողներինը՝ 1590: Մասնագիտական տեխնիկական ուսումնական հաստատությունների թիվը կազմում է 65, նրանում սովորողների թիվը՝ 4200, ուսուցիչների թիվը՝ 1809, իսկ բյուջեից այս ոլորտին հատկացվող գումարը կազմում է 476,2 մլն դրամ և այլն:

100. Հայաստանում են սովորում նաև 1039 օտարերկրյա ուսանողներ: 1999 թվականին բուհեր են ընդունվել 307 օտարերկրացիներ, որոնց 39 %-ը կազմում են կանայք:

101. Ուսուցման լեզվի 98.1 %-ը հայերենն է, ուսանողների 1.7 %-ը ստանում են ռուսական կրթություն, իսկ 0.2 %-ը այլ լեզուներով:

102. Լեզվի մասին օրենքով (17.04.93թ.) նախատեսված է, որ ազգային փոքրամասնությունների համայնքներում ընդհանուր կրթությունը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով պետական ծրագրերով և պետության հովանավորությամբ հայերենի պարտադիր ուսուցմամբ: Իսկ այդ օրենքի հոդված առաջինը հռչակում է, որ «Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է իր տարածքում ազգային փոքրամասնությունների կողմից իրենց լեզվով ազատ օգտագործումը»:

103. Բացի հայկական ընդհանուր միջնակարգ դպրոցներից, Հայաստանում այժմ գործում է 3 ռուսական դպրոց, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը: Նշված դպրոցների մեծամասնությունում դասավանդվում է ռուսերեն: Բացի այդ 12 դպրոցներում կա ռուսերեն ուսուցման սեկտոր: Այն շրջաններում, որտեղ քոլերի թիվը բավականին շատ է որոշ դասարաններում դասավանդվում է քրդերեն լեզու: Թիվ 74 միջնակարգ դպրոցում Երևանի դասավանդվում է հույներեն, իսկ թիվ 8 դպրոցում ասորերեն: Դպրոցներում դասավանդվող օտար լեզուներից կարելի է առանձնացնել գերմաներենը, անգլերենը, ֆրանսերենը, իսպաներենը, արաբերենը և պարսկերենը: ԵՊՀ-ում արևելագիտական ֆակուլտետում գործում են բուրբերեն և պարսկերեն բաժինները:

Հողված 13

1. Իրենց կրթական համակարգերի շրջանակներում, Կողմերը պետք է ճանաչեն, որ ազգային փոքրամասնության պարկանող անչիք իրավունք ունեն սրեղծել և ղեկավարել իրենց սեփական մասնավոր կրթական և վերապարաստման հաստատությունները:

2. Այս իրավունքի իրագործումը Կողմերի վրա ոչ մի ֆինանսական պարտավորություններ չի դնում:

104. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35 հոդվածում հիշատակվում է, որ Հայաստանի Հանրապետությունում մասնավոր ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով՝ կրթության մասին օրենքով: Ինչպես արդեն զեկույցի նախորդ հոդվածում նշեցինք ոչ պետական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպարական ձև: Ոչ պետական ուսումնական հաստատությունները ստեղծվում են դրանց հիմնադրի որոշմամբ և կրթության պետական կառավարման լիազորված մարմնում գրանցման պահից: Ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք: Ոչ պետական ուսումնական հաստատությունները ի տարբերություն պետականի, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը կրթական գործունեություն իրականացնելու իրավունք են ձեռք բերում լիցենզիա ստանալու պահից, եթե ապահովված են կրթական գործունեության լիցենզավորման մի շարք պահանջներ: Այսպես օրինակ՝ հիմնական մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմ, լաբորատոր բազա և ուսումնական տարածք, ուսումնամեթոդաբանական ապահովում, գրադարանային-տեղեկատվական համակարգ և այլն: Կրթական գործունեության լիցենզիան տալիս է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ փորձաքննության արդյունքների հիման վրա, իսկ լիցենզավորման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հողված 14

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պարկանող յուրաքանչյուր անչի իրավունքը՝ սովորելու իր փոքրամասնության լեզուն:

2. Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պարկանող անչանցով քնակեցված փարածքներում, բավարար կարիքի ղեպքում, Կողմերը, հնարավորությունների սահմաններում և իրենց կրթական համակարգերի շրջանակներում, պետք է երաշխավորեն,

ազգային փոքրամասնությունների պարկանող անչանց համար, իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն սրանալու աղեկվար հնարավորություններ:

3. Սույն հողվածի 2-րդ պարբերության դրույքները չպետք է իրագործվեն ի վնաս պաշտոնական լեզվի ուսուցմանը և դասավանդմանը:

105. Փոքրամասնությունների լեզվական ինքնակենցաղության պահպանման և զարգացման համար հնարավորության ստեղծմանն է ուղղված ազգային փոքրամասնությունների անդամների իրավունքը սովորելու իրենց մայրենի լեզուն: Այս դրույթը նախատեսված է «Լեզվի մասին» ՀՀ օրենքով:

106. Համաձայն կրթության և գիտության նախարարության տրամադրած տվյալների Երևան քաղաքի դպրոցներում ուսումնասիրվում են մի քանի օտար լեզուներ: Այսպես օրինակ, Երևանի թիվ 62, 88 դպրոցներում օտար լեզուներից ուսումնասիրվում են ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, իսկ 106, 133, 134, 141, 163, 186, 90, 91105, 116, 152 և այլ դպրոցներում՝ ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն: Երևանի թիվ 89 դպրոցում բացի ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, լեզուներից ուսումնասիրվում է նաև վրացերեն: Երևանի թիվ 74 դպրոցում օտար լեզուներից ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուների հետ մեկտեղ ուսումնասիրվում է նաև հունարեն, իսկ թիվ 173 և 129 դպրոցներում՝ արաբերեն: Երևանի թիվ 78 և 59 դպրոցներում ուսումնասիրվում են հետևյալ օտար լեզուները՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և պարսկերեն, իսկ թիվ 83 դպրոցում՝ ռուսերեն, անգլերեն և իտալերեն: Երևանի թիվ 149 դպրոցում ուսումնասիրվում են հետևյալ օտար լեզուները՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, պարսկերեն և իսպաներեն:

Հողված 15

1. Կողմերը պետք է անհրաժեշտ պայմաններ սրեղծեն ազգային փոքրամասնությունների պարկանող անչանց արդյունավետ մասնակցությունը մշակութային, հասարակական և տնտեսական կյանքում, ինչպես նաև պարկանող գործունեության մեջ, մասնավորապես, իրենց առնչվող հարցերում, ապահովելու համար:

107. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց մշակութային կյանքին արդյունավետ մասնակցության վերաբերյալ տես հողված 6 (48-63 կետեր):

108. Պորբեմներից շատերը ազգային փոքրամասնությունների իրավունքների իրականացման ոլորտում պայմանավորված է միայն ծանր տնտեսական դրությամբ, որը լիովին թույլ չի տալիս հաշվի առնել նրանց պահանջները սոցիալական ոլորտում, աշխատանքային զբաղվածում:

թյան, մշակույթի, կրթության և առողջապահության ոլորտներում, որտեղ և կենտրոնացած են ազգային փոքրամասնությունների հիմնական շահերը: Բացի այդ ազգային փոքրամասնությունների մասին օրենքի նախագծով նախատեսված են ազգային փոքրամասնությունների քաղաքական, տնտեսական, սոցիալական, դատական, էթնիկական, լեզվական, մշակութային և խղճի, մտքի և դավանանքի իրավունքներ, կրթության իրավունքի ապահովում և այլն, նախատեսված են նաև նորմեր, որոնք երաշխավորվում են նրանց իրավունքը մասնակցելու պետության կառավարմանը: Այդ նպատակով կառավարության կառուցվածքում պետք է ստեղծվի ազգային փոքրամասնությունների հարցերի գծով վարչություն:

109. Այժմ փոփոխություններ են նախապատրաստվում ինչպես ընտրական օրենքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում: Անհրաժեշտություն է նաև այն, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ներգրավվեն կառավարական, դատական և դատական ու տեղական վարչական կառույցների աշխատանքներին: Այսօր ազգային փոքրամասնությունների մոտ 15 ներկայացուցիչներ զբաղեցնում են գյուղական վայրերում, տեղական ինքնակառավարման մարմիններում դեկավար պաշտոններ: Նախատեսվում է, որ շուտով տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կծնափոխվեն կոմիտեներ և համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ: Ազգային փոքրամասնության ներկայացուցիչներից կարող են հասարակական հիմունքներով ստեղծվել նաև խորհրդատվական ծառայություններ, որոնց ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է համապատասխան մարմինների կողմից:

110. 1999 թվականին փետրվարի 17-ին ընդունվել է ընտրական օրենսգիրքը: Համաձայն ՀՀ Սահմանադրության ՀՀ քաղաքացիները ունեն ընտրական իրավունք, անկախ ազգային, ռասայական, սեռական, լեզվական պատկանելությունից, հավատքից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք: Ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակումները շարադրված սկզբունքների առումով հետապնդվում է օրենքով:

Հոդված 16

1. Կողմերը պետք է չեղնակա մնան այնպիսի միջոցներից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնությունների պարկանոց անջանցով և նպարակ ունեն սահմանափակել սույն շրջանակային Կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքները և ազարությունները:

111. Հայաստանում վերջին ժամանակներս մնան տարածքային փոփոխություններ չեն արձանագրվել, որոնք կտեղաշարժեին բնակչության կառուցվածքային կազմը: «ՀՀ Վարչատարածքային բաժանման մասին» օրենքը հաշվի է առել ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ էթնիկական, լեզվական և այլ առանձնահատկությունները բաժանումն իրագործելիս:

Հոդված 17

1. Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնությունների պարկանոց անջանց իրավունքը՝ հասարակել և պահպանել ազար և խաղաղ միջսահմանային շփումներ այլ պետություններում օրինական կերպով գրեմոց անջանց հեյր, մասնավորապես նրանց հեյր, ուլքեր ունեն ընդհանուր էթնիկական ինքնություն, լեզվական, կրոնական կամ մշակութային ընդհանուր ժառանգություն:

2. Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնությունների պարկանոց անջանց՝ ոչ-կառավարական կազմակերպությունների գործունեությանը, ազգային և միջազգային մակարդակներով, մասնակցելու իրավունքը:

112. Ներկայումս իր 4 հարևաններից միայն 2-ի (Վրաստան և Իրան), հետ է որ հնարավոր է միջսահմանային համագործակցություն:

113. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքների պաշտպանության մասին ԱՊՀ կոնվենցիան սահմանում է, որ «Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ պարտավորվում է ապահովել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար իրավունք անխոչընդոտ կերպով շփումներ հաստատելու իրենց միջև, ինչպես նաև կապեր սահմանելու իրավունքը քաղաքացիների և պետությունների կազմակերպությունների հետ, որոնց հետ նրանք ունեն ընդհանուր էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական համոզմունքների ծագում»:

114. Ազգային փոքրամասնությունների շփման իրավունքը, այդ թվում նաև անդրսահմանային, ենթադրում է պետության պարտականությունը չխոչընդոտել մնան շփումներին և չհետապնդել այդ անձանց՝ այնքանով, որ պետությունը չմիջամտի այդ իրավունքի իրականացման գործում: Այս իրավունքի իրականացումը կարող է սահմանափակվել միայն այն դեպքերում, որոնք նախատեսված են օրենքով և համապատասխանում են միջազգային ստանդարտներին:

115. Հիշյալ կոնվենցիայի 7-րդ հոդվածը սահմանում է ազգային փոքրամասնությունների խաղաղ հանրահավաքների, միությունների մեջ ընդգրկ-

վելու իրավունքը: Այնուամենայնիվ հետևում է նշել, որ ազգային փոքրամասնությունների քննարկվող իրավունքը կապված է շրջանակային կոնվենցիայի 17 հոդվածի 2 կետի հետ, որը սահմանում է. «Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությանը, ազգային և միջազգային մակարդակներով, մասնակցելու իրավունքը»: Ինչպես մնացած իրավունքները, այնպես էլ հիշյալ իրավունքը ենթադրում է պետության համապատասխան պարտականություններ: Առաջին հերթին այդպիսին է հանդիսանում պետության պարտականությունը ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել փոքրամասնությունների միությունները, ինչպես նաև տրամադրել նրանց ձևական և փաստական հնարավորություն իրենց կանոնադրական խնդիրների իրականացման համար: Սրանց հետ միաժամանակ պետությունները կարող են սահմանել որոշակի արտոնություններ կամ ուղղակի օգնություն փոքրամասնությունների միություններին: Հայաստանի Հանրապետությունը այդպիսի հնարավորություն արդեն իսկ տրամադրել է ազգային օրենսդրությամբ և որևիցե խոչընդոտ նշված իրավունքի իրականացման հարցում չի կարող առաջանալ: Հայաստանի Հանրապետության 2000 թվականի պետությունը ազգային փոքրամասնությունների գծով նախատեսվել էր 10 մլն. դրամ, նույնչափ սահմանվել է նաև 2001 թվականի պետական բյուջեով:

Հոդված 18

1. Համապատասխան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար, Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է ջանք գործադրեն, այլ պետությունների, մասնավորապես, հարևան երկրների հետ, երկկողմ և բազմակողմ համաչափ ազդեր կնքելու համար:

2. Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է միջոցներ ձեռնարկեն միջսահմանային համագործակցությունը խրախուսելու համար:

116. Հայաստանի Հանրապետությունը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար այլ պետությունների, մասնավորապես հարևան երկրների հետ կնքել է երկկողմ (Բարեկամության և համագործակցության մասին) և բազմակողմ համաձայնագրեր:

117. Հիշյալ երկկողմ Բարեկամության և համագործակցության մասին պայմանագրերում արժարժվում են այնպիսի հիմնադրույթներ, որոնք վերաբերում են անմիջականորեն ազգային փոքրամասնությունների իրավունք-

ների պաշտպանությանը: Այսպես օրինակ, Ռուսաստանի Դաշնության հետ Բարեկամության և համագործակցության մասին պայմանագրի 8 հոդվածը, Հունաստանի հետ՝ 20 հոդվածը, Ռումինիայի հետ՝ 14 հոդվածը, Բուլղարիայի հետ՝ 9 հոդվածը, Ղազախստանի հետ՝ 5 հոդվածը, Լիբանանի հետ՝ 8 հոդվածը, Ուկրաինայի հետ՝ 5, 6 հոդվածները ամրագրում են կոնկրետ դրույթներ, որոնք վերաբերում են համապատասխանաբար 2 պետություններում բնակվող ազգային փոքրամասնությունների էթնիկական, մշակութային, կրոնական ինքնության պահպանման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը և համապատասխան միջոցառումների իրականացմանը:

118. Վերոհիշյալ պայմանագրերով հաշվի են առնվում 2 ժողովուրդների միջև պատմության ընթացքում հաստատված առանձնահատուկ ավանդական բարեկամական հարաբերությունները և բազմաբնույթ կապերը, գիտակցելով մի շարք պարտավորությունների կարևորությունը, որոնք ստանձնել են միջազգային մի շարք փաստաթղթերով, պետությունները պարտավորվում են բարեկամության և փոխադարձ վստահության ոգով համագործակցել բոլոր բնագավառներում, ըստ անհրաժեշտության կնքել այլ համաձայնագրեր:

119. Հայաստանի Հանրապետությունը իր անմիջական հարևան Վրաստանի հետ 1993 թվականի մայիսի 19-ին կնքել է բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագիր: Հիշյալ պայմանագրի 7-րդ հոդվածը սահմանում է. «Բարձր Պայմանավորվող Կողմերը հավաստում են, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների հարգումը, ինչպես նաև նրանց կողմից պետության նկատմամբ իրենց պարտավորությունների կատարումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում և Վրաստանի Հանրապետությունում խաղաղության, արդարության, կայունության և ժողովրդավարության էական գործոն»:

120. Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության միջև կնքված Բարեկամության և համագործակցության մասին պայմանագիրը զարգացնելով համագործակցության մի շարք ոլորտներում հարաբերությունները՝ (20-րդ հոդված) ուղղակիորեն ամրագրում է. «Հայաստանի Հանրապետությունը և Հունաստանի Հանրապետությունը երաշխավորում են անհրաժեշտ պայմանների ստեղծում և համապատասխան միջոցառումների իրագործում՝ Հունաստանի Հանրապետությունում բնակվող ազգությամբ հայ և Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգությամբ հույն քաղաքացիների էթնիկական, մշակութային և կրոնական ինքնության պահպանման և զարգացման համար, միջազգային նորմերին համապատասխան: Կողմերը պետական մակարդակով աջակցում են հունա-

հայ համայնքի և հայաստանաբնակ հունական համայնքի հասարակական, հոգևոր, մշակութային, կրթական, մարզական և բարեգործական գործունեությանը»:

Հոդված 19

Կողմերը պարտավորվում են հարգել և կիրառել սույն շրջանակային Կոնվենցիայի սկզբունքները, անհրաժեշտության դեպքում, կարարելով միայն այնպիսի սահմանափակումներ և բացառություններ, որոնք նախատեսված են միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայում, այնքանով, որքանով որ դրանք վերաբերում են նշված սկզբունքներից բխող իրավունքներին և ազատություններին:

121. Հայաստանի Հանրապետությունը, համաձայն միջազգային իրավունքի կարևորագույն սկզբունքին՝ պարտավորությունների բարեխիղճ կատարում, ելնում է այն կանխավարկածից, որ սույն կոնվենցիայի սկզբունքները և դրույթները պարտավոր են արժանանալ հարգանքի և կիրառման, անհրաժեշտության դեպքում, կատարելով միայն այնպիսի սահմանափակումներ և բացառություններ, որոնք նախատեսված են միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես, Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում:

122. ՀՀ Սահմանադրության 44 և 45 հոդվածներով նախատեսված է այն իրավունքների շրջանակը և պայմանները, որոնց առկայության դեպքում կարող են դրանք սահմանափակվել: Հայաստանում մասնօրինակ իրադրություն է ծառայել 1996 թվականի սեպտեմբերի 26-ի դեպքերը, որի ժամանակ ՀՀ նախագահը, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, իրականացրել է ՀՀ սահմանադրության 55 հոդվածի 14 կետով նախատեսված գործողություններ, որից հետո համաձայն սահմանադրության 45 հոդվածի սահմանափակվել են ժամանակավորապես մարդու և քաղաքացու առանձին իրավունքներ և ազատություններ, բացառությամբ սահմանադրության 17, 19, 20, 39, 41-43 հոդվածների: Այս իրողությունը կարևորում է այն փաստը, որ, թեկուզև, կիրառվել է որոշակի իրավունքների սահմանափակումներ, այնուամենայնիվ դրանք իրականացվել են օրենքի շրջանակներում և միջազգային ստանդարտներին համապատասխան:

Հոդված 20

Սույն շրջանակային կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքների և ազատությունների իրագործման ժամանակ, ազգային փոքրամասնու-

թյանը պարկանող յուրաքանչյուր անչ պետք է հարգի ազգային օրենսդրությունը և մյուսների իրավունքները, մասնավորապես, բնակչության մեծամասնության և այլ ազգային փոքրամասնությունների իրավունքները:

123. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48 հոդվածը սահմանում է յուրաքանչյուր անձի պարտականությունը պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները արժանապատվությունը: Արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգի բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն և պատերազմ քարոզելու նպատակով:

Հոդված 23

Սույն շրջանակային Կոնվենցիայում շարադրված սկզբունքներից բխող ազատությունները և իրավունքները, այնքանով, որքանով որ հանդիսանում են «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի կամ դրա Արջանագրությունների առարկա, պետք է հասկացվեն որպես վերջինիս համապատասխան դրույթներ:

124. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ազգային փոքրամասնությունների իրավունքները և ազատությունները դիտարկվում են ընդհանրապես մարդու իրավունքների և ազատությունների համատեքստում: Ազգային փոքրամասնությունների իրավունքները պետք է ընկալվի որպես այդպիսին, որը կամրապնդի ՀՀ համար ուժի մեջ մտնելիք մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի և դրա արձանագրությունների համապատասխան դրույթները:

Հոդված 30

1. Յուրաքանչյուր պետություն վավերացնան, ընդունան և միանալու փաստաթուղթը ստորագրման կամ ի պահ հանչնելու պահին կարող է նշել տարածքը կամ տարածքները, որոնց սահմաններում նա պարտասխանաբարություն է կրում միջազգային հարաբերությունների և սույն կոնվենցիայի կիրառման համար:

2. Յուրաքանչյուր պետություն կարող է հերազայում ցանկացած պահի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարի անունով դիմումի մեջ տարածել սույն շրջանակային կոնվենցիայի կիրառումը որևէ ուրիշ, դիմումի մեջ նշված, տարածքի վրա: Այս տարածքների վերաբերյալ սույն կոնվենցիան ուժի մեջ կմտնի այդ դիմումը Գլխավոր քարտուղարի կողմից սրանալու

օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Ցանկացած դիմում, արված երկու նախորդ կետերի դրույթների հիման վրա, կարող է հետ կանչվել ցանկացած տարածքի վերաբերյալ, նշված այդպիսի դիմումի մեջ՝ Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցագրի միջոցով: Այդպիսի հեղկանչումը ուժի մեջ մտնում Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցագիրը սրանալու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

125. Հայաստանի Հանրապետությունը շունի նման տարածք: Հայաստանի Հանրապետությունը որևէ հայտարարություն չի արել կապված շրջանակային կոնվենցիայի տարածքային կիրառման հետ, երբ վավերացրեց շրջանակային կոնվենցիան: Ուստի կոնվենցիան կիրառվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի նկատմամբ:

Սիրասարուրգ, 16-ը մայիսի 2002թ., ACFC/OP/I(2002)5

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾԻՔ

Բովանդակություն

- I. Սույն կարծիքի պատրաստումը
- II. Ընդհանուր դիտողություններ
- III. Հատուկ մեկնաբանություններ
- IV. Խորհրդատվական կոմիտեի հիմնական եզրահանգումները և մեկնաբանությունները
- V. Եզրափակիչ դիտողություններ

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի սկզբնական ազգային զեկույցը 2001թ. հունիսի 11-ին ստանալուն պես (այնինչ պետք է ստացվեր 1999թ. նոյեմբերի 1-ին) Խորհրդատվական կոմիտեն 2001թ. սեպտեմբերի 10-14-ը տեղի ունեցած 11-րդ հանդիպմանը սկսեց ազգային զեկույցի ուսումնասիրությունը: Ուսումնասիրության շրջանակում Խորհրդատվական կոմիտեի պատվիրակությունն այցելեց Հայաստան 2001թ. դեկտեմբերի 10-14-ը՝ կառավարության ներկայացուցիչներից, ինչպես նաև հասարակական կազմակերպություններից և այլ անկախ աղբյուրներից Շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ հետազա տեղեկություն ստանալու համար: Խորհրդատվական կոմիտեն Հայաստանի վերաբերյալ իր կարծիքը ընդունեց 14-րդ հանդիպման ընթացքում՝ 2002թ. մայիսի 16-ին:

Խորհրդատվական կոմիտեն ողջունում է միջմշակութային, հարգանքի և ըմբռնման ներդաշնակ մթնոլորտը, որը, ինչպես զեկուցված է, զերիշխում է Հայաստանում, և հավաստում է Շրջանակային կոմիտեի կատարելու Հայաստանի պատրաստակամությունը: Այնուամենայնիվ, առկա իրավիճակը ունի որոշ թերություններ, մասնավորապես կրթության, զանգվածային լրատվության միջոցներին մատչելիության, հասարակական ոլորտում փոքրամասնության լեզուն օգտագործելու և հասարակական կյանքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցության հետ հետ կապված:

Հաշվի առնելով, որ օրենսդրական մակարդակում են ազգային փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ նախատեսված են սահմանափակ թվով դրույթներ, Խորհրդատվական կոմիտեն այն կարծիքին է, որ կարևոր է համապատասխան իրավական հիմք ստեղծելը, և այդ կապակցությամբ կոչ է անում Հայաստանի իշխանություններին վերանայել և ընդլայնել առկա օրենսդրական նախաձեռնությունները: Ինստիտուցիոնալ մակարդակում մասնագիտացած կառավարական մարմնի ստեղծումը կաջակցի իրավասու պետական մարմինների միջև համագործակցությանը և հնարավոր կդարձնի այս ոլորտում զարգացնել իրական պետական քաղաքականությունը:

Ինչ վերաբերում է գործնականին, Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ չնայած կառավարության կողմից նշված թափանցիկությանը, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ինքնությունն ու մշակույթը պահպանելու համար պահանջվում են հետագա ջանքեր: Իշխանությունները պետք է կատարեն իրենց նոր նախաձեռնությունները այս ոլորտում հնարավորին չափ արագ, որպեսզի ամրապնդեն ազգային փոքրամասնություններին պետության կողմից ցուցաբերվող օգնությունը, ներառյալ ազգային փոքրամասնությունների մշակութային կենտրոնի ստեղծումը:

Անհրաժեշտություն կա նաև լրատվամիջոցներում մատչելիության և ներկայության հնարավորությունն ընդլայնելու համար հետագա միջոցառումներ ձեռնարկել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար: Չնայած այս իրավունքը երաշխավորված է օրենքով, այսուհանդերձ ներկա դրությունը անբավարար է ինչպես օրենսդրական մակարդակում, այնպես էլ գործնականում: Անհրաժեշտ է ընդլայնել փոքրամասնությունների լեզվին տրամադրված հեռահաղորդակցման ժամանակը հանրային տեսաձայնային ծառայություններում, մասնավորապես՝ հեռուստատեսությամբ, համապատասխան օրենսդրական դրույթների վերանայման միջոցով: Ավելին, անհրաժեշտ է պետության կողմից ավելի մեծածավալ օժանդակություն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ էլեկտրոնային և տպագիր մասնավոր լրատվամիջոցներ ստեղծելու համար:

Խորհրդատվական կոմիտեն մտահոգությամբ նշում է կրթության բնագավառի թերությունները, մասնավորապես՝ փոքրամասնության լեզվի կամ լեզվով ուսուցանումը: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ իշխանությունները պետք է ավելի շատ պատրաստակամություն ցուցաբերեն այս ոլորտում, որպեսզի հնարավորություն ընձեռեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հավասարապես օգտվելու կրթության իրավունքից և զարգացնելու ինչպես փոքրամասնության, այնպես էլ մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի, ավանդույթների իրազեկումը: Հատկապես մեծ ուշադրություն է անհրաժեշտ այս ոլորտում ասորիների և եզդիների նկատմամբ:

Խորհրդատվական կոմիտեն այն կարծիքին է, որ Շրջանակային կոմիտեի կատարումը լիակատար չէ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց վերաբերող որոշումների ընդունման մասնակցության հետ կապված: Խորհրդատվական կոմիտեն հավատացած է, որ իշխանությունները պետք է ընդլայնեն այս անձանց հետ խորհրդակցության ձևերը և դրա վերաբերյալ անհապաղ կատարեն նախատեսված ինստիտուցիոնալ միջոցառումները:

I. ՍՈՒՅՆ ԿԱՐԾԻՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Հայաստանի առաջին ազգային զեկույցը /այսուհետև՝ ազգային զեկույց/ ստացվել է 2001թ. հունիսի 11-ին (այնինչ պետք է ստացվեր 1999թ. նոյեմբերի 1-ին): Խորհրդատվական կոմիտեն 2001թ. սեպտեմբերի 10-14-ը տեղի ունեցած 11-րդ հանդիպմանը սկսեց ազգային զեկույցի ուսումնասիրությունը:

2. Ուսումնասիրության շրջանակներում Խորհրդատվական կոմիտեն որոշեց մի շարք կետեր, որոնց վերաբերյալ ցանկացավ ավելի պարփակ տեղեկություն ստանալ: Ուստի հարցում ուղարկվեց Հայաստանի իշխանություններին 2001թ. սեպտեմբերի 21-ին, և Հայաստանի կառավարությունը պատասխանեց 2001թ. նոյեմբերի 20-ին:

3. Այնուհետև, Հայաստանի կառավարության հրավերով և Նախարարների կոմիտեի (97)10 որոշման թիվ 32 կանոնի համաձայն՝ Խորհրդատվական կոմիտեի պատվիրակությունը 2001թ. դեկտեմբերի 10-14-ը այցելեց Հայաստան՝ կառավարությունից, հասարակական կազմակերպություններից և անկախ աղբյուրներից, ներառյալ Երևանում ԵԱՀԿ գրասենյակը, Շրջանակային կոմիտեի կատարման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: Մույն զեկույցը պատրաստելիս Խորհրդա-

տվական կոմիտեն անդրադարձավ Եվրոպայի խորհրդի տարբեր մարմինների որոշ փաստաթղթերի, խորհրդակցեց միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմա-կերպությունների և այլ անկախ աղբյուրների հետ:

4. Խորհրդատվական կոմիտեն սույն կարծիքը ընդունեց 14-րդ հանդիպմանը՝ 2002թ. մայիսի 16-ին, և որոշեց այն փոխանցել Նախարարների կոմիտե:

5. Սույն կարծիքն ընդունված է Շրջանակային կոնվենցիայի 26(1) հոդվածին համապատասխան, որի համաձայն՝ Շրջանակային կոնվենցիայի սկզբունքների կատարելուն ուղղված՝ Կողմերի ձեռնարկած միջոցառումների գնահատման ընթացքում «Խորհրդատվական կոմիտեն աջակցում է Նախարարների կոմիտեին», ինչպես նաև Նախարարների կոմիտեի (97)10 որոշման թիվ 32 կանոնի համաձայն, ըստ որի «Խորհրդատվական կոմիտեն քննարկում է ազգային զեկույցները և փոխանցում իր կարծիքը Նախարարների կոմիտե»:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6. Խորհրդատվական կոմիտեն ցավում է, որ Հայաստանի առաջին ազգային զեկույցը սահմանված ժամկետից 19 ամիս ուշ է ստացվել: Ազգային զեկույցը տրամադրում է ընդհանուր տեղեկություն զեկույցը կազմելիս ազգային փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ իրավական և ինստիտուցիոնալ հիմքերի մասին: Միաժամանակ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային զեկույցը Շրջանակային կոնվենցիայի որոշ հոդվածների վերաբերյալ տրամադրում է միայն մակերեսային տեղեկություններ, հատկապես համապատասխան պրակտիկայի հետ կապված, և մանրամասն տեղեկություններ չի պարունակում որոշ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, Խորհրդատվական կոմիտեն գնահատում է այն փաստը, որ ազգային զեկույցը, իրոք, մատնանշում է մի շարք թերություններ՝ կապված Շրջանակային կոնվենցիայի կատարման հետ:

7. Խորհրդատվական կոմիտեն, այնուամենայնիվ, իրավիճակի ավելի որոշակի պատկեր ստացավ հարցումին տրված կառավարության գրավոր պատասխանից և հատկապես Հայաստան կատարած այցից (տես սույն կարծիքի 3-րդ կետը): Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ Հայաստանի կառավարության կողմից կազմակերպված այցը պետական մարմինների և այլ աղբյուրների հետ ուղիղ երկխոսության գերազանց հնարավորու-

յուն ընձեռեց: Կառավարության, ինչպես նաև այլ աղբյուրների, մասնավորապես ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների տրամադրած լրացուցիչ տեղեկությունները շատ արժեքավոր էին հատկապես համապատասխան նորմերի գործնական կիրառման և այս ոլորտում վերջին զարգացումների վերաբերյալ:

8. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է ազգային զեկույցը կազմելիս ազգային փոքրամասնությունների հետ կառավարության խորհրդակցությունը և մատնանշում է համագործակցության ոգին, որով Հայաստանի իշխանությունները մասնակցում են այս կարծիքը ընդունելու գործընթացին:

9. Խորհրդատվական կոմիտեն առաջարկում է կառավարությանը հետագա միջոցներ ձեռնարկել ավելի իրազեկ դարձնելու համար Շրջանակային կոնվենցիան, դրա բացատրական զեկույցը և միջազգային մակարդակում դրա մոնիտորինգի վերաբերյալ կանոնները, ազգային զեկույցը և համապատասխան փաստաթղթերը՝ հրապարակելու և հրատարակելու միջոցով:

10. Խորհրդատվական կոմիտեն անհարժեշտ է համարում նշել, որ Հայաստանի կողմից Շրջանակային կոնվենցիայի կատարումը գնահատելու ընթացքում կոմիտեն հաշվի է առել երկրի առջև ծառայած տնտեսական լուրջ դժվարությունները: Խորհրդատվական կոմիտեն շնորհակալություն է հայտնում Հայաստանի իշխանություններին Շրջանակային կոնվենցիան կատարելու մտահոգության համար, չնայած քաղաքականության և միջոցառումների կատարումը, որպես կանոն, պահանջում է ֆինանսական բավականին միջոցներ:

11. Կարծիքի հետագա մասում ասվում է, որ, ըստ առկա տեղեկության, մի շարք հոդվածների առումով Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ հոդվածների կատարումը ենթակա չէ հատուկ դիտարկումների: Խորհրդատվական կոմիտեն հարկ է համարում ընդգծել, որ տվյալ հայտարարությունը չպետք է հասկացվի որպես պնդում, թե ներկայումս ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ, և ջանքերը այս բնագավառում կարող են թերագնահատվել կամ նույնիսկ դադարեցվել:

Իրոք, կոմիտեն համարում է, որ Շրջանակային կոնվենցիայի պարտավորությունների բնույթը իշխանություններից պահանջում է կայուն և շարունակական ջանքեր՝ կոնվենցիայի սկզբունքները հարգելու և նպատակներին հասնելու համար: Ավելին, այդ հարցերի որոշակի վիճակը Շրջանակային կոնվենցիայի՝ վերջերս ուժի մեջ մտնելու լույսի ներքո կարող է այս փուլում համարվել ընդունելի, բայց այդպես չպետք է լինի հետագա մոնիտորինգի շրջանակներում: Վերջապես, հնարավոր է՝ ժամանակի ընթացքում պարզվի, որ տվյալ փուլում համեմատաբար ցածր նշանակության թվացող հարցերը թերագնահատված են եղել:

III. ՀԱՏՈՒԿ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1-19-ԲԴ ՀՈԴ-ՎԱՃՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1

12. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանը վավերացրել է մի շարք համապատասխան միջազգային փաստաթղթեր: Հիմնվելով ներկայիս առկա տեղեկատվության վրա, Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ սույն հոդվածի կատարումը ենթակա չէ հետագա դիտարկումների:

Հոդված 2

13. Հիմնվելով իր տրամադրության տակ ունեցած առկա տեղեկության վրա՝ Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ սույն հոդվածի կատարումը ենթակա չէ հատուկ դիտարկումների:

Հոդված 3

14. Խորհրդատվական կոմիտեն ընդգծում է, որ Շրջանակային կոնվենցիայում սահմանման բացակայության դեպքում Կողմերից յուրաքանչյուրը պետք է քննարկի Շրջանակային կոնվենցիայի կիրառման ոլորտը իր տարածքում: Ուստի Հայաստանի կառավարության դիրքորոշումը, ենթադրվում է, կլինի այդ քննարկման արդյունք:

15. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ քանի որ Կողմերն այս առումով ունեն գնահատման հնարավորություն իրենց երկրի յուրահատուկ հանգամանքները հաշվի առնելու համար, մյուս կողմից կոմիտեն նշում է, որ դրանք պետք է կատարվեն միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և 3-րդ հոդվածի հիմնարար դրույթներին համապատասխան, և կոմիտեն հատկապես ընդգծում է, որ Շրջանակային կոնվենցիայի կատարումը չպետք է հանդիսանա կամայական կամ անարդարացի տարբերակումների աղբյուր:

16. Այս պատճառով Խորհրդատվական կոմիտեն իր պարտքն է համարում Շրջանակային կոնվենցիայի կատարման ոլորտի ուսումնասիրությունը՝ հավաստիանալու, որ կամայական կամ անարդարացի տարբերակումներ չեն կատարվել: Ավելին, կոմիտեն համարում է, որ պետք է հավաստիանա 3-րդ հոդվածով նախատեսված հիմնարար սկզբունքների պատշաճ կատարման մեջ:

17. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ «ազգային փոքրամասնություն» արտահայտությունն իրավական ձևակերպում չի ստացել Հայաստանում,

նում, չնայած Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային զեկույցում խոսվում է այն մասին, որ այդ եզրույթը գործնականում նշանակում է «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք իրենց էթնիկական ծագումով տարբերվում են երկրի հիմնական բնակչությունից»: Այս սահմանումը հավանաբար կրկնում է Հայաստանի համար 2001թ. հունվարին ուժի մեջ մտած՝ Անկախ պետությունների համագործակցության՝ Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանության մասին կոնվենցիայում հանդիպող սահմանումը:

18. Խորհրդատվական կոմիտեն նաև նշում է, որ պաշտոնապես ճանաչված ազգային փոքրամասնությունների ցուցակ չկա, և այդ առումով գոյություն ունի անորոշության որոշակի չափ: Ազգային զեկույցը հիշատակում է 20-ից ավելի «ազգությունների» առկայությունը, որոնցից 11-ը ընդգրկված են բաց ցուցակում. գերմանացիներ, բելառուսներ, վրացիներ, հույներ, իրեաներ, քրդեր, լեհեր, ռուսներ, ասորիներ, ուկրաինացիներ և եզդիներ:

19. Խորհրդատվական կոմիտեն այս առումով նշում է եզդիների և քրդերի ազգային ինքնության վերաբերյալ առկա տարածայնությունը՝ կապված նրանց՝ մեկ ազգային փոքրամասնության կամ երկու տարբեր ազգային փոքրամասնությունների պատկանելու հարցի հետ: Խորհրդատվական կոմիտեն հաճույքով վավերացնում է, որ վերջին՝ 2001թ. հոկտեմբերին անցկացված մարդահամարը հնարավորություն տվեց շահագրգիռ անձանց ինքնուրույն որակել իրենց որպես եզդիներ կամ էլ որպես քրդեր: Խորհրդատվական կոմիտեն հուսով է, որ մարդահամարի արդյունքները այս առումով պարզաբանումներ կմտցնեն, և կոչ է անում Հայաստանի իշխանություններին համապատասխան ձևով շահագրգիռ անձանց հետ խորհրդակցել ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հետագա օրենսդրության նախապատրաստման և ընդունման ընթացքում: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ մարդահամարի թերթիկները պարունակում են ոչ պարտադիր բնույթի կամընտիր հարցեր էթնիկ ծագման վերաբերյալ, ինչպես նաև այլ հարցեր՝ մայրենի լեզվի և այլ լեզուների վերաբերյալ: Արդյունքները, որոնք, ըստ Հայաստանի իշխանությունների, մատչելի կլինեն 2002թ. հուլիսին, պետք է ներկայացնեն Հայաստանի բնակչության կազմի ներկայիս պատկերը հավաստի տվյալների հիման վրա (տես նաև 4-րդ հոդվածի մեկնաբանությունները):

20. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանի իշխանությունները տրամադրել են էթնիկ խմբերի առկայության մասին տեղեկություն, որոնք ներկա դրությամբ ազգային փոքրամասնություններ չեն համարվում: Օրինակ՝ իշխանությունները մանրամասնել են, որ ազգային զեկույցի մեջ

հիշատակված 11 ազգային փոքրամասնությունները նրանք են, որոնք ունեն իրենց ներկայացուցչական կազմակերպությունները և ներկայացված են Համակարգող խորհրդում, որը նախագահի աշխատակազմում ազգային փոքրամասնությունների ներկայացուցչական մարմին է: Համաձայն իշխանությունների տեղեկատվության՝ այլ էթնիկ խմբերը դժվար է դասել ազգային փոքրամասնությունների թվին, քանի որ բացակայում է որպես այդպիսիք դիտվելու նրանց ցանկությունը: Այս խմբերը չունեն իրենց ներկայացուցչական կազմակերպությունները, մի փաստ, որը դիտվում է, ըստ իշխանությունների, որպես ազգային փոքրամասնություն դիտվելու ցանկության բացակայություն:

21. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ իշխանությունները չեն բացառում այն հնարավորությունը, որ այս խմբերը հետագայում կարտահայտեն իրենց ցանկությունը՝ ճանաչվելու որպես ազգային փոքրամասնություններ: Խորհրդատվական կոմիտեն, այնուամենայնիվ, այն կարծիքին է, որ ներկայացուցչական կազմակերպություններ չունեցող այս խմբերին պատկանող անհատները Շրջանակային կոնվենցիայի շրջանակներում նույնպես կարող են օգտվել պաշտպանությունից: Խորհրդատվական կոմիտեն հնարավոր է համարում այլ խմբերին պատկանող անձանց, համապատասխան դեպքերում նաև ոչ քաղաքացիների ներգրավումը Շրջանակային կոնվենցիայի կիրառման ոլորտ՝ հողված առ հողված սկզբունքի հիման վրա:

Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է քննարկեն այս հարցը շահագրգիռ անձանց հետ:

22. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանության իրավական հիմքերի վերաբերյալ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը նվիրված հատուկ օրենք չկա: Բացի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածով տրված ընդհանուր երաշխիքներից, Հայաստանի օրենսդրությունը պարունակում է ազգային փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ մի քանի մանրամասն դրույթներ: Իշխանությունները այդ բացը համարում են թերություն Հայաստանի օրենսդրության մեջ: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ այդպիսի օրենքի նախագիծը նախապատրաստական փուլում է, և օրենքը կպարունակի ազգային փոքրամասնություններ հասկացության սահմանումը: Կոմիտեն նաև նշում է այդպիսի օրենքի երկու նախագծերի առկայությունը. մեկը մշակվում և նախապատրաստվում է կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության կողմից, մյուսը՝ խորհրդարանի նախաձեռնությամբ:

23. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ այս հարցում կառավարման տարբեր մարմինների, ինչպես նաև կառավարման մարմինների և Ազգային ժողովի միջև համակարգման և հաղորդակցության պակասի հետ մեկտեղ մնան օրենքի վերաբերյալ համաձայնություն չկա նաև այն անձանց միջև, որոնք նշանակալի դեր ունեն Հայաստանի քաղաքական կյանքում (տես նաև 15-րդ հոդվածի մեկնաբանությունները): Մինչդեռ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունները շահագրգռված են մնան օրենքի ընդունմամբ և ցանկանում են ներգրավվել դրա նախապատրաստմանը: Այս առումով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները իրենց դժգոհությունն են արտահայտում այն առումով, որ իրենք ներգրավված չեն կառավարության նախաձեռնած օրենքի նախագծի նախապատրաստական աշխատանքներում և քննադատաբար են մոտեցել իրենց ներկայացրած նախագծին: Խորհրդատվական կոմիտեն անհրաժեշտ է համարում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համապատասխան պաշտպանությունը ապահովող երաշխիքներ ստեղծելու համար իրավական հիմք ստեղծել Շրջանակային կոնվենցիայում ամրագրված սկզբունքներին համապատասխան և շահագրգիռ անձանց հետ խորհրդակցությամբ, և կոմիտեն խորհուրդ է տալիս է իրավասու մարմիններին՝ այս առումով կատարել բոլոր անհրաժեշտ քայլերը:

24. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանի Սահմանադրությունը, ինչպես նաև Հայաստանի օրենսդրությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով վերանայման լայնածավալ գործընթացում են: Այս ենթատեքստում կոմիտեն խրախուսում է իշխանություններին՝ համապատասխան պատասխանատու մարմինները համակարգելու միջոցով երաշխավորել, որ օրենսդրության յուրաքանչյուր փոփոխություն կկատարվի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կարիքներին համապատասխան՝ դրանով իսկ ապացուցելով, որ Հայաստանի իրավական համակարգը այս ոլորտում կայացած է, և իրավական համակարգը համապատասխանում է Շրջանակային կոնվենցիայի սկզբունքներին:

Հողված 4

25. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանի Սահմանադրությունը ապահովում է յուրաքանչյուր քաղաքացու հավասարությունը օրենքի առջև, և յուրաքանչյուր քաղաքացի առանց խտրականության հավասարապես գտնվում է օրենքի պաշտպանության ներքո, ինչպես նաև երաշխավորում է իրավունքների պաշտպանությունը: Հայաստանի քրեական օրենսգիրքը իշխանությունների կամ անհատների կողմից խտրակա-

նությունը արգելող դրույթներ է պարունակում, ինչպես նաև պատիժ է սահմանում ազգային կամ ռասայական հիմքերով հավասարության ցանկացած խախտման համար: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ այդ դրույթը ուղղված է խտրականության գոհերի իրավունքների պաշտպանությանը: Ինչ վերաբերում է տարբեր սոցիալական ոլորտներում խտրականության դեմ ուղղված պաշտպանությանը (ներառյալ զբաղվածության, բնակության և ծառայությունների մատուցման ոլորտները), որը ապահովվում է քաղաքացիական և վարչական օրենսդրությամբ, Խորհրդատվական կոմիտեն Հայաստանի իշխանություններին կոչ է անում ուսումնասիրել Հայաստանի ներկա օրենսդրության վիճակը այս առնչությամբ, որպեսզի լրացվեն այս ոլորտում առկա բացերը:

26. Մարդու իրավունքների պաշտպանության արտադատական միջոցների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի դեր խաղալ Շրջանակային կոմիտենցիայի սկզբունքների արդյունավետ կատարման մեջ, Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ օմբուսմանի մարմինը դեռևս չի հիմնվել, չնայած Եվրոպայի խորհրդին անդամակցելիս դա Հայաստանի ստանձնած պարտավորություններից մեկն է, և համապատասխան օրենքը պետք է ընդունվեր անդամակցությունից հետո 6 ամսվա ընթացքում: Իշխանությունների տվյալների համաձայն՝ օմբուսմանը պետք է նշանակվի խորհրդարանի կողմից և լիազորված է լինելու դիմել սահմանադրական դատարան:

27. Խորհրդատվական կոմիտեն տեղյակ է, որ օմբուսմանի մարմին ստեղծելը սահմանադրական բարեփոխումների բաղկացուցիչ մասն է. գործընթաց, որը կլինի դանդաղ և բարդ: Խորհրդատվական կոմիտեն նաև նշում է, որ այս լիազորությունը 1998թ.-ից կատարում էր ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողովը: Գանաչելով այս հանձնաժողովի օգտակարությունը և կարևորությունը՝ կոմիտեն նշում է վերջինիս իրավական անորոշ կարգավիճակը և այն փաստը, որ համաձայն իշխանությունների տրամադրած աղբյուրների՝ հանձնաժողովի գործունեությունը դադարում է 2002թ. մարտին: Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին արագացնել օմբուսմանի մարմինը ստեղծելուն ուղղված քայլերը՝ որքանով հնարավոր է՝ համոզիչ դարձնելով, որ նշանակվող անձը կլինի անկախ և իր պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ հնարավորություններ կունենա:

28. Խտրականության դեմ օրենսդրության կատարման վերաբերյալ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ իշխանությունները, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, հասարակական կազմակերպությունները, հայկական ՋԼՄ-ները ոչ մի տեղեկություն չունեն էթնիկ ծագման հիմքերով խտրականության դեպքերի վերաբերյալ, և Հայաստանի դատարանների կողմից նման ոչ մի դեպք չի գրանցվել: Այս առումով

պետք է նշել, որ պաշտոնական աղբյուրներից վիճակագրական տվյալների բացակայության հանգամանքներում, ինչպես նաև հաշվի առնելով որոշակի աղբյուրների տեղեկատվությունը (տես ստորև՝ 40-րդ և 41-րդ կետերը), որոնք, այնուամենայնիվ, ցույց են տալիս խտրականության որոշ դեպքերի առկայություն, Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ անհնարին է հակախտրականության մեխանիզմների և Շրջանակային կոմիտենցիայի 4-րդ հոդվածում նշված սկզբունքների կիրառումը գնահատել արդյունավետ: Ուստի իրամայական է դարձել այս ոլորտում իրավիճակի մոնիտորինգի անցկացումը (տես նաև 6-րդ հոդվածին վերաբերող մեկնաբանությունները):

29. Ազգային փոքրամասնություններին և մեծամասնությանը պատկանող անձանց միջև հավասարությունը զարգացնելուն ուղղված արդյունավետ և լիակատար միջոցառումներին անդրադառնալով՝ Խորհրդատվական կոմիտեն այն կարծիքին է, որ պետությունը պետք է լրացուցիչ ջանքեր կիրառի կրթության, մշակույթի, հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների մասնակցության բնագավառում, և կոչ է անում իշխանություններին քայլեր ձեռնարկել նշված ոլորտայնորեն (մանրամասնությունների համար ստորև տես 5-րդ, 12-րդ և 15-րդ հոդվածների մեկնաբանությունները):

30. Խորհրդատվական կոմիտեն գիտակցում է, որ հավաստի տվյալների բացակայության պայմաններում Հայաստանի իշխանությունների համար դժվար է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ամբողջական և արդյունավետ հավասարությունը երաշխավորող միջոցառումներ մշակել և իրականացնել, իսկ միջազգային մոնիտորինգային կառույցներին՝ համոզվել, որ Հայաստանը կատարում է Շրջանակային կոմիտենցիայով ստանձնած իր պարտավորությունները: Խորհրդատվական կոմիտեն գիտակցում է, որ վերջին տասը տարվա ընթացքում Հայաստանում տեղի են ունեցել լուրջ ժողովրդագրական փոփոխություններ, և 2001թ. հոկտեմբերին անցկացվել է նոր մարդահամար, որը առաջինն է երկրի անկախությունից ի վեր: Համաձայն տարբեր աղբյուրների գնահատականների՝ 1989 թ.-ին անցկացրած վերջին մարդահամարից հետո Հայաստանը լքել են հարյուր հազարավոր մարդիկ, այդ թվում՝ նաև աղբյուրներից, ռուսներ, ինչպես նաև այլ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք:

31. Նկատի ունենալով նոր մարդահամարի կարևորությունը վերոհիշյալ ժողովրդագրական փոփոխությունների պատճառով՝ Խորհրդատվական կոմիտեն գնահատում է այն փաստը, որ մարդահամարի անցկացման մեթոդների կիրառմամբ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք օգտվել են իրենց սպասումները և ցանկությունները արտահայտելու հնարավորությունից: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ մարդա-

համարի արդյունքներից ստացված տվյալները ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վերաբերյալ այլ տվյալների հետ մեկտեղ (ad hoc ուսումնասիրությունների, հատուկ կամ նմուշային ուսումնասիրությունների կամ այլ՝ գիտականորեն ընդունված մեթոդի վրա հիմնված գնահատականներով) համապատասխանաբար կդասակարգվեն ըստ տարիքի, սեռի, աշխարհագրական տեղաբաշխվածության:

Հոդված 5

32. Խորհրդատվական կոմիտեն գնահատում է Հայաստանի իշխանությունների կամքը՝ ստեղծելու անհրաժեշտ պայմաններ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մշակույթը և ինքնությունը պահպանելու և զարգացնելու համար: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Սահմանադրությունը (հոդված 37) երաշխավորում է ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիների իրավունքը՝ պահպանելու իրենց ավանդույթները և զարգացնելու իրենց լեզուն ու մշակույթը:

33. Ինստիտուցիոնալ տեսանկյունից Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ տարածքային քաղաքականության և համագործակցության վարչությունը ստեղծվել է մշակույթի նախարարությունում և պատասխանատու է inter alia /ի թիվս այլոց/ ազգային փոքրամասնությունների ներկայացրած նախագծերի պետական աջակցության համար:

34. Ինչ վերաբերում է համապատասխան պրակտիկային, Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանում բնակվող տարբեր էթնիկ համայնքների կողմից կազմակերպվել են մի շարք մշակութային միջոցառումներ: Խորհրդատվական կոմիտեն, սակայն, նշում է, որ ազգային փոքրամասնությունները հայտնում են իրենց ազգային ինքնության և մշակույթի պահպանման ու զարգացման խոչընդոտների մասին: Փոքրամասնությունների ներկայացուցիչները այն կարծիքին են, որ այս ոլորտում պետության կողմից միայն վերջին մի քանի տարիներին տրամադրվող ֆինանսական օգնությունը անբավարար է, և վերոհիշյալ մշակութային գործունեությունը մեծապես ֆինանսավորվել է համայնքների կողմից: Այսպիսով, չնայած վերջին տարիներին կառավարությանը ուղղված կրկնվող պահանջներին, փոքրամասնությունները դեռ չեն ստացել իրենց մշակութային կենտրոնը ստեղծելու համար անհրաժեշտ օգնությունը: Քանի որ կառավարությունը ընդունում է այս պահանջին դրական լուծում տալու անհրաժեշտությունը, Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում կառավարությանը համապատասխան միջոցներ հայթայթել՝ աջակցելու ազգային փոքրամասնությունների մշակութային կենտրոն ստեղծելուն:

35. Ընդհանուր առմամբ Խորհրդատվական կոմիտեն հուսով է, որ, նկա-

տի ունենալով երկրում տիրող տնտեսական դժվարությունները, իշխանությունները պետք է այս ոլորտում լրացուցիչ ջանքեր գործադրեն: Մինևույն ժամանակ Խորհրդատվական կոմիտեն նշում է պատասխանատու նախարարությունների միջև թույլ համակարգումը, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և իշխանությունների միջև հաղորդակցության ոլորտի թերությունները: Այսպիսով, թվում է, թե ազգային փոքրամասնությունները իրազեկ չեն մշակույթի բնագավառում կառավարության պատրաստած իրավական միջոցառումներին և այս բնագավառում իրենց համար գործնական հնարավորությունների մասին անհրաժեշտ չափով տեղեկացված չեն: Ըստ կառավարության՝ մշակույթի վերաբերյալ դրույթներ պարունակող օրենքի նախագիծը, որը ներկայումս քննարկվում է խորհրդարանի կողմից, նախատեսում է պետական աջակցություն, inter alia բյուջետային հատուկ միջոցներով աջակցություն ազգային փոքրամասնությունների մշակույթին (տես նաև ստորև՝ 15-րդ հոդվածի վերաբերյալ մեկնաբանությունները):

36. Վերը նշվածի լույսի ներքո Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ընդունել և կատարել նախատեսված օրենսդրական միջոցառումները հնարավորին չափ շուտ և ապահովել համապատասխան ֆինանսական աջակցություն՝ միաժամանակ ապահովելով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ ակտիվ համագործակցություն և պարբերական երկխոսություն:

Հոդված 6

37. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանի հասարակությունում տիրում է հանդուրժողականության և միջմշակութային երկխոսության ոգին: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները ընդհանուր առմամբ հարգված են և մեծամասնության վերաբերմունքը ազգային փոքրամասնությունների հանդեպ բարյացակամ է: Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում կառավարությանը՝ շարունակելու ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց և մեծա-մասնության միջև հանդուրժողականության մթնոլորտը, փոխադարձ հարգանքը և համագործակցությունը խրախուսելու ջանքերը (տես նաև 30-րդ կետի համապատասխան մեկնաբանությունները):

38. Օրենսդրական ոլորտում Խորհրդատվական կոմիտեն նշում է Սահմանադրությամբ նախատեսված ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն հրահրելու արգելումը, ինչպես նաև օրենսդրական այլ դրույթներ, որոնք արգելում են խտրականությունը, թշնամանքը կամ կամայականությունը ռասայական և էթնիկ հիմքերով: Խորհրդատվական կոմիտեն

նշում է, որ այդպիսի արարքների համար նախատեսված է քրեական պատասխանատվություն:

39. Լրատվության բնագավառում Խորհրդատվական կոմիտեն ուշադրություն է դարձնում «Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների մասին» օրենքով կրոնական և էթնիկական հիմքերի վրա բռնություն և բռնամտություն առաջացնող հաղորդումների բողոքկոմունները ՉԼՄ-ներով արգելելու համագամանքին: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ընդհանուր առմամբ, համաձայն ներկայացրած տեղեկության, հայկական ՉԼՄ-ները ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց բացասական պատկերներ չեն հաղորդում: Խորհրդատվական կոմիտեն այնուհետև նշում է, որ հայկական ՉԼՄ-ները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ազգային փոքրամասնությունների՝ գեղարվեստական, մշակութային և կրոնական իրադարձությունների նկատմամբ՝ փորձելով դրանք մատչելի դարձնել հասարակությանը:

40. Ի կատարումն վերոհիշյալ օրենսդրական դրույթների՝ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ համաձայն ներքին գործերի նախարարության և ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողովի տվյալների՝ նման դեպքերին վերաբերող բողոքներ կամ դատական գործեր չեն եղել: Խորհրդատվական կոմիտեն նաև նշում է, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները այս առումով հաստատում են իշխանությունների հայտարարությունները: Այնուամենայնիվ, Խորհրդատվական կոմիտեն հավաստի տեղեկություններ ունի, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ գոյություն ունի որոշ անհանդուրժողականություն կամ բռնամտություն:

41. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ որոշակի աղբյուրներ տեղեկություններ են հաղորդում եզդիների նկատմամբ տեղական իշխանության մարմինների կողմից որոշակի խտրականություն ցուցաբերվելու վերաբերյալ (տեղական պաշարների բաշխման, սեփականաշնորհման գործընթացում հողերի տեղաբաշխման), ինչպես նաև ոստիկանության համապատասխան արձագանքի բացակայության մասին, երբ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք դառնում են բռնամական կամ խտրական գործողությունների օբյեկտ: Չնայած այս դեպքերի վերաբերյալ մանրամասն տեղեկության պակասությանը՝ Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ պետության պարտքն է կանխարգելել նման դեպքերը, գրանցել նման դեպքերը և տուժածներին երաշխավորել համապատասխան պաշտպանություն: Խորհրդատվական կոմիտեն այն կարծիքին է, որ եթե նույնիսկ նման դեպքերը հազվադեպ են, իշխանությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի ապահովեն բոլոր մարդ-

կանց հավասարության իրավունքը օրենքի առաջ և օրենքի պաշտպանությունից օգտվելու հավասարությունը (տես նաև 4-րդ հոդվածի վերաբերյալ մեկնաբանությունները):

42. Խորհրդատվական կոմիտեն կցանկանար հղում կատարել 4-րդ հոդվածին՝ համապատասխան վիճակագրության բացակայությանը վերաբերող ուսումնասիրություններին, և քաջալերում է իշխանություններին այս բնագավառում հնարավոր նոր իրադարձությունների մոնիտորինգի նպատակով համապատասխան միջոցառումներ անցկացնել:

43. Ինչ վերաբերում է անձանց կրոնական ինքնությանը, Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ, ընդունելով, որ հասարակությունում հավատքների միջև փոխհարաբերությունները հիմնականում բարեկամական են, մարդու իրավունքների որոշ կազմակերպություններ ևս նշում են կրոնական հանդուրժողականությանը վերաբերող թերություններ, մասնավորապես՝ կրոնական փոքրամասնությունների նկատմամբ, ի տարբերություն Հայ առաքելական եկեղեցու: Խորհրդատվական կոմիտեն մատնանշում է, որ Հայաստանը Եվրոպայի խորհրդին անդամակցելիս պարտավորվել է «երաշխավորել, որ բոլոր եկեղեցիները կամ կրոնական համայնքները, հատկապես ոչ ավանդական համարվողները, կարող են գործել առանց խտրականության»: Խորհրդատվական կոմիտեն քաջալերում է իշխանություններին՝ ավելացնել ջանքերը՝ բարելավելու ինչպես տարբեր կրոնական խմբերի միջև երկխոսությունը, այնպես էլ կրոնական հանդուրժողականությունը:

Հոդված 7

44. Ներկա դրությամբ իր տրամադրության տակ ունեցած տեղեկության հիման վրա Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ սույն հոդվածի կատարումը ենթակա չէ հատուկ դիտարկումների:

Հոդված 8

45. Ներկա դրությամբ իր տրամադրության տակ ունեցած տեղեկության հիման վրա Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ սույն հոդվածի կատարումը ենթակա չէ հատուկ դիտարկումների:

Հոդված 9

46. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանի Սահմանադրության 24-րդ հոդվածը և 1991 թ. հոկտեմբերի «Մամուլի և այլ ՉԼՄ-ների մասին» օրենքի 2-րդ հոդվածը երաշխավորում են լրատվական միջոցներով տեղեկություններ ստանալու և հաղորդելու ազատությունը: Խորհրդատվա-

կան կոմիտեն, սակայն, նշում է, որ ՁԼՄ-ների մասին օրենքի 5-րդ հոդվածում նշված է, որ հայերենը Հայաստանում ՁԼՄ-ների միջոցով տեղեկության տարածման լեզուն է: Խորհրդատվական կոմիտեն, այնուամենայնիվ, նշում է, որ մույն օրենքը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ ստանալ, պատրաստել և տարածել տեղեկություն, ինչպես նաև ստեղծել և օգտագործել իրենց սեփական ՁԼՄ-ները համապատասխան փոքրամասնության լեզվով:

47. Խորհրդատվական կոմիտեն նշում է նաև, որ համաձայն 2000թ. հոկտեմբերին ընդունված և 2001թ. հոկտեմբերին փոփոխված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 28-րդ հոդվածի՝ հանրային հեռուստատեսությունը և ռադիոյի կազմակերպությունները պետք է զարգացնեն ծրագրեր, որոնք կհամապատասխանեն ազգային փոքրամասնությունների շահերին, և եթերաժամանակ տրամադրեն փոքրամասնությունների լեզուներով հատուկ հաղորդումներին: Այնուամենայնիվ, Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ այս օրենքը չափազանց սահմանափակ է, քանի որ փոքրամասնությունների լեզվով հեռահաղորդումների ժամանակը բոլոր ազգային փոքրամասնությունների համար սահմանափակվում է շաբաթական 1 ժամ հեռուստատեսությամբ և օրական 1 ժամ ռադիոյով:

Վերը նշված օրենքի անցումային դրույթներին համապատասխան հայրենական արտադրության հաղորդումների հեռարձակման ծավալի վերաբերյալ մինչև 2004թ. 55 տոկոս սանդղակով իրագործումը կարող է ենթադրվել, որ ռուսերեն և փոքրամասնությունների այլ լեզուներով եթերաժամանակը աստիճանաբար կնվազի:

48. Ինչ վերաբերում է գործնականին, Խորհրդատվական կոմիտեն ավտասանքով նշում է, որ էլեկտրոնային լրատվամիջոցներին ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մատչելիությունը և ներկայությունը բավականին սահմանափակված են: Ազգային փոքրամասնության լեզվով հաղորդումների և ծրագրերի վերաբերյալ այս առումով վերջին մի քանի տարում տեղի է ունեցել անկում: Սա հավանաբար պետության կողմից ցածր աջակցության և մասամբ շահագրգիռ անձանց անբավարար գործողությունների արդյունք է: Օրինակ՝ չնայած վերոհիշյալ օրենսդրական երաշխիքների և իշխանությունների ընդունած դիրքորոշմանը՝ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ հանրային հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնության լեզվով հաղորդումներ չկան, բացի հատուկ 7 րոպեանոց ռուսերեն և անգլերեն լրատվական հաղորդումներից, որոնք թողարկվում են կեսգիշերին: Չնայած գոյություն ունեն փոքրամասնությունների մշակույթին, ինքնությամբ և արժեքներին նվիրված հեռուստահաղորդումներ, իշխանությունները հավանաբար նախընտրում են, որ փոքրամասնության լեզվով հաղորդումները թողարկվեն հիմնականում ռադիոյով: Հանրա-

յին ռադիոյով թողարկվում են ծրագրեր ռուսերենով, եզդիերենով (թողարկվում է ամեն օր), վրացերենով (շաբաթական 1 ժամ), գերմաներենով (շաբաթական 2 ժամից ավել), ինչպես նաև քրդերենով և պարսկերենով: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է անդրադառնան վերոհիշյալ իրավիճակին և համապատասխան քայլեր ձեռնարկեն՝ ընդլայնելու հանրային լրատվամիջոցներում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար մատչելի եթերաժամանակը:

49. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ոչ մի արգելք գոյություն չունի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մուտքը կամ ներկայությունը մասնավոր լրատվական միջոցներում: Ավելին, Խորհրդատվական կոմիտեն նշում է ռադիոյի և հեռուստատեսության տարբեր մասնավոր ընկերությունների կողմից այս առումով ընդունված դիրքորոշման մասին, որոնք արտացոլում են իրենց ծրագրերի մեջ տարբեր համայնքների շահերը, ավանդույթները, արժեքները և նրանց մշակութային իրադարձությունները: Որոշ մասնավոր հեռուստատեսային ալիքներ օրական 20-50 րոպե հաղորդումներ են թողարկում փոքրամասնությունների լեզուներով, մասնավորապես՝ ռուսերենով, պարսկերենով և քրդերենով: Յուրաքանչյուր կիրակի մեծամասնության հիմնական հեռուստաալիքներից մեկը տրամադրում է երեսուն րոպե ռուսերեն լեզվով ծրագիր, որն ուղղված է ԱՊՀ երկրների ռուսախոս բնակչությանը:

50. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից տեսալսային հեռահաղորդումների թույլտվության ոչ մի դիմում չի գրանցվել: Հիմնական պատճառներից մեկը հավանաբար հեռահաղորդող ընկերությունների ստեղծման համար երկրում տիրող սոցիալ-տնտեսական դժվարություններից բխող ֆինանսական աղքատության պակասն է: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները բողոքել են պետության կողմից ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից մասնավոր լրատվական ընկերությունների ստեղծման համար պետական աջակցության բացակայության համար: Նմանապես, Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ըստ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ չնայած ազգային փոքրամասնություններին պատկանող մասնագետներ կան, որոնք կարող են ապահովել լրատվամիջոցների անխափան գործունեությունը, փոքրամասնությունները սակավ հնարավորություններ ունեն մասնագետների պատրաստման և մասնագիտական առաջխաղացման բնագավառում: Խորհրդատվական կոմիտեն պնդում է, որ իշխանությունները ուսումնասիրեն առկա դրությունը և ընդլայնեն այս բնագավառում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց տրամադրվող օժանդակությունը:

51. Ինչ վերաբերում է մամուլին, Խորհրդատվական կոմիտեն մատնանշում է մի շարք հրատարակումներ, որոնցից մի քանիսը թողարկված են ոչ թե շահագրգիռ փոքրամասնության լեզվով, այլ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով, այլ կերպ՝ տարբեր լեզուներով: Օրինակ՝ ազգային զեկույցը հիշատակում է 1999թ. մոտ տասը ռուսերեն հրատարակումների առկայության մասին, որոնք պատկանում են ռուսական, ուկրաինական, քրդական, եզդիների և հրեաների համայնքներին: Նույն զեկույցը նշում է, որ 2001թ. մայիսին թողարկվել է 3 նոր հրատարակություն ազգային փոքրամասնությունների համար (ուկրաինական, եզդիների և հրեաների համայնքների համար): Մակայն Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին չի գոհացնում առկա դրությունը: Չնայած 2001թ. պետությունը ազգային փոքրամասնությունների հրատարակությունների համար որոշ օգնություն է հատկացրել՝ ի պատասխան շահագրգիռ համայնքների խնդրանքի, նրանց ներկայացուցիչները պնդում են, որ հատկացված օգնության չափը բավարար չէ: Խորհրդատվական կոմիտեի կարծիքով Հայաստանի իշխանությունները պետք է ուսումնասիրեն առկա դրությունը և քայլեր ձեռնարկեն այն բարելավելու համար:

52. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ որոշ փոքրամասնություններ այս բնագավառում օգտվում են իրենց բարեկամ երկրների ինչպես ուղղակի օգնությունից, այնպես էլ միջկառավարական համագործակցության միջոցով: Օրինակ՝ Խորհրդատվական կոմիտեն ողջունում է Հայաստանի և Ուկրաինայի միջև արդյունավետ համագործակցությունը, ինչը հնարավորություն ընձեռեց երկու երկրների համապատասխան համայնքների համար զարգացնել երկու լեզուներով հրատարակությունները:

53. Ընդհանուր առմամբ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ թեև ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար սկզբունքորեն երաշխավորված է մատչելիությունը զանգվածային լրատվական միջոցներին, այս ոլորտում դեռևս առկա են թերություններ: Խորհրդատվական կոմիտեն նաև մատնանշում է ավելի ընդհանուր դժվարությունների առկայությունը, որոնք ազդում են ոչ միայն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վրա. հիմնականում այն փաստն է, որ լրատվամիջոցները ֆինանսապես կախված են պետությունից հարկային համակարգի, հրատարակելու և տարածելու պետական տեսական մենաշնորհի, քաղաքական կուսակցությունների և գործնական շրջանակների մեծ ազդեցության պատճառով:

54. Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է Շրջանակային կոմիտեի հայի 9-րդ հոդվածի պարտավորությունները լիովին կատարելու համար ուժեղացնեն իրենց ջանքերը: Իրազեկված լինելով, որ լրատվամիջոցներին պետության աջակցության վե-

րաբերյալ օրենքի նախագիծն այժմ քննարկման փուլում է, Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին օրենքը նախապատրաստելու և ընդունելիս հաշվի առնել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կարիքները: Այս առումով կառավարությունը պետք է Խորհրդակցի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, որպեսզի համոզվի, որ ցուցաբերած ցանկացած օգնություն բավական կլինի կարիքները բավարարելու և լրատվամիջոցներին մատչելիության առումով փոքրամասնությունների միջև հավասարակշռության հասնելու համար: Դեռ ավելին, Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ իշխանությունները պետք է երաշխավորեն, որ լրատվամիջոցների անկախության համար բոլոր պայմանները կատարված են, որպեսզի լրատվամիջոցները կարողանան միջէթնիկական փոխըմբռնման մեջ դրական դեր խաղալ:

Հոդված 10

55. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ, համաձայն Սահմանադրության 12-րդ հոդվածի, Հայաստանի պետական լեզուն հայերենն է: Մինևույն ժամանակ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Սահմանադրության 37-րդ հոդվածը ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիներին իրավունք է տալիս պահպանել իրենց ավանդույթները և զարգացնել լեզուն ու մշակույթը: Միաժամանակ, 1993թ. ապրիլի՝ «Լեզվի մասին» օրենքի 1-ին հոդվածը, սահմանելով պետության լեզվական քաղաքականությունը, ազգային փոքրամասնություններին երաշխավորում է երկրի տարածքում իրենց լեզուն օգտագործելու ազատությունը:

56. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանի օրենսդրությունը ապահովում է անհրաժեշտ երաշխիքներ քրեական վարույթում ներգրավված ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրականացնելու իրենց համար հասկանալի լեզվով տեղեկանալու և պաշտպանվելու իրավունքը:

57. Որքանով դա վերաբերում է պրակտիկային, Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ինքնության պահպանումը փոքրամասնության լեզվի միջոցով բոլոր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների անհանգստության բաղկացուցիչ մասն է: Նրանք համարում են, որ պետությունը պետք է ավելի մեծ ներդրում կատարի այս բնագավառում, որպեսզի աջակցի ազգային փոքրամասնություններին պատկանող բոլոր անձանց կողմից լեզվի իրավունքը կիրառելուն: Խորհրդատվական կոմիտեն այս առումով նշում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող որոշ անձինք, որոնք չեն պատկանում ռուսական փոքրամասնությանը, ռուսերենը համարում են իրենց մայրենի լեզուն և սովորում ու օգտագործում են այն:

Նշելով, որ երկրի՝ անկախությունն ձեռք բերելու պահից ռուսերենը աստիճանաբար իր դիրքերն է զիջում հայերենին, որը, օրենսդրության համաձայն, պետք է օգտագործվի բոլոր ոլորտներում, այդ անձինք կարծում են, որ դա արգելք է հանդիսանում իրենց համար՝ ներգրավվելու հայ հասարակության մեջ:

58. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների որոշ ներկայացուցիչներ, բացի փոքրամասնության լեզվով կրթություն ստանալու վերոհիշյալ ընդհանուր երաշխիքներից և դրույթներից, «Լեզվի մասին» օրենքը փոքրամասնության լեզվի պահպանման համապատասխան պաշտպանություն չի ապահովում: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ օրենքը կառավարման հարաբերություններում փոքրամասնության լեզվի կիրառման վերաբերյալ մանրամասներ չի պարունակում: Այս առումով Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ, համաձայն Հայաստանի օրենսդրության, Հայաստանի կառավարման լեզուն հայերենն է ինչպես պաշտոնական թղթակցությունում, այնպես էլ միջգերատեսչական և հասարակական հարաբերություններում: Այնուամենայնիվ, համաձայն ազգային զեկույցի՝ «փոքրամասնության լեզվի կիրառումը վարչական իշխանությունների հետ հարաբերություններում կթուլատրվի այն մարզերում, որտեղ ազգային փոքրամասնությանը պատկանող բնակչության թիվը բավականին մեծ է»: Սակայն երևում է, որ չկա հստակ չափանիշ, թե ինչն է համարվում «բավականին մեծ թիվ»: Ինչպես ցույց է տալիս իրականությունը, իշխանությունները նշում են, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց բավականին մեծ թիվ ունեցող շրջաններում տեղական իշխանության պաշտոնները հիմնականում գրավում են այդ փոքրամասնությունների ներկայացուցիչները, ինչը փաստացիորեն (դե ֆակտո) հնարավորություն է տալիս հասարակությանը՝ օգտագործելու փոքրամասնության լեզուն կառավարման հարաբերություններում:

59. Խորհրդատվական կոմիտեի կարծիքով, իշխանությունները պետք է փորձեն ապահովել պայմաններ, որպեսզի հնարավոր լինի փոքրամասնությունների լեզուն օգտագործել կառավարման հարաբերություններում Շրջանակային կոմիտեի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում հաստատված չափանիշներին համապատասխանող բոլոր շրջաններում: Խորհրդատվական կոմիտեն նաև այն կարծիքին է, որ այս հնարավորությունը չպետք է պարզապես բողոքված լինի շահագրգիռ իշխանությունների ազատ ընտրությանը: Խորհրդատվական կոմիտեն, այսպիսով, համարում է, որ Հայաստանի օրենսդրությունը պետք է մանրամասնի այս իրավունքի իրականացման ապահովման պայմանները, և խորհուրդ է տալիս իշխանություններին՝ անհրաժեշտ օրենսդրական և այլ քայլեր ձեռնարկել դրա լիակատար և արդյունավետ իրագործման համար:

60. Ավելի լայն առումով Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին փոքրամասնության լեզվի օգտագործման վերաբերյալ իրավիճակը վերանայել և անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ խորհրդակցելով շահագրգիռ կողմերի հետ՝ իրենց յուրաքանչյուր լեզվական պահանջները բավարարելու համար:

Հոդված 11

61. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանի օրենսդրությունը փոքրամասնության լեզուն հասարակության համար նախատեսված տեղանունները, փողոցների անվանումները և այլ տեղագրական անվանումներն օգտագործելու հնարավորության վերաբերյալ հատուկ նորմեր չի պարունակում:

62. Այս առումով ազգային զեկույցը մատնանշում է տեղական ինքնակառավարման և երկրի վարչատարածքային սահմանների վերաբերյալ տեքստերի մեջ պարունակվող նշանակալից օրենսդրական դրույթները: Սակայն Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ այդ դրույթները չեն մանրամասնում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լեզվի իրավունքները: Չնայած այդ հարցի վերաբերյալ ոչ մի բողոք չի ստացվել՝ Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է Հայաստանի իշխանություններին՝ ուսումնասիրել առկա իրավիճակը և լրացնել օրենսդրությունը բարեփոխումների շրջանակներում՝ Շրջանակային կոմիտեի 11-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները լիարժեք կատարելու համար:

Հոդված 12

63. Օրենսդրության բնագավառում Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Սահմանադրության 35-րդ հոդվածը երաշխավորում է Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը: Ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց վերաբերյալ Խորհրդատվական կոմիտեն մտահոգված է այն փաստով, որ, վերոհիշյալ ընդհանուր երաշխիքից բացի, պետությունը չի կատարում որևէ ակտիվ կրթական քաղաքականություն հոգևոր աջակցի անձանց և չնչին աջակցություն է ցուցաբերում կամ չի ցուցաբերում ազգային փոքրամասնությունների կրթական նախաձեռնություններին: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ուշադրություն են հրավիրում, որ իշխանությունները լիափութ են շահագրգիռ անձանց գործողություններով և բարեկամ պետությունների օգնությամբ: Խորհրդատվական կոմիտեն նշում է այս կապակցությամբ հանդիպող հիմնական խնդիրները եզրինների և ասորիների կողմից, որոնք բարեկամ պետությունից օգնություն չեն ստանում: Չնայած երկրում ծառայած տնտեսական դժվար

րություններին՝ կառավարությունը խրախուսվում է լայնորեն ներգրավել այս ոլորտում այնպիսի գործնական օգնության միջոցներով, որոնք հնարավորություն կտան այդպիսի անձանց իրականացնել իրենց կրթության իրավունքը և բաջալերել իրենց մշակութային պատմական, լեզվական իրազեկությունը և ավանդույթները. այնպես, ինչպես նաև մեծամասնության այդպիսի իրազեկությունը և ավանդույթները:

64. Կրթության մատչելիության հավասար հնարավորությունների կապակցությամբ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությանը պատկանող անձինք կցանկանային, որ կառավարությունը դիտեր այդ հնարավորությունը որպես իրական իրավունք՝ անհրաժեշտ դարձնելու պետության ակտիվ աջակցությունը: Այս ենթատեքստում Խորհրդատվական կոմիտեն մտահոգված է որոշ եզրի երեխաների առջև ծառայած դժվարություններով: Որոշ աղբյուրների համաձայն՝ թույլ կամ գոյություն չունեցող պետական աջակցության խնդիրը, որը չի կարող փոխհատուցվել որևէ բարեկամ պետության օգնությամբ, լրացվում է աքսենտիկամի բարձր մակարդակով, մասնավորապես՝ տնտեսական պատճառներով և որոշ աշակերտների ու ուսուցիչների խտրական վերաբերմունքով: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ իշխանությունները պետք է ուշադրություն դարձնեն այս վիճակին և ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը՝ նշված թերությունները բացառելու համար:

65. Խորհրդատվական կոմիտեն մտահոգված նշում է ազգային փոքրամասնությունների դպրոցների պատշաճ գործելու համար ռեսուրսների անբավարարությունը: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից շեշտված և կառավարությունում լայնորեն իրազեկված թերությունների հետ միասին Խորհրդատվական կոմիտեն նշում է ուսուցիչների պակասը ազգային փոքրամասնությունների լեզուներով դասավանդվող դպրոցների, ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների համար մինչդպրոցական հիմնարկների և հասարակական աջակցության պակասը այդ բնագավառում, ինչպես նաև համապատասխան դասագրքերի և դասավանդման ծրագրերի բացակայությունը: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մշակույթը, պատմությունը, կրոնը և ավանդույթները դասավանդվում են միայն կիրակնօրյա դասարաններում՝ հիմնական դասավանդման ծրագրի մաս կազմելով: Ակնհայտ է, որ չնայած օրենսդրությունը երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուն և պատմությունը դասավանդող կիրակնօրյա դպրոցների և ոչ պարտադիր դասարանների գործունեությունը, դրանք բացահայտորեն թույլ են և դժվարությամբ են գործում՝ պետական աջակցության բացակայության պատճառով: Խորհրդատվական կոմիտեն նաև նշում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող աշակերտ-

ները ենթարկվում են խտրական վերաբերմունքի այն իմաստով, որ քննությունների ընդունելության տեղեկատվությունը և դպրոցական քննությունները կազմակերպվում են բացառապես հայերենով: Ըստ Խորհրդատվական կոմիտեի՝ իշխանությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը վերոհիշյալ թերությունները բացառելու համար:

66. Ինչևէ, Խորհրդատվական կոմիտեն նշում է կառավարության կողմից ձեռնարկված կրթության մատչելիության բնագավառում դրական նախաձեռնությունները: Օրինակ՝ ազգային փոքրամասնությունների հարցերով պատասխանատու վարչություն է ստեղծվել ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնում: Այս վարչությունը նպատակաուղղված է աջակցելու ազգային փոքրամասնություններին վերաբերող ուսումնական ծրագրերը պետական դպրոցներում նախապատրաստելու, դասագրքեր կազմելու և ֆինանսական միջոցներ հայթայթելու համար՝ համագործակցելով ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց և նրանց միությունների հետ:

67. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ վերջին մի քանի տարիների ընթացքում առաջնահերթ են համարվում ազգային փոքրամասնությանը պատկանող ուսանողների համար բարձրագույն կրթության մատչելիության համար տեղեր հատկացնելը, մասնավորապես այն անձանց համար, ովքեր ցանկանում են իրենց ազգային փոքրամասնության լեզուն սովորելու նպատակով հաճախել դասընթացների:

68. Խորհրդատվական կոմիտեն, բավարար համարելով, նշում է, որ այս բնագավառում իրենց դրական փորձի տեսանկյունից իշխանությունները հայտարարել են իրենց մտադրությունը՝ վերագործարկելու երկկողմ համագործակցությունը կրթության բնագավառում բարեկամ պետությունների հետ Հայաստանում որոշ ազգային փոքրամասնությունների համար: Նրանք հուսով են, որ դա կընդլայնի ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց հնարավորությունները, մասնավորապես, կապված դասագրքերի մատակարարման և ուսուցիչների որակավորման հետ:

69. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է Հայաստանի իշխանություններին՝ իրագործելու վերը նշված գործողությունները առանց հապաղման՝ խորհրդակցելով շահագրգիռ անձանց հետ իրենց յուրահատուկ կարիքների առնչությամբ:

Միևնույն ժամանակ Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ նշված թերությունները պետք է պարբերաբար շտկվեն ազգային փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ հատուկ օրենսդրության ընդունման և կատարման քաղաքականության միջոցով:

Հողված 13

70. Հիմնվելով իր տրամադրության տակ առկա տեղեկության վրա՝ Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ այս հողվածի իրականացումը ենթակա չէ հատուկ դիտարկումների:

Հողված 14

71. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանի օրենսդրությունը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ սովորելու իրենց մայրենի լեզուն, օրինակ՝ «Լեզվի մասին» օրենքը (2-րդ հոդված), որն ընդգծում է, որ Հայաստանի տարածքում հայերենը հանդիսանում է կրթության և ուսուցման լեզու, ապահովում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համայնքներում այդ փոքրամասնությունների մայրենի լեզվով ընդհանուր ուսուցում կազմակերպելու հնարավորությունը՝ որպես պետական ծրագրի մաս, և պետական օժանդակությամբ՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ: Խորհրդատվական կոմիտեն, ինչևէ, այս դրույթը բավական պարզ չի համարում (մասնավորապես ազգային փոքրամասնություններից նվազագույն քանակով աշակերտներ կարիք ունեն մասն կրթությամբ ապահովվելու) և խորհուրդ է տալիս իշխանություններին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցառումները՝ հստակեցնելու համար այն պայմանները, որոնց առկայությամբ վերոհիշյալ իրավունքը հնարավոր կլինի իրականացնել:

72. Խորհրդատվական կոմիտեի համար ցավալի է, որ կան ազգային փոքրամասնություններին պատկանող աշակերտների համար սակավաթիվ դպրոցներ (միայն մի քանի ռուսական դպրոցներ կան և ոչ մի հատ՝ այլ ազգային փոքրամասնությունների համար), և հազիվ թե կան փոքրամասնության լեզվի ուսուցմամբ դասարաններ: Բացառությամբ ռուսերենի, որը դասավանդվում է դպրոցների մեծ մասում, քրդերենը դասավանդվում է միայն այդ փոքրամասնությանը պատկանող բավարար մեծ քանակությամբ աշակերտների բնակավայրերի մի քանի դասարաններում, մինչդեռ հունարենը և ասորերենը դասավանդվում են մի քանի դպրոցներում՝ որպես ոչ պարտադիր առարկաներ:

Խորհրդատվական կոմիտեն նշում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում արաբերեն, թուրքերեն և պարսկերեն բաժինների առկայությունը: Ինչևէ, ազգային զեկույցի համաձայն կրթության բնագավառում ուսուցման լեզվի 98.1 %-ը հայերենն է, ուսանողների 1.7 %-ը կրթություն ստանում են ռուսերենով, իսկ 0.2 %-ը՝ այլ լեզուներով:

73. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ռուսական փոքրամասնությունը ավելի մեծ հնարավորություն ունի կրթություն ստանալու իր մայրենի լեզվով նախադպրոցական, միջնակարգ և համալսարանական մակարդակներով: Քրդերենը, երրայերենը, հունարենը և լեհերենը դասավանդվում են նախադպրոցական մակարդակով հատուկ կիրակնօրյա դասարաններում՝ համապատասխան համայնքների կողմից ձեռնարկված միջոցառումների շնորհիվ:

Այնհայտ է, որ չնայած օրենքը նախատեսում է ազգային փոքրամասնությունների լեզուն և պատմությունը ուսումնասիրող կիրակնօրյա և այլ կամընտիր դասարանների համար մեծ միջոցառումներ, այնուամենայնիվ, դրանք շատ թույլ են և դժվարությամբ են գործում պետական աջակցության բացակայության պատճառով:

Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ, չնայած գերակշռող դժվարություններին, ազգային փոքրամասնությունների որոշ ներկայացուցիչներ մատնանշում են, որ նրանք բավարարված կլինեն, եթե պետությունը օժանդակի բազմալեզու դպրոցներին:

74. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց որոշ մասը կրթության համար նախընտրում է ռուսերենը ավելի հաճախ, քան իր սեփական լեզուն՝ այն պատճառաբանությամբ, որ իրենք արդեն գիտեն ռուսերենը և այդ լեզվով ուսումը իրենց մատչելի է: Ավելին, ազգային փոքրամասնություններին պատկանող որոշ անձինք նշել են հայերեն սովորելու դժվարությունները, մասնավորապես, այդ լեզվով դասագրքերի սակավության պատճառով: Գիտակցելով, որ պետական լեզուն հնարավոր է, որ խրախուսի ինտեգրացիան և արդյունավետ մասնակցությունը հասարակական կյանքին, այդպիսի անձինք ակնկալում են այդ ոլորտում ընդլայնված պետական աջակցություն: Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին տարբեր ազգային փոքրամասնությունների լեզվական պահանջները քննության առնել և փորձել գտնել լավագույն լուծումներ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ:

75. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ բացի առավել տարածված ֆինանսական, վարչական և տեխնիկական դժվարություններին, ամենաբարդ հիմնախնդիրներից մեկը համապատասխան որակավորմամբ ուսուցիչների պակասն է: Խորհրդատվական կոմիտեն կրկին նշում է կառավարության վերոհիշյալ նախաձեռնությունը՝ ստեղծել քվոտաներ ազգային փոքրամասնությունների ուսանողների բարձրագույն կրթության համար (տես 67-րդ կետը): Խորհրդատվական կոմիտեն նաև նկատի է առնում այդ քվոտաներով շահագրգռված ուսանողների հետ համաձայնագրերի կնքումը, համաձայնագրեր, որոնց ուժով նրանք կնախաձեռնեն աշխատել մի քան

նի տարի որպես մայրենի լեզվի ուսուցիչներ իրենց համայնքում: Խորհրդատվական կոմիտեն գնահատում է, որ իշխանությունները ծրագրում են մինչև 2005թ. ընկած ժամանակահատվածը «Կրթական քաղաքականության պետական ծրագրի» շրջանակներում հրատարակել ակադեմիական առարկաների վերաբերյալ դասագրքեր փոքրամասնությունների լեզուներով:

76. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ասորիները և եզդիները, որոնք չունեն բարեկամ-աջակից պետություն, բավարարված չեն այս բնագավառում, և այդ պատճառով խրախուսվում են իշխանությունները՝ ձեռնարկելու լրացուցիչ միջոցներ՝ օգնելու նրանց և հաստատելու նրանց լեզվական ինքնությունը:

Հոդված 15

77. Ազգային փոքրամասնության պատկանող անձանց հասարակական կյանքին մասնակցելու կապակցությամբ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ չնայած այս հարցի վերաբերյալ իշխանությունների բացահայտ դիրքորոշմանը՝ էական ջանքեր են անհրաժեշտ այս իրավունքը արդյունավետ իրականացնելու համար: Օրինակ՝ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունները ներկայացված չեն խորհրդարանում կամ որևէ այլ կառավարական մարմնում: Նույնիսկ եթե չկա դա արգելող օրենք, ապա գոյություն չունի այդպիսի անձանց համար խորհրդարան մուտքը խրախուսող և, ընդհանուր առմամբ, նաև իշխանության այլ ճյուղերում ընդգրկելու մասին դրույթներ: Պարզ է, որ ոչ նոր ընտրական օրենսգիրքը, ոչ էլ տեղական ինքնակառավարման մասին օրենքի նախագիծը չեն պարունակում դրույթներ հասարակական կյանքին այդպիսի անձանց մասնակցությունը կատարելագործելու վերաբերյալ: Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն փաստը, որ ազգային փոքրամասնությանը պատկանող որոշ անձինք զբաղեցնում են պաշտոններ տեղական և տարածքային կառավարման մարմիններում: Չնայած Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ հատուկ միջոցներ են անհրաժեշտ ձեռնարկել, որպեսզի ապահովվի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը հասարակական կյանքին:

78. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ցանկանում են ավելի մոտ ներգրավված լինել իրենց վրա ազդեցություն ունեցող որոշումների կայացմանը: Նրանք շեշտում են, որ խորհրդատվության ներկա միջոցները, մասնավորապես, ազգային փոքրամասնությունների համակարգող խորհուրդը և/կամ ազգությունների միությունը բավարար արդյունավետ չեն:

79. Ինչ վերաբերում է Համակարգող խորհրդին, որը որպես խորհրդակցական մարմին ստեղծվել է 2000թ. մարտին՝ նախագահի կողմից, Ազգային փոքրամասնությունների առաջին համագումարի լույսի ներքո, ազգային փոքրամասնությունները հույս ունեն, որ այդ մարմնի կարգավիճակը և գործողության ժամկետը կպարզեցվեն, և այն կապահովվի համապատասխան շինություններով: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ այս խորհուրդը, որը կազմված է 11 տարբեր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից, ղեկավարվում է քաղաքացիական ծառայող և նախագահի խորհրդական հանդիսացող անձի կողմից, և որ նրա լիազորությունները բավական սահմանափակ են: Նմանապես, Խորհրդատվական կոմիտեն հայտնաբերել է փոքրամասնությունների ներկայացուցիչների շրջանում մի շարք տարածայնություններ և դժվարություններ: Բացի դրանից, թվում է արդեն գոյություն ունեցող ազգային փոքրամասնությունների 12 մշակութային կազմակերպություններից բաղկացած Ազգությունների միության հետ մեկտեղ այդ խորհրդի ստեղծումը լարվածության պատճառ է:

80. Ընդհանրապես Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց միջև համաձայնության պակասը արդյոք իրականում օգնում է թե ոչ այդ ներկայացուցչական մարմինները իրենց վիճակը բարելավելուն, հետևաբար պարզ է, որ կառավարությունը պետք է ուղղակի երկխոսություն հաստատի ոչ միայն Համակարգող խորհրդի և Ազգությունների միության հետ, այլ նաև առանձին ազգային փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպությունների հետ՝ նրանց առանձնահատուկ պահանջները պարզելու և անմիջապես գործելու նպատակով:

81. Կառավարության տեսակետից՝ Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունների խնդիրները առնչվում են տարբեր իրավասու իշխանություններին՝ իրական համագործակցության կամ բոլոր ծրագրած միջոցների իրագործման հայեցակարգի բացակայության պայմաններում: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ, չնայած իշխանությունների ձեռնարկած այդ հատուկ միջոցներին և այդ հարցի վերաբերյալ կառավարության դիրքորոշմանը, գոյություն չունի ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը նվիրված ամբողջովին մշակված պետական քաղաքականություն: Ըստ Խորհրդատվական կոմիտեի՝ դա հատկապես անհանգստացնում է, երբ դժվարություններ են առաջանում Հայաստանի տարբեր պետական մարմինների միջև կապ պահպանելու հարցում:

82. Այս ենթատեքստում Խորհրդատվական կոմիտեն բավարարվածությամբ նշում է, որ իշխանությունները վերջերս գիտակցել են, որ թերություններ առկա են: Նրանք հայտարարեցին իրենց մտադրությունը՝ ներկայացնելու իրավական և ինստիտուցիոնալ կարգավորումներ՝ հնարավորինս

շուտ օժանդակելու ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ներգրավմանը իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործում: Խորհրդատվական կոմիտեն մասնավորապես նշում է իր մտադրությունը՝ ընդունելու հատուկ օրենք և հիմնելու կառավարական մարմին, որը պատասխանատու կլինի ազգային փոքրամասնությունների պաշտպանության համար, ինչպես նաև իրագործելու միջոցներ՝ այս բնագավառում համակցված քաղաքականություն իրականացնելու նպատակով: Համաձայն ազգային զեկույցի՝ նման կառույցներ նույնպես պետք է ստեղծվեն տեղական և տարածքային վարչակազմների մակարդակով: Բացի դրանից՝ ակնհայտ է, որ ազգային փոքրամասնությունների մասին օրենքի նախագիծը կպարունակի դրույթներ, որոնք կերաշխավորեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ քաղաքական կյանքին մասնակցելու իրավունք: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ազգային փոքրամասնությունները ողջունում են այդ միջոցները և մեծ ակնկալիքներ ունեն այդ նոր մարմինների հետ իրենց ապագա համագործակցությունից: Ակնկալվում է, որ դա կհանգեցնի այդպիսի մասնակցության գործնական փոփոխությունների, որը կօժանդակի այդ անձանց շահագրգռվածությունը:

Հոդված 16

83. Հիմնվելով իր տրամադրության տակ առկա տեղեկության վրա՝ Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ այս հոդվածի կատարումը ենթակա չէ հատուկ դիտարկումների:

Հոդված 17

84. Չնայած հարևան որոշ երկրների սահմանների հատման մասնակի սահմանափակումներին՝ Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է երաշխավորեն, որ այդ վիճակը չպետք է խաչընդոտ լինի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ միջսահմանային շփումներ հաստատելու և պահպանելու իրավունքի համար:

Հոդված 18

85. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այն փաստը, որ Հայաստանը հանդիսանում է ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը նվիրված մի շարք երկկողմ պայմանագրերի և մշակութային համաձայնագրերի մասնակից /Բուլղարիա, Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Հունաստան, Ղազախստան, Լիբանան, Ռումինիա և Ուկրաինա/:

Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է, որ Հայաստանի իշխանությունները երաշխավորեն, որ այս համաձայնագրերի կատարման մեխանիզմները կօգնեն հիշատակված անձանց արդյունավետ պաշտպանությունը կատարելագործելուն:

86. Մեծ նշանակություն տալով պետությունների միջսահմանային համագործակցությանը՝ որպես ազգային փոքրամասնությունների պաշտպանության միջոցների՝ Խորհրդատվական կոմիտեն ցավում է, որ Հայաստանի նման համագործակցությունը չի կարող զարգանալ բոլոր հարևանների հետ: Նա հույս է հայտնում, որ իրավացի և տևական քաղաքական կարգավորումը թույլ կտա լուծել առկա հիմնախնդիրները՝ *inter alia* ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շահերից ելնելով:

Հոդված 19

87. Հիմնվելով իր տրամադրության տակ առկա տեղեկության վրա՝ Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ այս հոդվածի կատարումը ենթակա չէ հատուկ դիտարկումների:

IV. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

88. Խորհրդատվական կոմիտեն հավատում է, որ ներքոնշյալ հիմնական եզրահանգումները և մեկնաբանությունները օգտակար կլինեն կառավարության և ազգային փոքրամասնությունների միջև երկխոսության շարունակության համար, որին Խորհրդատվական կոմիտեն պատրաստ է աջակցել:

3-րդ հոդվածի առնչությամբ

89. Խորհրդատվական կոմիտեն *գրկնում է*, որ Հայաստանի օրենսդրությունը պարունակում է որոշակի դրույթներ, որոնք առանձնահատուկ են ազգային փոքրամասնությունների պաշտպանության համար: Խորհրդատվական կոմիտեն *համարում է*, որ կարևոր է ստեղծել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համապատասխան պաշտպանությունն ապահովելու համար ճկուն օրենսդրական շրջանակ և խրախուսում է իշխանություններին՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ ջանքերը այս կապակցությամբ՝ շահագրգիռ անձանց հետ խորհրդակցելով:

90. Խորհրդատվական կոմիտեն *գրկնում է*, որ անորոշության մակարդակով գոյություն ունի «ազգային փոքրամասնություն» հասկացության, ինչպես նաև Հայաստանի իշխանությունների կողմից որպես ազգային փոքրա-

մասնություններ ճանաչված խմբերի ընկալում, մասնավորապես, երբ այդպիսի խմբերը չունեն ներկայացուցչական կազմակերպություններ: Նմանապես, Խորհրդատվական կոմիտեն *գրկում է*, որ գոյություն ունի որոշակի վեճ քրդերի և եզդիների ազգային պատկանելության հարցում: Խորհրդատվական կոմիտեն *համարում է*, որ այս ոլորտում նախատեսված օրենսդրական միջոցառումների ենթատեքստում և վերջին մարդահամարի լույսի ներքո իշխանությունները պետք է կատարեն անհրաժեշտ հստակեցումներ՝ հաշվի առնելով շահագրգիռ անձանց արտահայտած դիրքորոշումը: Խորհրդատվական կոմիտեն *համարում է*, որ հնարավոր կլինի քննարկել այլ խմբերին պատկանող անձանց ընդգրկումը, մասնա՝ անհրաժեշտության դեպքում ոչ քաղաքացիների ընդգրկումը, Շրջանակային կոմիտեի հայի կիրառման ոլորտում՝ հողված առ հողված սկզբունքի հիման վրա:

4-րդ հոդվածի առնչությամբ

91. Խորհրդատվական կոմիտեն *գրկում է*, որ Հայաստանում ձգձգվել է մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ստեղծումը, և ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանության շահերից ելնելով՝ *համարում է*, որ իշխանությունները պետք է ձեռնարկեն բոլոր ջանքերը՝ արագացնելու այդ ինստիտուտի ստեղծումը:

92. Մինչդեռ, նշելով, որ Հայաստանի դատարաններում, ըստ տեղեկությունների, չեն գրանցվել անձանց էթնիկ ծագման վրա հիմնված խտրականության վերաբերյալ գործերով բողոքներ, Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ իշխանություններն ունեն միայն խիստ սահմանափակ տեղեկություն անխտրականության վերաբերյալ օրենսդրության գործնական կիրառման մասին: Գիտակցելով, որ, չնայած այլ աղբյուրներից առկա խտրականության վերաբերյալ որոշ գործերի առկայությանը, Խորհրդատվական կոմիտեն *համարում է*, որ անհրաժեշտ է այս ոլորտի վիճակը մոնիտորինգի ենթարկել:

93. Խորհրդատվական կոմիտեն *գրկում է*, որ ազգային փոքրամասնության պատկանող անձանց և մեծամասնության միջև ամբողջական և արդյունավետ հավասարությունը պաշտպանելու համար լրացուցիչ միջոցների ձեռնարկում է պահանջվում կրթության, մշակույթի և հասարակական կյանքի մասնակցության ոլորտներում: Խորհրդատվական կոմիտեն *համարում է*, որ Հայաստանի իշխանությունները պետք է առաջնահերթ դարձնեն իրենց քայլերը վերոհիշյալ ոլորտների կապակցությամբ:

5-րդ հոդվածի առնչությամբ

94. Խորհրդատվական կոմիտեն *գրկում է*, որ, համաձայն ազգային

փոքրամասնությունների ներկայացուցիչների, պետական աջակցությունը իրենց մշակույթի և ազգային ինքնության պահպանման և զարգացման համար բավարար չէ: Խորհրդատվական կոմիտեն *համարում է*, որ, չնայած պետության տնտեսական դժվարություններին, իշխանությունները պետք է ձեռնարկեն լրացուցիչ միջոցներ այս ոլորտում, ներառյալ՝ աջակցելով ազգային փոքրամասնությունների համար կրթական կենտրոն ստեղծելուն:

95. Խորհրդատվական կոմիտեն *գրկում է*, որ ազգային փոքրամասնություններին մշակույթի ոլորտում աջակցելու առաջարկը վերջերս կատարվել է ինստիտուցիոնալ և օրենսդրական նախաձեռնությամբ: Խորհրդատվական կոմիտեն *համարում է*, որ այդ միջոցառումները պետք է ընդունվեն և իրականացվեն որքան հնարավոր է շուտ՝ երաշխավորելով, որ իրավասու մարմինների և շահագրգիռ անձանց միջև պարբերական խորհրդակցության ավելի լավ համակարգում գոյություն ունի:

6-րդ հոդվածի առնչությամբ

96. Խորհրդատվական կոմիտեն *գրկում է*, որ ներկայումս հանդուրժողականության և երկխոսության մթնոլորտը գերակայում է Հայաստանում բնակվող տարբեր էթնիկ խմբերի միջև, բայց նշում է, որ մարդու իրավունքների որոշ կազմակերպություններ շեշտում են կրոնական հանդուրժողականության ոլորտում թերությունները: Խորհրդատվական կոմիտեն *համարում է*, որ իշխանությունները պետք է կենտրոնացնեն իրենց ջանքերը այս ոլորտում երկխոսությունը և հանդուրժողականությունը կատարելագործելու նպատակով:

97. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ եզդիների նկատմամբ խտրական վերաբերմունքի վերաբերյալ տեղեկություն գոյություն ունի, մասնավորապես՝ այդպիսի վերաբերմունք՝ տեղական իշխանությունների կողմից, ոստիկանության կողմից այդ փոքրամասնությանը պատկանող անձանց նկատմամբ թշնամական կամ կամայական գործողություններ կատարելու կապակցությամբ ուշադրության պակասը: Խորհրդատվական կոմիտեն *համարում է*, որ եթե մույնիսկ այս դեպքերը հազվագյուտ են, այնուամենայնիվ, իշխանությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու այդպիսի միջադեպերը՝ խրախուսելով շահագրգիռ անձանց՝ այդպիսի դեպքերի վրա հրավիրել իշխանությունների ուշադրությունը և ապահովել տուժածների պաշտպանությունը:

9-րդ հոդվածի առնչությամբ

98. Խորհրդատվական կոմիտեն *գրկում է*, որ չնայած օրենքով երաշխավորված է զանգվածային լրատվության միջոցներին ազգային փոքրա-

մասնությամբ պատկանող անձանց մատչելիությունը, այնուամենայնիվ գոյություն ունեն թերություններ և օրենսդրական, և գործնական մակարդակներով: Խորհրդատվական կոմիտեն *համարում է*, որ իշխանությունները պետք է առաջնահերթ կարգով ձեռնարկեն միջոցներ՝ զանգվածային լրատվության միջոցները փոքրամասնությունների համար մատչելի դարձնելու և այդտեղ նրանց ներկայությանը նպաստող հնարավորությունների ընդլայնման համար, որպեսզի լիովին իրագործեն այս ոլորտում Շրջանակային կոմիտեիցիայով պաշտպանվող իրավունքները:

99. Խորհրդատվական կոմիտեն *զարմում է*, որ հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը չափազանց սահմանափակ է հանրային զանգվածային լրատվության մեջ փոքրամասնության լեզուների կիրառման համար, մասնավորապես՝ հանրային հեռուստատեսությունում: Խորհրդատվական կոմիտեն *համարում է*, որ իշխանությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ, ներառյալ՝ օրենսդրական մակարդակով, հանրային հեռուստատեսության և ռադիոժառայությունների ոլորտներում՝ փոքրամասնությունների լեզուների հեռարձակման համար հատկացված ժամանակը ավելացնելու նպատակով:

100. Խորհրդատվական կոմիտեն *զարմում է*, որ մասնավոր էլեկտրոնային կամ տպագիր մամուլ հիմնադրելու վերաբերյալ ազգային փոքրամասնություններին առաջարկված աջակցությունը անբավարար է: Խորհրդատվական կոմիտեն *համարում է*, որ իշխանությունները պետք է քննարկեն իրավիճակը և սահմանեն այդպիսի աջակցության ավելացման ձևերն ու միջոցները, երբ մշակում կամ ընդունում են զանգվածային լրատվության միջոցների պետական աջակցության մասին օրենք: Մասնավորապես՝ ուշադրության է արժանի այն, որ պետք է շահագրգիռ անձանց հետ խորհրդակցության միջոցով համապատասխանեցվեն օգնությունը կարիքներին և արդյունքները ամփոփվեն տարբեր ազգային փոքրամասնությունների միջև:

10-րդ հոդվածի առնչությամբ

101. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ հստակության պակաս կա Հայաստանի օրենսդրության մեջ վարչական իշխանությունների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուները օգտագործելու իրավունքի կապակցությամբ և նշում է, որ համաձայն իշխանությունների՝ նման հնարավորություն գոյություն ունի ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց զանգվածային բնակեցման շրջաններում: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ այս հնարավորությունը չպետք է միայն թողնել իշխանությունների հայեցողությանը և համապատասխան

միջոցներ պետք է ձեռնարկվեն, ներառյալ՝ օրենսդրական մակարդակով, այս իրավունքի արդյունավետ կիրառումը երաշխավորելու համար:

102. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ ազգային փոքրամասնությունների ներկա-յացուցիչները համարում են, որ «Լեզվի մասին» օրենքի կողմից փոքրամասնությունների լեզուների պաշտպանությունը անբավարար է: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ իշխանությունները պետք է ուսումնասիրեն իրավիճակը՝ շահագրգիռ անձանց հետ համագործակցելով, և ձեռնարկեն համապատասխան միջոցներ նրանց լեզվական կարիքները բավարարելու համար:

11-րդ հոդվածի առնչությամբ

103. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ հստակության պակաս կա Հայաստանի օրենսդրության մեջ՝ կապված տեղագրական նշաններում փոքրամասնությունների լեզուների օգտագործման հնարավորության կապակցությամբ: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ, չնայած այն փաստին, որ որևէ արձագանք չի ստացվել շահագրգիռ անձանցից, իշխանությունները պետք է լրացնեն իրենց օրենսդրությունը, որ երաշխավորեն Շրջանակային կոմիտեիցիայի համապատասխան դրույթների արդյունավետ կատարումը:

12-րդ հոդվածի առնչությամբ

104. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար կրթության ոլորտում գոյություն չունի ակտիվ պետական քաղաքականություն, և որ վերջիններիս նախաձեռնությունների համար պետության կողմից առաջարկված օժանդակությունը անբարար է: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ իշխանությունները այս ոլորտում պետք է ցուցաբերեն ավելի մեծ պատրաստակամություն, որպեսզի երաշխավորեն այդ անձանց իրավահավասարությունը կրթության մատչելիության կապակցությամբ, և որ նրանք իրազեկ լինեն իրենց մշակութային, պատմությանը, լեզուներին և ավանդույթներին այնպես, ինչպես մեծամասնությունը:

105. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ փոքրամասնությունների լեզուներով դասավանդվող դպրոցների համար կա ուսուցիչների, հատուկ դասավանդման ծրագրերի և դասագրքերի պակաս: Կոմիտեն նաև մտահոգված է, որ կա ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների համար նախադպրոցական հիմնարկների պակաս: Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ ասորիները և եզդիները որոշակի առումով հանդիպում են այդպիսի դժվարությունների, և որոշ դեպքերում եզդի երեխանե-

րը խտրական վերաբերմունքի են ենթարկվում որոշ աշակերտների և ուսուցիչների կողմից: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ իշխանությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցները այդ թերությունները բացառելու նպատակով:

106. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ կրթության մատչելիության բնագավառում համապատասխան նախաձեռնություններ են ցուցաբերվել վերջերս, և համարում է, որ իշխանությունները դրանք պետք է հետագայում ևս զարգացնեն և փորձեն, որպես ներկա օրենսդրական գործընթացի մաս և խորհրդակցելով շահագրգիռ անձանց հետ, առկա դժվարությունները հաղթահարող լուծումներ գտնել:

14-րդ հոդվածի առնչությամբ

107. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ Հայաստանի օրենսդրությունը բավարար պարզ չէ՝ կապված այն պայմանների հետ, որոնք երաշխավորում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց մայրենի լեզուն սովորելու իրավունքը իրագործելուն: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ իշխանությունները պետք է ուշադրություն դարձնեն այս հարցի վրա և կատարեն անհրաժեշտ պարզեցումներ Շրջանակային կոմվենցիային համաձայն՝ նաև օրենսդրության մեջ փոփոխություն մտցնելով:

108. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ ցավալի է՝ կան սակավաթիվ դպրոցներ և դասարաններ, որոնք կրթություն են տալիս փոքրամասնության լեզվով և նշում է, որ այդ բնագավառում փոքրամասնությունների ցուցաբերած նախաձեռնությունները լիարժեք օժանդակություն չեն ստանում պետության կողմից: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ իշխանությունները պետք է լրացուցիչ միջոցներ ձեռնարկեն՝ հաշվի առնելով տարբեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց յուրահատուկ կարիքները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ասորիների և եզդիների դրությանը: Միևնույն ժամանակ ավելի լայն օժանդակություն է անհրաժեշտ հայերենի դասավանդման առումով՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հայկական հասարակության մեջ ավելի լավ ինտեգրմանը աջակցելու համար:

15-րդ հոդվածի առնչությամբ

109. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ կայուն ջանքեր են պահանջվում՝ կապված հասարակական կյանքին ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցության հետ և, մասնավորապես, նրանց վերաբերյալ որոշումների հետ: Ողջունելով, որ ազգային փոքրա-

մասնություններին պատկանող որոշ անձինք տեղական և տարածքային իշխանության մարմիններում զբաղեցնում են պաշտոններ, Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ պահանջվում են հետագա ջանքեր՝ պետական գործերում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցությունը երաշխավորելու նպատակով:

110. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ ազգային փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ գոյություն չունի իրական քաղաքականություն, և նշում է, որ կան հաղորդակցման դժվարություններ իրավասու մարմինների միջև: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ ազգային փոքրամասնությունների պաշտպանության համար պատասխանատու կառավարական մարմնի հիմնումը, ինչպես դա ծրագրված է կառավարության կողմից, կօգնի այս բնագավառում համակցված քաղաքականություն զարգացնելուն:

111. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ գոյություն ունեն դժվարություններ իշխանությունների և ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների միջև երկխոսության ոլորտում, որոնց ներկայացուցիչները կարծիք են արտահայտում, որ խորհրդակցությունների համար առկա կարգավորումները բավարար չափով արդյունավետ չեն: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ ի լրումն Համակարգող խորհրդի և ազգությունների միության՝ կառավարությունը պետք է պահպանի ուղղակի երկխոսություն տարբեր փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպությունների հետ՝ նրանց յուրահատուկ պահանջներին ծանոթ լինելու և անմիջապես գործելու նպատակով:

17-րդ հոդվածի առնչությամբ

112. Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ այն հանգամանքը, որ որոշ հարևան երկրների սահմանների հատման գոյություն ունեցող մասնակի սահմանափակումները չպետք է խաչընդոտ հանդիսանան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ միջսահմանային շփումներ հաստատելու և պահպանելու իրավունքի համար:

18-րդ հոդվածի առնչությամբ

113. Խորհրդատվական կոմիտեն ցավալի է համարում այն, որ զարգացող սահմանային համագործակցությունը հնարավոր չէ Հայաստանի բոլոր հարևան երկրների հետ: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ իրավացի և տևական քաղաքական կարգավորումը թույլ կտա լուծել առկա հիմնախնդիրները նաև ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շահերից ելնելով:

VI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

114. Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ ներքոնշյալ եզրակացված կիչ դրույթները հավատ կենդանի են սույն կարծիքի նկատմամբ, և դրանք կարող են ծառայել որպես հիմք Նախարարների խորհրդի ընդունված համապատասխան եզրակացությունների և երաշխավորությունների համար:

115. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է ներկայումս Հայաստանում գերակայող մշակութային ներդաշնակությունը, հարգանքը և փոխըմբռնումը և նշում է Հայաստանի ջանքերը Շրջանակային կոնվենցիան իրագործելու ուղղությամբ: Չնայած ներկայումս կան բազմաթիվ թերություններ, մասնավորապես՝ կրթության, գանգվածային լրատվության միջոցների մատչելիության, հասարակական կյանքում փոքրամասնությունների լեզուների օգտագործման և հասարակական հարաբերություններում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցության բնագավառներում:

116. Օրենսդրական մակարդակով, հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների պաշտպանությամբ հատուկ ապահովվող սահմանափակ թվով դրույթները, Խորհրդատվական կոմիտեն ուշադրություն է հրավիրում, որ անհրաժեշտ է հաստատել համապատասխան իրավական հիմք, և այդ կապակցությամբ Հայաստանի իշխանություններին մեծապես խրախուսում է լրացնել և ընդլայնել գոյություն ունեցող օրենսդրական նախաձեռնությունները: Ինստիտուցիոնալ մակարդակով հատուկ կառավարական մարմնի ստեղծումը կօժանդակի իրավասու պետական մարմինների միջև ավելի սերտ համագործակցության հաստատմանը և հնարավոր կդարձնի այդ բնագավառում իրական պետական քաղաքականության զարգացումը:

117. Կապված պրակտիկայի հետ՝ Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ, չնայած կառավարության արտահայտած թափանցիկությանը, այնուամենայնիվ, հետագա քայլերի ձեռնարկում է պահանջվում ազգային փոքրամասնությունների մշակույթի և ազգային ինքնության պահպանմանը և զարգացմանն ուղղված հնարավոր պայմանների իրականացման համար: Այս ոլորտում իշխանությունները, որքան հնարավոր է շուտ, պետք է իրականացնեն իրենց վերջին նախաձեռնությունները՝ ուղղված ազգային փոքրամասնություններին պետության աջակցությունը ամրապնդելուն, ներառյալ ազգային փոքրամասնությունների համար մշակութային կենտրոն ստեղծելուն:

118. Անհրաժեշտ են նաև հետագա ջանքեր գանգվածային լրատվության միջոցները ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար մատչելի դարձնելու համար: Չնայած այդ իրավունքը երաշխավորված է օրենքով, այսուհանդերձ, ներկա դրությունը անբավարար է թե օ-

րենսդրական մակարդակով, թե գործնականում: Հասարակական ռադիո-ծառայություններում փոքրամասնությունների լեզուներով հաղորդումներին հատկացված հեռարձակման ժամանակը պետք է ավելացվի, հատկապես՝ հեռուստատեսությունում, ներառյալ համապատասխան օրենսդրական դրույթների ընդունումը: Պետք է պետության կողմից ավելի մեծ աջակցություն ցուցաբերվի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից մասնավոր էլեկտրոնային և տպագիր մամուլի ստեղծման գործում:

119. Խորհրդատվական կոմիտեն նշում է կրթության բնագավառում առկա թերությունները՝ հատկապես փոքրամասնությունների լեզուների ուսուցման հետ կապված: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ իշխանությունները պետք է ցուցաբերեն ավելի մեծ պատրաստակամություն այդ բնագավառում՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար կրթության բնագավառում իրավահավասարություն ապահովելու և օժանդակելու թե փոքրամասնության, թե մեծամասնության համար իրենց մշակույթին, պատմությանը, լեզուներին և ավանդույթներին իրազեկ լինելուն: Այս բնագավառում առավել մեծ ուշադրության կարիք ունեն ասորիները և եզդիները:

120. Խորհրդատվական կոմիտեն այն կարծիքին է, որ Շրջանակային կոնվենցիայի կատարումը հաջող չի լինի առանց ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց վերաբերյալ որոշումների ընդունման գործին մասնակցության: Խորհրդատվական կոմիտեն հավատում է, որ իշխանությունները պետք է ընդլայնեն այդ անձանց հետ խորհրդակցության ձևերը և առանց հապաղման իրագործեն դրա կապակցությամբ ծրագրված ինստիտուցիոնալ միջոցառումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ
ՓՈԲՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾԻՔԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ

I. Ընդհանուր նկարագրումներ

Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիային համապատասխան ստեղծված Խորհրդատվական կոմիտեն /այսուհետ՝ Կոմիտե/ 2002 թվականի հունիսի 10-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացրել է Հայաստանում վերը նշված կոնվենցիայի կատարման վերաբերյալ իր կարծիքը:

Հայաստանի Հանրապետության իշխանությունները բարձր են գնահատում Խորհրդատվական կոմիտեի կարծիքը և գտնում են, որ Կոմիտեի արժեքավոր, արդիական և օգտակար առաջարկությունները մեծապես կնպաստեն Շրջանակային կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների հետագա կատարմանն ուղղված Հայաստանի իշխանությունների ջանքերին:

Հայաստանի Հանրապետությունը ևս մեկ անգամ հավաստում է իր ստանձնած միջազգային պարտավորությունները կատարելու վճռականությունը և պատրաստակամությունը *pacta sunt servanda* սկզբունքին համապատասխան:

Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության իշխանությունները մեկ անգամ ևս շեշտում են, որ Կոմիտեի կողմից նշված որոշ թերություններ պայմանավորված են նորանկախ, զարգացող և անցումային ժամանակաշրջանում գտնվող պետությանը բնորոշ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և կառուցվածքային փոփոխություններից բխող դժվարություններով: Հայաստանի Հանրապետության պարագայում, Կոնվենցիայի կատարումը պետք է դիտարկել նաև Հայաստանի քաղաքական, ժողովրդագրական, պատմական, սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների և աշխարհագրական դիրքով պայմանավորված որոշակի բարդությունների համատեքստում:

Շրջանակային կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման տեսակետից անհրաժեշտ ենք համարում նշել, որ դրանց կատարումն ամրապնդվում է Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված այլ միջազգային պայմանագրերի՝ Հայաստանի Հանրապետության համար ուժի մտնելով՝ մասնավորապես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի, դրա լրացուցիչ 1-ին, 4-րդ և 7-րդ արձանագրությունների, ինչպես նաև Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի:

Ինչպես նշվել է Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցում և խորհրդատվական կոմիտեի հետ Հայաստանի իշխանությունների անմիջական հանդիպման ընթացքում և Կոմիտեի կարծիքում, Հայաստանի իշխանությունները կարևորում են Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ լիարժեք օրենսդրական դաշտի (մասնավորապես՝ Ազգային փոքրամասնությունների մասին օրենքի) ընդունումը և օրենսդրության որոշակի բարեփոխումները, ինստիտուցիանալ մակարդակով համապատասխան կառույցի ստեղծումը և և գործնական որոշ քայլերի կատարման ակտիվացումը:

II. Կոմիտեի հիմնական եզրահանգումների և մեկնաբանությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մեկնաբանությունները և առարկությունները

1. 3-րդ հոդվածի կապակցությամբ

ա) «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենք

1. Կոնվենցիայի արդյունավետ կատարումն ապահովելու համար Հայաստանը պետք է օրենսդրական համապատասխան լիարժեք բազա ստեղծի:

Օրենսդրական հստակ կարգավորումները հնարավորություն կտան լուծելու բազմաթիվ հարցեր, որոնք գործնականում արդեն իսկ իրականացվում են Հայաստանի իշխանությունների կողմից և ուղղված են ազգային փոքրամասնությունների լեզվի, մշակույթի, պատմության պաշտպանությանն ու պահպանությանը:

«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը բավականաչափ լայն քննարկումների արդյունքում, որոշակի լրամշակումների ենթարկվելով, ներկայացված է ՀՀ կառավարությանը¹⁰:

Հաշվի առնելով Կոմիտեի մտահոգությունը, որ Հայաստանի օրենսդրությունում չկա ազգային փոքրամասնությունների հստակ սահմանում, այնուամենայնիվ, նախագծում լուծված է նաև այդ խնդիրը¹¹:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության առումով ևս օրինագիծը բավականաչափ արմատականորեն է լուծում այդ հարցը:

Օրինագծում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքները բաժանվել են երկու խմբի.

- *ընդհանուր-քաղաքացիական*, որոնցով նրանք բացարձակապես հավասարեցված են Հայաստանի Հանրապետության ազգային մեծամասնություն հանդիսացող քաղաքացիներին և

¹⁰ Ընդ որում, այդ քննարկումներին մի քանի անգամ մասնակցել են իրենք՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները: Ուստի հայկական իշխանությունների համաձայն չեն Կոմիտեի այն կարծիքի հետ, թե ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ներգրավված չեն կառավարության նախաձեռնած օրենքի նախագծի նախապատրաստական աշխատանքներին (տես Կարծիքի 23 կետը):

¹¹ Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի համար ԱՊՀ «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիան ուժի մեջ է մտել 1997թ. հունվարի 10-ից:

11 - առանձնահատուկ-էթնիկական, որոնց իրացման ուղղությամբ էլ օրինազ-
ծում բերված են մի շարք երաշխիքներ: Առանձնահատուկ-էթնիկական իրա-
վունքների թվին են դասված քաղաքացիների ազգային (էթնիկական) ավան-
դույթների, ուսովորույթների, կրոնական հավատալիքների ու համոզմունքնե-
րի, ազգային լեզվի պահպանման, ինչպես նաև ազգային (էթնիկական) ա-
վանդույթներից, սովորույթներից ու կրոնական հավատալիքներից բխող ծի-
սակարգեր կազմակերպելու և դրանց մասնակցելու իրավունքները:

Օրինագծում ազգային փոքրամասնություններին տրված է վերը նշված բո-
լոր իրավունքներից ազատորեն օգտվելու իրավունք՝ նշելով միայն, որ այդ ի-
րավունքներից օգտվելը չպետք է հանգեցնի այլ ազգությունների ներկայացու-
ցիչների համապատասխան իրավունքների ոտնահարմանը:

բ) Եզդիների և քրդերի էթնիկական պատկանելության խնդիրը

Հայաստանում ոչ պետական և ոչ էլ հասարակական մակարդակներով եր-
բեք հարց չի դրվել որևէ ազգության հարկադիր կերպով այլ ազգության դասե-
լու կամ ուժացման խնդիր: Հայ էթնոքաղաքականության կարևորագույն ա-
ռանձնահատկություններից մեկն էլ ավանդականորեն եղել է հանդուրժողա-
կանությունը այլազգիների նկատմամբ:

Ինչ վերաբերում է եզդիների ու քրդերի ինքնության որոշման տարա-ձայ-
նություններին, ապա պետք է նշել, որ այդպիսի խնդիր իրոք կա, բայց դա զուտ
այդ երկու էթնոսների խնդիրն է: Հայկական պետության և հայ հասարակույթ-
յան տասկետին համապատասխան՝ հայկական իշխանությունների կողմից
չպետք է ոչ մի միջամտություն լինի, թե ազգային փոքրամասնության այս կամ
այն ներկայացուցիչը իրեն որ ազգի հետ կնույնացնի:

Կոմիտեի ուշադրություն ենք հրավիրում այն փաստի վրա, որ միանգա-
մայն ժողովրդավարական և Կոնվենցիայի ոգով լուծում է տրվել օրինագծում
(հոդված 4), որտեղ ուղղակիորեն նշված է, որ «Հայաստանի Հանրապետության
յուրաքանչյուր քաղաքացի ինքն է ազատորեն որոշում իր ազգային պատկանե-
լիությունը»: Այդ նույն հոդվածում ամրագրված է նաև հետևյալ դրույթը. «Ոչ ոք
իրավունք չունի Հայաստանի Հանրապետության քաղաքացուց իր ազգային
պատկանելիության ապացուցում կամ դրանից հրաժարում պահանջել»:

*գ) Ազգային փոքրամասնությունների կարգավիճակը ոչ քաղաքացիների
վրա տարածելը*

Թեև Հայաստանի Հանրապետության 37-րդ հոդվածը¹² երաշխավորում է
ազգային փոքրամասնություններին պատկանող ՀՀ քաղաքացիների իրենց ա-
վանդույթների պահպանման, լեզվի և մշակույթի զարգացման իրավունք, այնու-
ամենայնիվ, ելնելով ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածից (որի համաձայն
Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների
սպառնիչ չեն և չեն կարող մեկնաբանվել որպես մարդու և քաղաքացու այլ հան-

¹² Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծով «քաղաքացի» բառը
փոխարինվում է «ամձ» բառով, որը փաստորեն ենթադրում է ազգային փոքրամասնության
պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը:

րանճանաչ իրավունքների և ազատությունների բացառում), ինչպես նաև իր պար-
տավորությունների լույսի ներքո՝ Հայաստանի իշխանությունները չեն բացա-
ռում Շրջանակային կոնվենցիայի կիրառման ոլորտ ոչ քաղաքացիներին ներգ-
րավելու հարցը քննարկելու հնարավորությունը:

դ) Մարդահամարի տվյալները

Հարկ ենք համարում նշել, որ 2001թ. մարդահամարի արդյունքներով ՀՀ բ-
նակչության ազգային կազմը բնութագրող ցուցանիշները նախատեսվում են
ստանալ փաստաթղթում նշված ժամկետից ավելի ուշ՝ 2003 թվականին:
2002թ. ընթացքում, մասնավորապես սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին նա-
խատեսված է հրապարակել միայն հանրապետության մակարդակով առկա և
մշտական բնակչության թվաքանակները:

2. 4-րդ հոդվածի կապակցությամբ

ա) Օմբուդսմենի մասին օրենքի ընդունումը

Հայաստանի Հանրապետության իշխանությունները խիստ շահագրգռված
են «Օմբուդսմենի մասին» օրենքի ընդունմամբ: Ուղղակի դրա ընդունման հե-
տաձգումը կապված է սահմանադրական բարեփոխումների հետ: Օրենքի նա-
խագիծը ՀՀ Ազգային ժողովի օրակարգում է գտնվում:

Սահմանադրության համապատասխան փոփոխությունները¹³ պետք է
անցկացվեն, որպեսզի ընդունվի «Օմբուդսմենի մասին» օրենք՝ առավել ան-
կախ և վստահելի ինստիտուտ ստեղծելու նպատակով:

բ) Խորրականություն

Հայաստանի իշխանություններն այն կարծիքին չեն, որ առանձին հարցե-
րով բողոքները, որոնք բխում են ազգային փոքրամասնությունների ներկայա-
ցուցիչներից իրենց հիմքում ունեն փոքրամասնությանը պատկանելու դրդա-
պատճառով իրավունքների խախտման ենթատեքստ:

Տարբեր պատճառներով ազգությամբ հայ և եզդի քաղաքացիների միջև
ծագած միջադեպերի շուրջ /որոնք ազգամիջյան բնույթ չեն կրում, կապված
չեն ազգային փոքրամասնությանը պատկանելու կամ չպատկանելու հետ և
տեղի են ունեցել կենցաղային հողի վրա/ ներքին գործերի մարմինների կողմից
կազմվել են նյութեր, առանձին դեպքերում հարուցվել են քրեական գործեր, և
դրանց ընթացք է տրվել օրենքով սահմանված կարգով /Կարծիքի 41 և 97 կե-
տեր/

Հատկանշական է այն, որ խտրականության յուրաքանչյուր դեպք ըստ ար-
ժանվույնս ուշադրության է արժանանում ներքին գործերի մարմինների կող-
մից: ՀՀ Եզդիների Ազգային Միության նախագահ Ազիզ Թառնյանի դիմումնե-
րի շուրջ ՀՀ ՆԳ նախարարության կողմից կատարվել են բազմակողմանի ու-
սումնասիրություններ, կազմվել են համապատասխան նյութեր: Ուսումնասի-
րությունների ընթացքում ՀՀ ՆԳՆ հարցման հիման վրա ստացվել են Ա. Թա-

¹³ Մասնավորապես գործող Սահմանադրությամբ նախատեսված չէ Օմբուդսմենի
ընտրություն Ազգային ժողովի կողմից: Միաժամանակ նախատեսված չէ Օմբուդսմենի կողմից
սահմանադրական դատարան դիմելը ներկա սահմանադրությամբ:

մոյանի կողմից բերված փաստարկների վերաբերյալ Արմավիրի, Կոտայքի, Արարատի մարզպետների մեկնաբանությունները: Վերցվել են բազմաթիվ բացատրություններ ազգությամբ եզդի ՀՀ քաղաքացիներից, որոնց նկատմամբ, համաձայն դիմումների, իրր ցուցաբերվել է խտրականություն:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Ա. Թամոյանի կողմից դիմումներում բերված փաստարկները մեկնաբանվել են միակողմանի:

Բացի այդ, Ա. Թամոյանը դիմել է ՀՀ Վարչապետին և ՀՀ ՆԳ նախարարին, որ Կոտայքի մարզում արտափայրերի հատկացման հարցում եզդիների նկատմամբ ցուցաբերվել է խտրականություն: Դիմումի հիման վրա ներկայումս ՆԳ նախարարության կողմից կատարվում են ուսումնասիրություններ: Արդյունքները կամփոփվեն մոտ ժամանակներս:

3. 5-րդ հոդվածի կապակցությամբ

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքի նախագիծը առաջին ընթերցմամբ ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Օրենքի նախագիծը մասնավորապես նախատեսում է պետական ծրագրով աջակցություն ազգային փոքրամասնությունների մշակույթին:

Հարկ է նշել, որ 2002 թվականի ընթացքում նախորդ տարիների համեմատ պետության կողմից ավելի շատ ֆինանսական աջակցություն է տրվել ազգային փոքրամասնությունների մշակութային գործունեությանը:

Հայաստանի իշխանությունները միջոցներ են հայթայթում ազգային փոքրամասնությունների մշակութային կենտրոն ստեղծելու ուղղությամբ:

4. 6-րդ հոդվածի կապակցությամբ

Կրոնական անհանդուրժողականություն

Հայաստանում գոյություն չունի կրոնական անհանդուրժողականություն: Նման անհանդուրժողականության հնարավորությունը չի բացառվում որևէ պեպրությունում: Հայաստանի իշխանությունները հասպարակամորեն որդեգրել են կրոնական փոքրամասնության նկատմամբ անհանդուրժողականության կանխման և արգելման քաղաքականությունը:

5. 9-րդ հոդվածի կապակցությամբ

Հայաստանի Հանրապետության որևէ օրենքով սահմանափակված չէ ազգային փոքրամասնություններից որևէ մեկի իրավունքը՝ ստեղծելու ամբողջ Հանրապետությունում սփռվող հաճախականությամբ հեռուստաընկերություն, ռադիո, մամուլ և այլ ՋԼՄ տվյալ փոքրամասնության լեզվով կամ իրականացնելու որևէ այլ իրավունք պետական և հասարակական կյանքի ցանկացած բնագավառում: Իսկ պետություն իր հնարավորությունների շրջանակներում համապատասխան ժամաքանակներով հաղորդումներ է նախատեսում ազգային փոքրամասնությունների լեզուներով ինչպես հանրային հեռուստատեսությամբ, այնպես էլ հանրային ռադիոյով, որը չենք կարծում, որ ինչ-որ չափով հակասում է Շրջանակային կոնվենցիայի դրույթներին գուտ այն պատճառով, որ ժամաքանակի տևողությունը կարճ է:

Փոքրամասնությունների լեզվով հեռուստահաղորդումների ծավալի ընդլայնման անհրաժեշտության հետ կապված, հարկ է նշել, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 28-րդ հոդվածը, բացի հանրային հեռուստատեսությամբ՝ շաբաթական մինչև մեկ ժամ եթերային ժամանակ, ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրեր և հաղորդումներ հեռարձակելու համար տրամադրելը, մաև նախատեսում է այնպիսի հաղորդաշարերի և հաղորդումների տեսակների մատուցումը հեռուստալսարանին, որոնք հաշվի են առնում ազգային փոքրամասնությունների, հասարակական տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը:

Միաժամանակ օրենքի 28-րդ հոդվածը նախատեսում է Հանրային հեռուստատեսության և ռադիոյի օրվա եթերաժամի առնվազն երկու երրորդի հատկացումը հայրենական արտադրության հաղորդումներին: Դա լրացուցիչ հնարավորություն է հեռուստատեսության ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումներ հեռարձակելու, քանզի «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում ասվում է, որ հեռուստառադիոհաղորդումների լեզվի վերաբերյալ սահմանափակումները չեն տարածվում ազգային փոքրամասնությունների լեզուներով տրվող հաղորդումների վրա:

Այս առումով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով նախատեսված անցումային դրույթների պահանջները (մինչև 2004թ՝ 55%), ոչ թե էլ ավելի սահմանափակում են ազգային փոքրամասնությունների ներկայության հնարավորությունները հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերությունների եթերում, այլ ընդլայնում են այդ հնարավորությունները, քանզի, ըստ վերը նշված դրույթների, ազգային փոքրամասնությունների լեզվով տրվող կամ նրանց նվիրված, նրանց մասնակցությամբ հաղորդումները հայրենական արտադրության հաղորդումներ են: Հարկ է նշել, որ բացի ազգային փոքրամասնություններին նվիրված հաղորդումների, հանրային հեռուստատեսության «Հայրուր» լրատվական հաղորդումը թողարկվում է մաև ռուսերեն և անգլերեն լեզուներով: Հանրային ռադիոն ունի անենօրյա հաղորդումներ (15 րոպե տևողությամբ) ռուսերեն, վրացերեն, բրդերեն, եզդիերեն, պարսկերեն, արաբերեն, ադրբեջաներեն, թուրքերեն, իսպաներեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով¹⁴:

¹⁴ Այսօր Հայաստանում իրականացվում է CNN, RFI, OPT, HTB, MY3-TB ծրագրերի ամբողջական հեռարձակում (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն) և PEH TB, TBՃ «Դինամիտ ՖՄ», «Հիր ՖՄ», «Մայակ», «BBC» (ռուսերեն), «Եվրոպա +», «Ազատություն ռադիոկայան», «Ռուսսկոյե ռադիո», «Միր», «MEZZO», (ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, իտալերեն), MTV (անգլերեն, ռուսերեն), DW (գերմաներեն) ծրագրերի մասնակի վերահեռարձակում: Իսկ եթերամալուխային հեռուստատեսությամբ վերահեռարձակվում են մաև «HTB+cnopt», Euro Sport, Fox Sports, MTB, Vhi, Animal Planet հեռուստածրագրերը: Հարկ է նշել, որ 2002թ. համեմատողովի կողմից լիցենզավորվել է «Ռադիո Վան» ՍՊԸ-ն, որի երբևի 90%-ը զբաղեցնում են ռուսալեզու ռադիոհաղորդումները, հասցեագրված Հայաստանում բնակվող այլազգի ներկայացուցիչներին (ըստ ՀՌԱՀ ներկայացրած գրության 16 ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների ամուհից)

Վերոնշյալ բազմազանության մեջ գերակայող, անշուշտ, ռուսերեն լեզվով տրվող հաղորդումներն են, սակայն, ինչպես հայտնել են Խորհրդատվական կոմիտեին հենց իրենք՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, ռուսերենը նրանց համար հանդիսանում է ազգամիջյան շփման լեզու:

Ասվածի առումով գտնում ենք, որ ազգային փոքրամասնությունների լեզվին տրամադրված հեռահաղորդակցման ժամանակի առումով օրենսդրական խոչընդոտներ չկան:

Հայաստանին առաջարկվել է ավելի մեծածավալ օժանդակություն ցուցաբերել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնավոր էլեկտրոնային լրատվամիջոցներ ստեղծելու համար: Սակայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է հեռուստատաղիտ հաղորդումների հեռարձակման լիցենզիայի մեկ տեսակ, որը տրվում է իրավաբանական անձին մրցութային կարգով: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող են դառնալ լիցենզիատ, եթե ապահովեն օրենքի տվյալ պահանջը: Նշենք, որ հայտարարված մրցույթներում նման հավակնորդներ ի հայտ չեն եկել:

Բացի դրանից՝ նախատեսվում է ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակեցման վայրերում տեղական հաճախություններով հասցեագրված մրցույթներ հայտարարելը:

Նշենք, որ համաձայն ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թվականի դեկտեմբերի վավերացրած «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիայի» և կցվող ՀՀ հայտարարության, հանրապետությունում փոքրամասնությունների լեզուներ են ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը: Սրանով իսկ ՀՀ օրենսդրությունը արտոնյալ պայմաններ է ստեղծում համեմատաբար մեծաթիվ ազգային համայնքների համար:

6. 12-րդ հոդվածի կապակցությամբ

Ազգային փոքրամասնությունների լեզուներով դպրոցներ բացելու գործը դժվարանում է այն հանգամանքով, որ ազգային փոքրամասնությունները բացարձակ թվով բավականաչափ փոքրաթիվ լինելով հանդերձ Հայաստանում բավականաչափ ցրված են բնակվում, ուստի տեխնիկապես անհնար է դառնում այս կամ այն ազգային փոքրամասնության համար բավարար թվով (թեկուզև շատ փոքր թվով) առանձին դասարանի բացումը:

Ազգային փոքրամասնությունների ազգային լեզվի /ասորերեն, եզդիերեն/ ուսուցումը կարգավորվում է 2002-2003 ուստարվա ուսալլանով, ըստ որի ազգային փոքրամասնություններով համալրված դպրոցներում /դասարաններում/ ռուսաց լեզվին և գրականությանը տրված ժամաքանակից երկուական ժամ՝ 1-4-րդ դասարաններում, մեկական ժամ՝ 5-10-րդ դասարաններում կարող են հատկացնել ազգային լեզվին և գրականությանը, 7-րդ և 8-րդ դասարաններում

րում դպրոցները /դասարանները/ ընդհանուր պատմությանը հատկացվող ժամաքանակից մեկական ժամ կարող են հատկացնել ազգային պատմության ուսումնասիրմանը՝ ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում /Կարծիքի 119 կետ/:

Կարծիքի 65 կետն անհրաժեշտ է որոշակի մեկնաբանման. դպրոցական քննությունները կազմակերպվում են ոչ թե բացառապես հայերենով, այլ ըստ ուսուցման լեզվի: Ռուսերենով ուսուցմամբ դպրոցներում /դասարաններում/ ռուսաց լեզվով, հայկական դպրոցներում՝ հայոց լեզվով:

Բացի դա, կրթության բնագավառում ՀՀ որևէ ազգային փոքրամասնության համար որևէ արգելք չկա, որովհետև ՀՀ այլ քաղաքացիների հետ նրանց հավասար հնարավորություններ է տրված ցանկացած մակարդակի կրթություն ստանալու համար և Շրջանակային կոմիտեիցիան չի պարտավորեցնում, որ որևէ մասնակից պետություն դրա համար ինքը ստեղծի ազգային փոքրամասնությունների լեզուներով բուհեր կամ այլ աստիճանի ուսումնական հաստատություններ: Բայց նման հնարավորություններ ունեն ազգային փոքրամասնություններն իրենք:

Կոմիտեի կողմից արտահայտված այն անհանգստությունը, որ ազգային փոքրամասնությունները փաստացի հնարավորություն չունեն սովորելու իրենց մայրենի լեզուներով, փարատվում է վերը նշված օրենքի նախագծով: Օրինագծում նշվում է, որ ազգային փոքրամասնության ներկայացուցիչների երեխաները հանրակրթական դպրոց են ընդունվում իրենց մայրենի լեզվով դասարաններում, եթե այդպիսիք կան: Դրանց բացակայության պայմաններում միայն վերջիններս ընդունվում են պետական լեզվով ուսուցմամբ դպրոց կամ դասարան (հոդված 13):

Այդ նույն հոդվածում նշվում է նաև, որ «գլխավորապես ազգային փոքրամասնություններով բնակեցված կամ նրանց զգալի թվի առկայություն ունեցող համայնքներում, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից իրենց լեզվով դպրոց (դասարան) կամ մայրենի լեզվի ուսուցման դասընթաց բացելու նախաձեռնություն ցուցաբերելու և, օրենսդրությամբ սահմանված կարգով կրթության գործի կառավարման պետական լիազորված մարմնի դիմելու դեպքում, պետությունը պարտավոր է այդ համայնքներին ցուցաբերել ֆինանսական և գիտամեթոդական օգնություն՝ հանրակրթական դպրոցների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմատիվների սահմաններում»: Ինչ վերաբերվում է բուհական ընդունելության քննություններին, ապա հայերենով դրանց կազմակերպումը խտրականության դրսևորում է հետևյալ առումներով՝ դիմորդների 98-99 % -ը հայեր են, համապատասխան ազգային լեզուներով պրոֆեսորադասախոսական կադրեր չկան այդպիսի քննություններ կազմակերպելու համար: Հայաստանում գործում են նաև մի շարք միջազգային և օտարերկրյա ԲՈՒՀ-եր, որտեղ և ընդունելությունը, և ուսուցումը իրականացվում է ոչ հայերենով: Ցանկության դեպքում ազ-

գային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող են ԲՈՒՀ-ական կրթության իրենց բացը լրացնել այդ ԲՈՒՀ-երում, մանավանդ, որ ազգային փոքրամասնությունների զգալի մասը հատուկ հակվածություն ունեն ռուսերենի նկատմամբ:

Այդ առումով համաձայն չենք Կոմիտեի արած այն դիտողության հետ, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից շատերը խուսափում են հայերեն լեզվով սովորելուց՝ այդ լեզվով դասագրքեր չլինելու պատճառով: Այդ պնդումը չի համապատասխանում իրականությանը:

9. 15-րդ հոդվածի կապակցությամբ

Կոմիտեի այն դիտողությունը, որ ազգային փոքրամասնությունները ներկայացված չեն խորհրդարանում կամ որևէ այլ կառավարական մարմնում ևս ընդունելի չէ, որովհետև այն ոչ թե հայերի կողմից իրականացվող խտրական քաղաքականության, այլ օբյեկտիվ իրողության հետևանք է:

Ինչպես նշել ենք, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները ազգային փոքրամասնությունների համար սահմանել են բացարձակապես հավասար քաղաքական իրավունքներ, այդ թվում՝ ընտրելու և ընտրվելու:

Հանրապետության օրենսդիր մարմնում ներկայացուցչություն չունենալը ևս կապված է ազգային փոքրամասնությունների խիստ փոքրաթվության և ցրվածության հետ: Այս իրողության պայմաններում վերջիններիս քվտայով տեղեր հատկացնելը, ենթադրում է նրանց համար ընտրության հատուկ իրավունքի և մեխանիզմների սահմանում, որի դեպքում ռոմահարվում են բնիկ մեծամասնության շահերը:

Գործադիր իշխանության և այլ կառավարական մարմիններում ևս անպատակահարմար է քվտայի կիրառումը, որովհետև վերջիններիս ձևավորման հիմքում դրված է պրոֆեսիոնալիզմի սկզբունքը և ոչ ոք չի խանգարում ազգային փոքրամասնության ներկայացուցիչն համապատասխան մասնագիտական որակներ ունենալով զբաղեցնել այս կամ այն պաշտոնը: Մանավանդ, որ ներկայումս Հայաստանում սկսվել է ներդրվել քաղաքացիական ծառայության համակարգը, որով առավել ևս օբյեկտիվացվում է պետական ծառայության անցնելու գործընթացը: